Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4Ln
1659

1999

ՊԱՏՄԱՆԱՍՏԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԿԱԹՈՂԻԿԷ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅՑ

Ի ՊԱՏԱՍԽԱՆԻ

ԸՆԴԴԷՄ Ս. ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼԱՊԵՏԻ

ԱՆՈՒԱՆԵԱԼ ԳՐՈՑՆ

ՑՕՐԻՆԵԱՑ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՄԱՆ

ՄԻԱԲԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՉՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՀԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՌՃԴ — 1854

ԼՒ ՔՐԻՍՏՈՍ ԳԼՈՒԽ Է ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԵՓԵՍ. Ե. 23.

ԼՒ ՆԱ (ՔՐԻՍՏՈՍ) Է ԳԼՈՒԽ ՄԱՐՄՆՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԿՈՂՈՍ. Ա. 18.

41659-ԱՍ

ՀՖ 1664

ՅԱԹԱՂԱԲԱՆ

Աղբիւրի պղտորութենէն՝ մոքէ չանցած պարզութիւն մը՝ յառաջ կու գայ։ Ամպոց պղտորութիւնը՝ արեգական կրկին լուսոյ պարզութիւնը կը գուշակէ. որ փոքր մի յառաջ իւր պայծառ երեսը կը թագուցանէր հաստատութեան երկնագաւառին մէջ կուտակ կուտակ ամպոց որոտմունքէն, կարկտաբեր հեղեղներէն և հրացայտ շանթացայտ կայծականց փայլատակումներէն։

Բնական է, որ այսպիսի բնական պատահմունքներէ բնական ալ այս հետևմունքներս կ'ելլեն։

Աղբիւրը պղտորողը նոր պարզութիւն ջրոյ կու տայ. բայց ցաւալին այն է, որ պղտորողը պարզ ջուր չի գտներ. ինքը կը գրկուի, այլք անկէ յառաջացած պարզ ջուրը կը վայելեն։

Ո՜հ, Հռոմ առանց Հռոմայ, ինչպէս մէկն ասաց. — Այս ամէն ասածներս քեզ վերայ կը տեսնուի, քոյ քրիստոնէութեանդ ամէն դարերու մէջ ի՞նչ որոտմունքով, ի՞նչ կայծականց ու կարկտի ըսպառնալիքով աշխարհ չթնդացուցիր. բայց դժբաղդաբար ամէն մէկ հարուածովդ մէկ մէկ հատուած կորսնցուցիր քու ծոցէդ։ քո ահեղ որոտմունքներդ աշխարհ կը սասանեցընէր։ բայց փոխանակ սասանու-

թեան՝ անսասան մնաց. միայն՝ քո հաւատոյ որդիքը քո բռնութենէդ ետ կեցան և քո իշխանական լուծդ մերժեցին։

Քրիստոսական եկեղեցին մինչդեռ խաղաղութեան դաշտի ըսսակիզն արօտի մէջն էր Քրիստոսի հովուապետական գաւազանին տակը, և ամէնը Քրիստոսի մարմնոյ միութեան սիրոյ փարախին մէջը կը մակաղէր, դու անոր երկնային խաղաղութիւնը վրդովեցիր. և անոր մարմնոյ միութիւնը 'ի բաղում անդամս յօշոտեցիր. և որ անդամդ էիր Քրիստոսի այս բարոյական մարմնոյն, "Բաղումքս մի մարմին եմք Քրիստոսի", ինչպէս Պաւղոսն կը վկայէ, ընդվզեցիր քո պաշտօնէդ, գլխութեան գահը փնտռելու այն բազում անդամոց մէջ. ուստի փոխանակ գլխութեան՝ մարմինն ալ այսպէս քայքայեցիր. ոտքի տակ առիր առաքելական պատուէրը վասն գահասիրութեանդ։ "Մի է գլուխն ձեր Քրիստոս" — Ահա քրիստոսական եկեղեցւոյ այս միութեան աղբիւրը պղտորելէդ՝ ոչպիսի մրուր դառնութեան բղխեցիր. քո ծարաւդ չզովացընելէ ետքը՝ քո եկեղեցւոյ անդամներն ալ ուրիշ եկեղեցւոյ մը աղբիւրը դիմեցին. և պարզութիւն այն տեղ կը վայելեն։

Ընդհանրական ուղղափառ եկեղեցին Քրիստոսի՝ անոր զինուորեալ եկեղեցին ըլլալով՝ զմի Քրիստոս կը դաւանի, որով և զմի հաւատ. և այս հաւատոյ միութիւնը, որ կը միացընէ ամէն քրիստոնեայ աղգերը, չեն կրնար քակտել ոչ լեզուոյն զանազանութիւնը, և ոչ իրարմէ ազգական տարբերութիւնը, և ոչ նաև տեղւոյն իրարմէ հեռաւորութիւնը. ուստի ըստ այսմ թէ և ընդհանրական է ըստ տեղւոյն, այլ մի է ըստ հաւատոյն։

Այս միութեան մէջ կը մտնեն մանաւոր ուղղափառ եկեղեցիները, այսինքն Յոյնը, Հռոմայեցին, Հայը, Ասորին, Անգլիացին, Գաղղիացին, Ռուսը, Բրուշը և այլ անթիւ ազգեր. որոնք ամէնը մէկ տեղ՝ մէկ ընդհանուր եկեղեցի կը կազմեն Քրիստոսի. զմի հաւատ. և զմի հաւատոյ հիմն և գլուխ զՔրիստոս կը ճանչնան. "Հիմն այլ՝ ոչ ոք կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս". (Ա Կորն. Գ. 11):

Միայն Հռոմայ եկեղեցին այն միութենէն քակտուեցաւ, որ մանաւոր եկեղեցեաց հաւասարութեանը հետ այս միութեան մէջն իբրև անդամ մարմնոյ ընդհանրական եկեղեցւոյ, և հակառակ աստուածային հրամանաց իւր հաւասարիչման աթոռը կ'ուզէ այսօր անոնցմէ վեր դնել. և անդամը մարմնոյն գլուխ ըլլալով՝ իւր հաւասարիչման անդամակցացը հրամայել. անոնց կառավարութեանը մէջ՝ ըլլալ "Ընդհանուր իրաւաբանութեան, կեդրոն միութեան":

Իսկ այս ընդհանրութիւնը թէ որ մանաւորեմք, ամէն մանաւորաց գլուխ՝ իրաքանչիւր ազգի եկեղեցւոյ գլուխը կ'ըլլայ. և իւր եկեղեցւոյն հիմն և աղբիւր իրաւաբանութեան, զոր Հռոմայ եկեղեցւոյ գլուխը ամենէն կ'ուզէ յափշտակել, բոլոր մասնաւորները մէկ ընդհանրութիւն կազմել, և ինքը անոր գլուխ նստիլ առանց անոր հետ հաւասարութիւն պահելու:

Այսպէս եղաւ Հռոմայ վիճակը, երբոր ընդհանրական եկեղեցւոյ միութիւ աղբիւրը պղտորել սկսաւ. բայց բանը իրեն կարծեացը հակառակ գնաց. վասն զի ոչ թէ ընդհանրական եկեղեցւոյ վերայ իրաւաբանութիւն կրցաւ բանեցընել, այլև իւր մանաւոր

եկեղեցին՝ և նոյն պղտորութեան մէջ ձգելով, ՝ա՝նոր մրրիկներուն մէջ մեծ հատուած մը կորսնցուց. և փոխանակ՝ իրաւաբանութիւն գտնելու՝ անոր վերայ ունեցած իրաւունքէն ևս զրկուեցաւ. և հարկադրուեցաւ անոր առանձին եկեղեցի ըլլալու իրաւունքը տալ։

Եւ արդարև իրեն տասնին պէս[1], մինչդեռ իրեն այս հատուածը "Ապագային մէջ փակուած էր", ա՝նոր սերմը ինքնիրեն բուսոյց, և իրաւունք փնտռելովը՝ անոր գոյութիւն ու որոշուած կերպարանք տուաւ։

Սուրբ Գրոց մէջևս յայտնի կ'երևի առաքելոց ժամանակը, որ հաւատքը բռնութիւն չվերցներ. իսկ Հռոմ երբոր ընդհանրական եկեղեցւոյ ուղղափառ հաւատքէն արտաքոյ՝ հոգւոց փրկութիւնը երկրիս վերայ իւր ներողութեան թղթերովը ապահովցուց, և անով մարդկային ազգը, կամ մասնաւորապէս իւր եկեղեցին գրեթէ մեղքի կը հրաւիրէր, զոր ո՛չ Քրիստոս և ո՛չ Քրիստոսի աշակերտք ըրին. ընդհանրական եկեղեցին՝ իւր բռնած հաւատքին վերայ բարոյական բռնութի՞ համարեց Հռոմայ կողմանէ։

Այս եղաւ պատճառ, որ իւր ծոցէն ելաւ Լուտեր մը. և այնքան արիւնհեղութեամբ 'ի բաց կտրեց Հռոմայ եկեղեցիէն այն մեծ հատուածը, որ այս օրուան օրս այն ահագին "Անգլիական և Գերմանական մարմինը կը կազմէ"։

Ահա՛ աղետալի հետևանքը, զոր Հռոմայ եկեղեցին ծնաւ հաւատոյ աղբիւրը պղտորելով։

Այս պղտորութեան մրուրը դեռ ջարդած, ՝ուրիշ մէկ նոր պղտորութեան ալ ձեռք զարկած է այսօր Հռոմ ընդհանուր եկեղեցւոյ ուղղափառ հա-

---

1 Աթոռ Ս. Պետրոսի. եր. 24։

ռատքին մէջ. որով և մոռադիր է ուրիշ եկեղեցիէ հատուած մը յափշտակել իրեն կորանցուցածին տեղ. և արդարև, առաջին փորձին մէջ որ վնասուեցաւ, հիմա երկրորդ փորձովը օգուտ կ'ուզէ քաղել. որպէս զի՝ վնասն ու օգուտը հաւասար ըլլայ։

Ահա այժմեան երկրորդ փորձը, որ Քրիստոսի ընդհանրական եկեղեցւոյ մէջ՝ միւս աղդաց հետ իւր հաւասարութիւնը մոռնալով, զՊետրոս առաքեալը ջանք կ'ընէ ամէն մասնաւոր եկեղեցեաց գլուխ ցուցընել. որով և ինքը ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի հիմը ըլլալ, և ամենուն աղբիւր իրաւաբանութեան. այսինքն՝ ամենուն իրաւունքը Հռովմը տեսնել, ամէնքը Հռովմէն կախում ունենալ, և միանգամայն ամէնքը սխալական, Հռովմը միայն անսխալ, ինչպէս բովանդակ Աթոռ Ս. Պետրոսի ըսուած գիրքը ձայն կու տայ, թէ Հռովմն է Աթոռ Ս. Պետրոսի, հիմն եկեղեցւոյ, աղբիւր իրաւաբանութեան, կեդրոն միութեան, և այլն։

Սոր պատասխանին է մեր այս ներկայ գրուածքը. որու մէջ կը հաստատենք Հայոց եկեղեցւոյ քրիստոնէական հաւատոյ անդրանկութիւնը՝ մասնաւոր եկեղեցեաց մէջ. Հայոց եկեղեցւոյ ուղղափառական մասն ըլլալը Քրիստոսի ընդհանուր եկեղեցւոյն, և այս ընդհանրութեանը մէջ՝ իրեն գլուխ կը ճանչնայ զՔրիստոս. իսկ իրեն մասնաւորութեանը մէջ՝ զԹադէոս և զԲարդուղիմէոս առաքեալները, և այլն. Հայոց եկեղեցւոյ դէմ՝ պապականաց զրպարտութիւնը. անոր առաքելական յաջորդութիւնը մինչև Ս. Գրիգոր Լուսաւորիչ, և այլն. Հայոց եկեղեցւոյ զՍ. Գրիգոր Լուսաւորիչ իրեն ընդհանրական գլուխ ճանչնալը. անոր Քրիստոսի և Առաքելական գահին

փոխանորդութիւնը. և անոր անկախութիւնը 'ի բանս հաւատոյ. և հաւասարիշխան եկեղեցւոյ կառավարութիւնը. և վերջապէս՝ Ս. Պետրոսի թարգմանչին ըրած յաւելուածին միանգամայն սուտ և շինծու ըլլալը։

Եւ ոչ այսչափ միայն, այլև կը հաստատենք, թէ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Կաթուղիկոսաց յաջորդութիւնը Քրիստոսի Առաքեալներէն կ'ելնէ. որոնք Քրիստոսի փոխանորդութեամբ ըզՔրիստոսի եկեղեցին անկախ և հաւասարիշխանութեամբ միւս քրիստոնէից եկեղեցեաց, կառավարեցին շարունակ անընդհատութեամբ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներէն մինչև Լուսաւորիչ. կը հաստատենք և ևս, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչն է՝ իւր առաքելական գահին փոխանորդ՝ ընդհանրական հովուապետ Հայաստանեայց. ինքն միայն կառավարիչ, և Հայոց քրիստոսական մասնաւոր եկեղեցւոյն գլուխ, և իւր յաջորդները նոյն անկախութեամբ և նոյն հաւասարիշխանութեամբ հիմն եկեղեցւոյ, աղբիւր իրաւաբանութեան, կեդրոն միութեան։

Ըստ որոց՝ թէ որ արդարև Քրիստոսի ընդհանուր եկեղեցւոյ մէջ հաւասարութիւն պէտք էր պահելու, ինչպէս այսօրուան օրս Հռոմը կ'ընէ, այդ իրաւունքը աւելի Հայոց եկեղեցին ունի այսու ամենայն արդար իրաւամբք։

Ս. Պետրոսի գրքին դէմ գրելու՝ մեզի պատճառ եղաւ աւելի այս դարուս՝ Մխիթարեանց երկակի ուխտին խարդախ ընթացքը. որովք հարկը պահանջած ատեն, երբ անձնական շահը կը ստիպէ զիրենք, բանի մը ճշմարտութիւնը կ'ընդունին, կը խոստովանին ու կը տպեն. իսկ երբոր նոյն ճշմարտու-

թիւնը բանադատութեան տակ կ'ինայ՝, կը դառնան մարդահաճութեան համար կ'ուրանան, կը նզովեն, ու կը հերքեն, և դարձեալ ամօթ չեն համարիր որ մէկը զմիւսին գործքը կը դատապարտէ, և միւսը ըզ-մէկին ճշմարտութիւնը կը ստէ։ — Այս ամէնը ներկայ գործքիս մէջ յառաջ կը բերուին։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԿԱԹՈՂԻԿԷ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

Հայոց Եկեղեցոյ Քրիստոնէական անդրանիկութիւնը մասնաւոր եկեղեցեաց մէջ։

Մեծ պատճառ դտած են պապին արքանեակները՝ Հայաստանեայց եկեղեցւոյ քրիստոնէական հաւատոյ անդրանկութիւնը Հռովմայ եկեղեցւոյն սեպհականելու՝ մեր միակ զանցառութենէն, որ ետքի դարերէն մտած է մեր մէջը, և այս է զանցառութիւնն՝ որ մեր եկեղեցւոյ Լուսաւորչաց շարակարգութիւնը՝ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներէն չեմք յառաջ բերած կաթուղիկոսաց անուններուն հետ եկեղեցական գրոց մէջ, որոնք առաքելական փոխանորդութեամբ մէկմէկու յաջորդելով և մէկմէկ եպիսկոպոս ձեռնադրուելով, նոյն առաքելական իշխանութիւնը՝ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներէն անընդհատ շարունակութեամբ մինչև Գրիգոր Լուսաւորիչ բերին։

Այսով՝ մեր եկեղեցին պակասաւոր ցուցընելու կը ջանան, և կը քարոզեն թէ՝ «Միայն Հռոմայ եկեղեցին է առաքելական. վասն զի՝ անիկայ պահած է եպիսկոպոսաց յաջորդութիւնը Պետրոսէն մինչ ներկայ պապը. բայց Հայոց եկեղեցւոյ մէջ թէպէտ և Թադէոս առաքեալէն սկսաւ, սակայն անոր յաջորդութիւնը ընդհատեցաւ մինչև Գրիգոր Լուսաւորիչ գրեթէ երեք հարիւր տարիի չափ. այսքան միջոցիս մէջ թէ որո՞նք էին եպիսկոպոսք կամ կաթուղիկոսք, պատմագիրները, կ'ըսեն, չեն յիշատակեր»։

Թէ որ ճշմարտութեամբ ըսելու ըլլային առ խօսքերը մեր եկեղեցւոյ անդրանկութեան նախանձորդները, պիտի աւելի գտնէին նոյն իսկ պատմագրութեանց մէջ Թադէոս առաքելոյն անընդհատ յաջորդութիւնը Հայոց եկեղեցւոյ մէջ, քան թէ Պետրոսի գլխաւորութիւնը Հռոմայ եկեղեցւոյն վերայ։

Այնք ըսողները Մխիթարեան պապականները ըլլալով, նոյն իսկ մեր եկեղեցւոյ առաքելական յաջորդութիւնը և ս յառաջ բերողները անոնք են. որով և կ'երևի թէ՝ Հայոց եկեղեցւոյ սեպհականութիւնը ստութեամբ կ'ուզեն Հռոմայ սեպհականել, և անոր ստութիւն տալուվնին՝ հաւատոյ մէջ մեր եկեղեցւոյ ունեցած բարձրութիւնն ու անդրանկութիւնը աւելի կը հաստատեն։

Մեք մեր եկեղեցւոյ Քրիստոսի փոխանորդները Թադէոս առաքեալէն մինչև Գրիգոր Լուսաւորիչ ճիշդ ժամանակագրութեամբ գրած ըլլալով գործոյս երրորդ գլխոյն մէջ, ասոր սկիզբն կ'ընեմք Հայոց եկեղեցւոյ քրիստոսական հաւատոյ անդրանկութիւնը համառօտել։ Մաղաքիայի գրած Քրիստոսի Դաստառակի պատմութենէն, որ իրեն պապականութէն և ս ճշմարտութենէն յաղթուելով, իրենց միաբանութեանց այս վերջին ստութեանց դէմ՝ վկայ կը հանդիսանայ Հայոց եկեղեցւոյ քրիստոնէական անդրան-

կութեանը, որ և Հ. Պալճեանին միաբանակից՝ Վ. Էն-նայի Մխիթարեան ուխտէն մէկն է. որով և կը հաստատուի՝ բաց յազգային մատենագրաց, նոյն իսկ պապականաց գրուածքներէն, թէ Հայոց եկեղեցին Հռոմայ եկեղեցիէն յառաջ քրիստոնէական հաւատոյ վերայ հիմնուեցաւ. թէ՝ Հայոց ազգը Հռոմայեցւոցմէ յառաջ Աւետարանին քարոզութիւնն ընդունեց. թէ՝ Հայոց եկեղեցւոյ առաքելական յաջորդութիւնը 'ի Թադէոսէ և 'ի Բարդուղիմէոսէ անընդհատ մինչև Գրիգոր Լուսաւորիչ տևեց. թէ՝ Հռոմայ եկեղեցւոյ, եղաւ ժամանակ, որ ընդհատեցաւ եպիսկոպոսաց յաջորդութիւնը. երբ որ Հայոց եկեղեցւոյ եպիսկոպոսաց յաջորդութիւնն ու ձեռնադրութիւնը շարունակ կ'ելնէր Աբրահամեաց անտի, որպէս ստորև։

Աբգար Հայոց Թագաւոր Արշամայ որդին, իւր թագաւորութեան երեսուն և չորս տարին, երբ որ Պարսկաստան կ'երթայ Արտաշէս թագաւորի և անոր եղբարց մէջ թագաւորութեան համար ծագած վէճը խաղաղացընելու ազգականութեան իրաւամբք, վրան ծանր հիւանդութիւն մը կու գայ. որով բոլոր մարմինը բորոտութեան մէջ կ'ինայ, անոր համար շուտով Նդեսիա իւր աթոռը կը դառնայ[1]։

Աբգարու թշնամիները՝ Հերոդէս[2] Անթիպաս չորրորդապետն ու իրեն եղբարքը Փիլիպպոս և Լուսանիաս, Պղատոսն ալ մէկտեղ, անոր Պարսկաստան գնալը առիթ առնելով, վրան զրպարտութիւններ հնարեցին, իբր թէ Պարսկաստան գնացած ատենը, հոն զօրք ժողվելու միտք ունեցած է եղեր, Հռոմայեցւոցմէ ապստամբելու. ուստի շուտ մը ամբաս-

---

1 Դատաստակին պատմիչը Խորենացիէն առնելով, կ'ըսէ. «Ան ատենները աս ամէն կողմերս Հայոց թագին ու գաւազանին կը վերաբերէին» (Ս. Դատաստակ. երես, 1։ Խոր. գիրք բ. իբ։)

2 Ա՛ Հերոդէսն էր, որ զՅովհաննէս Մկրտիչը գլխատեց։

տանութիւն գրեցին "անկէ՝ Տիբերիոս" կայսեր ու Հռոմայ ծերակուտին։

Այս ամբաստանութիւնը եղաւ պատճառ որ ստիպեցին զԹագաւորը՝ Հռոմայեցւոց արտաքոյ կարգի դեսպաններ խրկել զինքը արդարացընելու՝ կայսեր ու ծերակուտին առջև. և այս եղաւ իւր դարձին պատճառը։

Աբգարու դեսպանները, որոնք էին՝ Մարեհաբ Աղձնեաց բդեշխը, Շամշագրամ Ապահունեաց ցեղին նահապետը և Անանէ իւր պալատին հաւատարիմը, կ'երթան Սելևթերոպոլիս[1] քաղաքը, Մարինոս կուսակալը կը գտնեն, ու Աբգարէն յուղարկուած՝ Աբտաշէսի և անոր եղբարց մէջ Աբգարու երաշխաւորութեամբը եղած դաշանց պատճէնը կու տան անոր, և կ'աղաչեն որ Աբգարու համար կայսեր միջնորդութիւն ընէ։

Այսոնք դարձած ատեննին՝ կ'անցնին Երուսաղէմ զԲրիտոս տեսնելու. որուն հրաշքները արդէն ամէն աշխարհ տարածուելով, իրենց ականջը ևս հասած էր. երբ որ այն ամէն լսուածները աչքով ալ տեսան, եկան ամէն բան Աբգարու պատմեցին։ Այս եղաւ Բրիտոսի 32 թուականին։

Աբգար Բրիտոսի ըրած հրաշքները ականատեսներէն լսելով, արտանց հաւատաց զԲրիտոս Որդի Աստուծոյ, և ըսաւ. "Անկարելի է որ աս հրաշքներս մարդու գործք ըլլայ, հապա անոնք ամէնն ալ Աստուծոյ բան են. որովհետև մարդս երբէք չկրնար մեռելները կենդանացընել, բայց միայն Աստուած"։

Իրեն մարմինն ալ եօթը տարի է 'ի վեր ըստորուտ հիւանդութեան մէջ գրեթէ փտած էր. ու երբէք բժշկութիւն չէր գտներ, ուստի հաստատուն հաւատով հաւատաց, թէ Բրիտոս Աստուած է անշուշտ

---

1 Սելևթերոպոլիս քաղաքը՝ Փիւնիկէի, Պաղեստինայ, Ասորւոյ ու Միջագետաց երկիրներուն մէջն է։

և անկէ կ'ըլլայ իրեն բժշկութիւն։ վասն որոյ և նամակ մը գրեց Քրիստոսի ու խրկեց իրեն, աղաչելով, որ գայ իր մարմինը բժշկէ։

Թուղթը տանողները հասան Երուսաղէմ Քրիստոսի նոյն քաղաքը մտած օրը։ Իրենք չկրնալով անձամբ Քրիստոսի տալ Թուղթը, Փիլիպպոս առաքելոյն խօսեցան։ Փիլիպպոսն ալ Անդրէասին խօսելով՝ Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս (Յովհ. ժբ. 20–23)։ Ուստի Յիսուս Թուղթը առնելով, ուրախութիւն ցոյց տուաւ իրեն վերայ։ որ ապա Թովմայ առաքելոյն հրամայեց Աբգարու Թղթին պատասխանը գրել։ որու մէջ խոստացաւ որ իր աշակերտներէն մէկը յուղարկէ իր համբարձմանէն ետքը անոր ցաւը բժշկելու։

Դեսպանները շուտով դարձան յԵդեսիա։ և Քրիստոսի Տեառն մերոյ նամակին հետ տուին նաև Քրիստոսի կենդանագիր պատկերը դաստառակի վերայ առած։ որովհետև կ'ըսուի թէ, Աբգար սուրհանդակներուն հետ պատկերահան ալ յուղարկած էր[1], որ եթէ Քրիստոս Տէրն մեր չգայ, անոր պատկերը առնուն և իրեն բերեն։ որպէսզի՝ անոր պատկերը տեսնելով, իր սրտին բաղձանքը առնու, և իմանայ՝ թէ ի՞նչպէս մարդ է Աստուծոյ Որդին, որ այնպիսի մեծամեծ հրաշքներ կ'ընէ։

Ահա Հայոց ազգին քրիստոնէութեան սկիզբը։ ահա և Հայաստանեայց եկեղեցւոյ քրիստոնէական անդրանկութիւնը։ որ դեռ Քրիստոս Տէրն մեր իւր նոր օրինաց եկեղեցին յընդհանուրս չհիմնած աշխարհիս վերայ, Հայոց ազգիս քրիստոնէութեան հիմը դրաւ իւր ջերջերանքէն յառաջ Աբգար Թագաւորի հաւատոց վերայ։

---

1 Մեր եկեղեցական գրքերը կը վկայեն, թէ պատկերահանը՝ Յովհաննէս անուն մէկն էր, ինչպէս Յոյսմաւուրքը։ իսկ Յունաց պատմիչները կ'ըսեն որ, պատկերահանը՝ նոյն իսկ Ինանէն էր, զոր դեսպանաց հետ յատուկ այս պաշտօնիս համար խրկած էր Աբգար։

Եթէ Առաքելոց հաւատոյ վերայ Քրիստոս իւր եկեղեցին խոստացաւ շինել, իւր յարութենէն ետքը, ահաւասիկ յարութենէն յառաջ Աբգարու հաւատքին վերայ Հայաստանեայց քրիստոնական եկեղեցին շինեց։

Արդ՝ ո՞ւր է Հռոմը, զոր պապերը ամէն ազգերու քրիստոնէութենէն յառաջ կը նախադասեն. արդարև իրենց ըսածին պէս՝ "Պապային մէջ փակուած էր" (Թուղ Ս. Պետրոսի, երես 24)։

Այո՛ փակուած էր ապագային մէջ. և բոլոր աշխարհ բոլոր ազգերը մինչեւ հեթանոսութեան ծովու ալեաց մէջ կը ծփային, Հայոց ազգը միայն այն ալիքներէն ազատուած՝ խաղաղութեամբ քրիստոնէութեան նաւահանգիստը հասաւ իրեն հմուտ նաւավարին ձեռքովը. և կռապաշտութեան խաւարէն ելլելով, աստուածպաշտութեան լոյսը կ'առաջնորդէ. որով և Հռոմէն յառաջ քրիստոնէութեամբ ծաղկեցաւ բոլոր Հայաստան. և ոչ այսչափ միայն, այլ և Հայաստանեայց եկեղեցւոյ անդրանկութեան պատճառը Աբգար, կռապաշտ թագաւորներուն մէջ և ս անդրանիկ թագաւորն եղաւ, Քրիստոսի Տեառն մերոյ խաչելութենէն յառաջ, Տիբերիոս կայսեր թուղթ գրելով Քրիստոսի վերայոք, որ յորդորէ բոլոր Հռոմը Քրիստոսի աստուածութիւնը ճանչնալու և իբրև զԱստուած պաշտելու. ինչպէս ցոյց կուտայ մեր Խորենացին (բ. 30), Աբգար թագաւորի Ղերուբնայ անուն դիւանագրէն առնելով։

Այս այն ստուգապատում մատենագիրն է, որ Հայոց ազգին ստուգագիր պատմութիւնը աշխարհի ընծայելէն և ազգին գոյութիւն տալէն ետքը, Մխիթարեան պապականները իրենց բաժանման կետէն մինչ այս օրուան օրս՝ որքան մատենագրութիւն ունին ազգիս գրականութեան մէջ, գրեթէ ամէնն ալ անոր միակ վկայութեամբն են ապահովցուցած. ապա

ինչպէս՞ կ՚ըլլայ Հայոց եկեղեցւոյ քրիստոնէական անդրանկութիւնը՝ Աբգարու գիւանագրէն Մովսէս Խորենացին մատենագրած, երբ այսօր դարձեալ նոյն Մխիթարեան ուխտի պապական արքանեակները՝ Հռոմայ եկեղեցին անդրանիկ քարոզէն քրիստոնէութեան մէջ. և Հայոց եկեղեցին որպէս զի ստորին և պակասաւոր ցուցընեն, անոր քրիստոնէութիւնը Գրիգոր Լուսաւորչէն հիմնաւորեն, և անկէ մեր եկեղեցւոյ առաքելական յաջորդութիւնը թուեն։

Աբգար Թագաւորին քրիստոնեայ ըլլալը և Տիբերիոսին ևս յորդոր գրելը, որ Հռոմայեցիք ալ դառնան, Հռոմէական եկեղեցւոյ արքանեակները այս օրուան օրս կը ստեն, հապա քանի՞ ստութեամբ չեն լցուած անոնց առաւելապէս այն գրուածքները, որոնք Մովսէս Խորենացւոյ վկայութեանը չեն վերաբերիր։ Այս պարագայիս մէջ մէկ օգուտ միայն ունին, որոնք միւսանգամ թէ ուղիղ ևս խօսին, հաւատացող չըլլար։

Երբ որ Քրիստոս Տէրն մեր երկինք համբարձաւ, Թովմայ առաքեալը, ինչպէս որ Քրիստոս խոստացած էր Աբգարու, զԹադէոս առաքեալը Եդեսիա յուղարկեց. որպէս զի Աբգար Թագաւորը բժշկէ, և ըստ հրամանի Տեառն Աբետարանը քարոզէ հոն։

Թադէոս առաքեալը կու գայ Եդեսիա, ու կ՚ինջնէ Տուբեա անունով իշխանի մը տունը, որ Նագրատուներաց ցեղէն էր։ Այս միջոցիս Թադէոսի գալը երբոր բոլոր քաղաքը տարածուեցաւ, Աբգար իմանալով որ այս այն մարդը պիտի ըլլայ, որ Քրիստոս իրեն խոստացած էր, շուտով զինքը կանչելտուաւ։

Առաքեալը Աբգարու քովը կը մտնէ, ու ձեռքը վրան դնելով՝ կը բժշկէ. ապա անոր հրամանաւը քաղաքին մէջ սկսաւ քարոզել. և որքան հիւանդ ու տկարներ կային՝ բոլորը առողջացուց, և զամէնքը ճշմարիտ հաւատքի դարձուց։ Աբգար ու բովանդակ

քաղաքը (դարձան) մկրտուեցան, մեհեանները գո-
ցուեցան, և որչափ որ խորաններու և սիւներու վե-
րայ պատկերներ կային՝ ծածկեցին, անոնց փոխարէն՝
քրիստոնէութեան հաւատոյ առաջին եկեղեցին շի-
նեց Ս. Ղազարը, որ յետոյ Ս. Աստուածածնայ
անունովը կոչուեցաւ. և օր ըստ օրէ հաւատացեալ-
ներու թիւը կը բազմանար։ Այս ժամանակը Ս. Ղ-
ազարը՝ Աբգէ անուն թագաւորին խոյրարարն ալ
մկրտեց և իրեն տեղ այս նորադարձ քրիստոսական
եկեղեցին հովուելու՝ եպիսկոպոս ձեռնադրեց, ու
թողուց իրեն տեղը՝ բոլոր հաւատացելոց հօտը անոր
յանձնելով. և ինքը Աբգարու հրովարտակաւը Շա-
ւարշան քաղաքը քարոզութեան գնաց Անատրուկ
թագաւորին քովը, զոր որ Աբգար իր տէրութեան
կառավարիչ ու զօրաց հրամանատար դրած էր։

Ահա՛ ասոնք բոլոր Հայաստան քրիստոնէութիւնը
տարածուեցաւ, ինչպէս կարդաւ եպիսկոպոսաց յա-
ջորդութիւնն ալ ցոյց կու տայ երրորդ գլխոյն մէջ.
որոնք առաքելական փոխանորդութեամբ մէկ մէկու
յաջորդեցին ինչուան Ս. Գրիգոր Լուսաւորիչ։

Եւ ահա՛ այս ժամանակներն էր, որ Աբգար թա-
գաւորը քրիստոնէական հաւատով լուսաւորուած,
Տիբերիոս կայսեր թուղթ գրեց քրիստոնէութիւնը
ընդունելու, ինչպէս վերը հանառօտիւ յիշեցինք.
որուն մէջ կը յորդորէ՝ որ ինքն ալ հաւատայ Քրիստոսի,
և հրամայէ՝ որ բոլոր Հռոմ և ս պաշտեն զՔրիս-
տոս. ուստի պարզապէս կ'երևի, թէ մինչև այն ժա-
մանակը Հռոմ դեռ կռապաշտութեան մէջ էր, և
զՔրիստոս չէին ճանչցած. թէ և քաղաքական կառա-
վարութիւնը 'ի համբաւոյ լսած էր անոր համար.
ինչպէս և կայսեր՝ Աբգարու թղթին պատասխանին
մէջ գրուած է. "Թէպէտ, կ'ըսէ, 'ի բազմաց վեր
լուեալ զայդ յառաջագոյն . . . . թէ Ստուած է.
վասն որոյ և ես կամեցայ առնել զայդ յառաջագոյն

զոր գու խորհեցար։ այլ քանզի սովորութիւն է հռոմայեցւոց, աստուած 'ի հրամանէ թագաւորի միայնոյ ոչ հաստատել, մինչև փորձեալ քննեսցի 'ի սինկղիտոսէն։ վասն որոյ և իմ յայտնեալ զբանս՝ զայս, արհամարհեաց սինկղիտոսն »։

Թադէոս առաքեալը Հայաստան քարոզութեան եկած առենը, յայտ է թէ միւս աշակերտներն ալ եղած էին. ինչպէս Ս. Ստեփաննոսի պատմութենէն կը տեսնուի։ "Եւ ամենեքեան ցրուեցան 'ի գեօղս Հրէաստանի՝ բաց յառաքելոցն »։ Ուստի աներկբայելի է, որ Պետրոս դեռ Երուսաղէմ էր. և Հռոմ տակաւին քարոզիչ չէր գնացած, ուր որպէս գիտենք, ամենէն յառաջ Պօղոս առաքեալը գնաց. և Հռոմ դեռ քրիստոնեայ եղած չէր։ Այս բանիս ստուգութեանը վկայեց Տիբերիոս։

Այսպա ուրեմն տարակոյս չկայ, թէ Հռոմայ եկեղեցին, որ այսօր ամէն քրիստոնէից եկեղեցիներէն վեր կը պարծի, ամէնէն վար է. և այսպէս Հայոց եկեղեցիէն տարիներով ալ ետքը առած է իւր քրիստոնէութիւնը. ըստ այսմ, թէ որ եկեղեցական նախապատուութիւնը կամ ատոչութիւնը քրիստոնէական յառաջնութենէն կը բղխի, այժմ Հռոմայ արքանեակները ինքնին թող ճանչնան, թէ նախապատուութիւնը ո՞ր կողմն է։

Եթէ Հայաստանեայց եկեղեցին քրիստոնէական յառաջնութեան գահը ունի, ուրեմն պապին գլխաւորութիւնն ևս ի՞նչ ատիճան ըլլալը Հայոց եկեղեցւոյ հոգևոր գլխոյն՝ քովը, վճռուած է։

Այս է ահա՛ Հայոց եկեղեցւոյ քրիստոնական հաւատոյ անդրանկութիւնը. և անոր այս յառաջնութիւնը ուրիշ քրիստոնեայ եկեղեցեաց մէջ, զոր Ս. Դասատուակի պատմիչը կը գրէ Խորենացիէն առնելով. մեք ևս անկէ համառօտեցինք այնու դիտմամբ, որ անանք՝ այսինքն Մխիթարեանք, որ մեր եկեղեցւոյ

ճշմարտութեանցը տոութեամբ կ'ընդդիմադրեն, նոյն իսկ ճշմարտութեանցը վկայ ըլլան։ Եւ աւաւելապէս Հ. Մաղաքիայի այս գրուածովը յայտնուի, զոր կ'երևի թէ 'ի դէմս մեր ազգին ճշմարտութեան պաշտպաններուն ուղղեր է, որուն մէջ կը հաստատէ նաև մեր Ս. Լուսաւորչի Հռովմ չգնալուն ճշմարտութիւնը և ուրիշ բաներ ևս, որոնք բովանդակուած են գործոյս մէջ։ — Եւ է այս։

"Այց թէ որ դեռ մէկը գտնուելու ըլլայ, որ հին տարիներուն այսչափ քաղաքիւ ու արժանահաւատ պատմագիրներուն տուած լուսաւոր վկայութիւնները արհամարհելու կամ թէ բաւական չսեպելու ըլլայ, այսպիսի մէկու մը համար աւտիկ քանի մը խօսք ալ կ'ուզեմ հոս աւելցընել։ — Ես ամէն մատենագիրներուն տուած վկայութիւններն ալ մէկ դի ձգելով, կարելի բա՞ն է մի որ մեղի հերիք չսեպուի միայն մեր ազգային ու Ասիացւոց և Եւրոպացւոց առջեւ իբրև արժանահաւատ ճանուցուած պատմագրի մը, այսինքն Մովսէսի Խորենացւոյ վկայութիւնը, թէ և ինքը միանակ աս բանս պատմելու ըլլար, որն որ իր ոսկեղէն պատմութեան մէջ աս Ս. Դաստառակը յիշատակելէն ետքը, այսպիսի ապացուցական յաւելուած մ'ալ կը դնէ. "Մինչև այս օրուան օրս Եդեսիա քաղաքը կը գտնուի" ըսելով։ Այսպիսի զօրաւոր վկայութեան մը վերայ կրնա՞նք մի տարակուսիլ. և ի՞նչպէս, կարելի բա՞ն է որ այնպիսի սրբակեաց, գիտնական և սպիտակ ալեօքն զարդարեալ... ծերունի մարդ մը այսպիսի ծանր նիւթոյ մը մէջ ճշմարտութենէ դուրս կամ շինծու բան մը խօսի կամ աւանդէ" (Ս. Դաստառակ, երես 23, 24)։

Հ. Մաղաքիայի Մովսէս Խորենացւոյն վրայօք տուած այս վկայութեանս համար, բանիս ընթացքը այս տեղս այսքան կը ներէ մեղի ասել։ Եթէ Խորենացիի նման "Սրբակաց, գիտնական" մարդուն եղած

բանին համար վկայութիւն տալը՝ եղածը հաստատելն է, ապա ուրեմն և չեղած բանին համար լռելն ալ՝ չեղածը հաստատել է. ուստի եթէ այն "Սպիտակ ալեօք զարդարեալ... ծերունի մարդը ծանր նիւթոյ մը մէջ ճշմարտութենէ դուրս շինծու բան մը չխօսիր կամ ջաւանդեր", ի՞նչպէս ապա իրենք սպիտակ ալեօք՝ անոր խօսածը կը լռեն, և լռածը՝ կը խօսին. անոր խօսեցած ճշմարտութիւնը կը ստեն, որ Կեսարիոյ Հայոց եկեղեցւոյ Պերմելիանոս եպիսկոպոսի համար կը գրէ, թէ Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց յաջորդութենէն՝ նոյն եկեղեցւոյ իշխանութիւնը կը վարէր. և գրած էր Մեծին Խոսրովու գործքը և Հայ քրիստոնէից նահատակութիւնը անոր հրամանաւ. ուստի նա ինքն և Խորենացին այն ժամանակի անցքերը կ'առնու և կը պատմաբանէ[1]: Իւ անոր (Խորենացւոյն) չխօսեցածը՝ ստութեամբ կը ճշմարտեն, թէ Դրիգոր Լուսաւորիչը Տրդատայ հետ Հռոմ գնաց և պապին հետ դաշանց թուղթ գրեց՝ անոր հպատակելու. (Ընթռ. Ս. Պետրոսի, երես 227):

Ոնրպիսի ընտիր միաբանութիւն Վ. Հէնայի ուխտ. որ իրենց միաբանաբեր գրուածքներէն՝ աւելի իրենց միաբանութիւնն ալ կը յայտնուի: Ա՛էկը կըվկայէ ծերունի և գիտնական պատմագրին համար թէ, "Անոր նիւթոց մէջ ճշմարտութենէ դուրս շինծու բան մը չէր խօսեր կամ աւանդեր". միւսը՝ այնքան կը թեթևցընէ ծանր նիւթը, որ իր շինծու բանը անոր բերանը կը դնէ ճշմարտութեան տեղ. գուցէ և սպիտակ ալեօք կը բարբառի անոր լռածը: Թո՛ղ տես-

---

1 Պերմելիանոս՝ Կեսարիոյ եպիսկոպոս ըլլալով, և Կեսարիա Առաջին կոչեցեալ Հայք, Կեսարիոյ եկեղեցին ևս տիրապէս կը համարուի Հայկական եկեղեցի. (Տես 'ի Կրօն. Սալ. երես 114): Որովհետև "Ան տաճարները աս ամէն կողմերս Հայոց թագին ու գաւազանին կը վերաբերի", կ'ըսէ Ս. Դաստառակին պատմիչը (Անդ երես 1):

նեն լուսաւոր մտքերը ու քննեն, թէ ճշգ է են, որ կ'արհամարհեն "Ս. բժանահաւատ պատմագիրներուն տուած լուսաւոր վկայութիւնները"։

ԳԼՈՒԽ Բ.

Հայոց եկեղեցին մասն է ընդհանուր եկեղեցոյն Քրիստոսի. և այս ընդհանրութիւնը մեջ իրեն գլուխ կը ճանչնայ զՔրիստոս. իսկ իրեն մասնաւորութիւնը մեջ՝ զԹադէոս առաքեալն ու աջնոր յաջորդները մինչև ցներկայ ատենայն Հայոց Կաթուղիկոսն Ս. Լուսաւորչի. և ըստ այսմ զՊետրոս առաքեալը՝ հաւատարիչնան մեր առաքելոյ, որ ոնին զմասնաւոր և հաւասար գլխաւորութիւն եկեղեցոյ իրարանչիր ապգայ։

ՀԱՅՈՑ եկեղեցին ուղղափառ է իւր քրիստոնական հաւատոյ մեջ. զոր Թադէոս առաքելոյ քարոզութեամբն ընկալաւ։ Այս եկեղեցին այն հաւատքը կը ճանչնայ, զոր 'ի ձեռն երկոտասան առաքելոց ընդհանրական եկեղեցին Քրիստոսի առած է, Քրիստոսի Տեառն մերոյ անբեւոյթ գլխաւորութիւնը. "Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի" (Մատթ. իբ. 20)։ Ուստի և ընդհանուր նկատմամբ՝ Հայոց եկեղեցին ուղղափառ մասն է եկեղեցւոյն Քրիստոսի. և այս ընդհանրութեանս մեջ՝ իրեն գլուխ կը ճանչնայ զՔրիստոս Տէրն մեր։

Այս մասնաւորութեան մեջ իւր միութիւնն ու հաւասարութիւնը կը պահէ Քրիստոսի ընդհանրական եկեղեցւոյն հետ. և այս միութեամբ և հաւասարութեամբ համաձայն է Յունաց եկեղեցւոյն, բաց

'ի մէկ քանի ծիսից, զորոնք յետոյ ընկալան Յ. դաբուն մէջ, համաձայն է և Հռովմայ եկեղեցւոյ նախկին հաւատոցը, զոր ունէին մինչև Քրիստոսի Յ. դարը. ըստ որում անկէ ետքը շատ աւելորդ բաներ հաւատոյ մէջ ընդունեցին (Կրօնագիտութիւն Վալ. երես 102, 103), ինչպէս յառաջ բերած եմք գործոյս հինգերորդ գլխոյն մէջ։

Իսկ մանաւոր նկատմամբ՝ Հայոց եկեղեցին իւր յատկութիւնն ու անկախութիւնը ունի հաւասար միւս ազգաց եկեղեցիներուն, ինչպէս չորրորդ գլխոյն մէջ. և յայնժամ իրեն գլուխ կը ճանչնայ ըզԹադէոս և Բարդուղիմէոս առաքեալները. և հետևաբար անոնց յաջորդները մինչև ցներկայ Կաթուղիկոսն. և զանոնք ամէնքն ալ՝ հիմունք հաւատոյ, աղբիւր իրաւաբանութեան և կեդրոն միութեան կը համարի։

Այսպիսի ուղղափառութեամբ Հայոց եկեղեցին կ'ընդունի ոչ միայն Նստուածաշունչ մատեանը, այլ անոր մէջ քարոզուած հաւատոյ ճշմարտութիւնը, իրեն հաւատապատում եկեղեցական բոլոր մատեանները, որոնք համաձայն են Նստուածաշունչ։ Որոց և ընդունելի Ս. Յոգովքներուն. ուստի և կը ճանչնայ՝ առաջին, երկրորդ, երրորդ և միւս Սուրբ Յոգովքները։

Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութեանը նոյն իսկ Քրիստոսի ընդհանրական եկեղեցին վկայ ըլլալով, անոր հետ 'ի հաւատոյն իւր հիմնաւորութենէն մինչև հիմա և մինչև 'ի կատարած աշխարհի համաձայն ըլլալուն, հարկաւորութիւն չկայ մանաւորաց վկայութիւնները այս տեղ յառաջ բերել, որոնք անթիւ և անհամար են. իսկ որովհետև խնդիրը առաւելապէս եկեղեցւոյ գլխաւորութեան վերայ է, անոր համար առաքելոյ եկեղեցւոյ վերայ գլխաւորութիւնը կ'առնումք երկար քննել. թէ արդեօք Ն-

նանք Քրիստոսի եկեղեցւոյ կառավարութեանը մէջ հաւասարիշխան էին, եթէ ընդ միապետական իշխանութեամբ, զոր պապականները Պետրոս առաքելոյն կու տան։

Նոյն իսկ վկայութիւնները, զորոնք պապականք Ս. Գրքէն կ'առնուն Պետրոսի նկատմամբ պապին գլխաւորութիւն տալ Քրիստոսի ուղղափառ եկեղեցւոյ վերայ, ողջամիտ վարդապետութեամբ անոնց այս սխալ դրութիւնը կը հերքեն, թէ որ աշխարհիս փառքն ու փառասիրութիւնը չբռնադատեն զանոնք այնպէս պապին համար վկայելու։

Բայց որովհետև անոնց փառասիրութիւնը աւելի զայդ կը փնտռէ, և ո՛չ երբէք կրնան ճշմարտութիւն հաստատել. վասնորոյ և այն վկայութիւնները իրենց գաղափարին համեմատ կ'առնուն ու կ'աղաղակեն, թէ "Ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի գլուխը՝ Հռովմայ պապն է". այսպէս կ'աղաղակեն, և կարծիք կ'ընեն, թէ նոյն վկայութիւններն ալ իրենց ձայնին արձագանգ կ'ըլլան։

Եւ ո՛չ ինքնին իսկ պապը կ'երևի առաւելապէս այս գահասիրութեան հետամուտ, որքան անոր արքանեակները կը սեպհականեն նմա այս փառասէր հոգին, և մտքերնին այն չէ՝ թէ որպէս աշակերտք ճշմարտութեան Ս. Գրքը քարոզեն ո՛ր հոգւով որ գրուած է, կամ ի՛նչ որ անանց նկարագրական միտքն է, այլ իրենց նենգաւոր ու խարդախ մտքերովը կը ջանան նոյն վկայութիւնները ծանրաբեռնել, որպէս զի ռամիկ ժողովրդեան հաւատացընեն. որով գուցէ Հռովմէական եկեղեցւոյ այն ահագին բարոյական ճնաւը՝ փոքրիկ օգուտով մը լեցընեն։

Արդ՝ նոյն վկայութիւնները, ըսինք, ողջամիտ վարդապետութեամբ կը հերքեն զպապականաց դրութիւնը՝ գլխաւորութեան համար. և այս իրենց դրութեանը փաստ զայն խօսքը կ'առնուն՝ զոր Քրիս-

տոս Պետրոսի ըսաւ, թէ "Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ... տայց քեզ զբանալիս փրկանս արքայութեան երկնից", և այլն. որով կը հաստատեն, թէ Քրիստոս իւր եկեղեցին Պետրոսի անձին վերայ շինեց. այսինքն, Պետրոս հիմն եղաւ. և ասելովն՝ "Տայց քեզ զփրկանս արքայութեան երկնից. զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս", կը հաստատեն, թէ Քրիստոս իւր եկեղեցւոյ կառավարութիւնը Պետրոսի յանձնեց. և զնա միայն ընդհանուր գլուխ դրաւ, որ եկեղեցւոյ իրաւունքը ձեռքը ունենայ. "Զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս", և այլն. որով և բոլոր առաքեալք Պետրոսի ստորադրեալ եղան, Պետրոսն ալ անոնց ընդհանուր գլուխ.

Ուստի կը հետևցընեն, թէ պապը Պետրոսի յաջորդն ըլլալով, նոյն եկեղեցական իշխանութիւնը անընդմիջաբար ունի ընդհանուր եկեղեցւոյ վերայ, զամէնքը ինքը պիտի կառավարէ, ամէն քրիստոնեայ (ազգեր) եկեղեցիներ իրմէ պիտի կախումն ունենան յիրաւաբանութեան, 'ի բանս հաւատոյ, և ընդհանուր օրինաց կամ կարգադրութեանց. որով և ինքն գլուխ ամենայն եկեղեցեաց, և անոնք իրեն անդամք և ստորադրեալք. Քրիստոս իմանալի գլուխ ըլլալով եկեղեցւոյ, հարկ էր կ'ըսեն որ տեսանելի գլուխ ևս ըլլայ. և այս գլխաւորութիւնն ալ Պետրոսի տուած ըլլալով, ինքն ալ անոր յաջորդն է, և թէ եկեղեցւոյ տեսանելի գլուխն ալ ըստ այսց իրաւանց պապն է.

Ու ինչպէս Քրիստոս կապելոյ և արձակելոյ իշխանութիւնը տալով Պետրոսի, իշխան ըրաւ զանիկա միւս առաքելոց վերայ, և առաքեալք ստորադրեալք եղան անոր, այնպէս ալ պապը բոլոր եկեղեցեաց գլուխ ըլլալով, իւրաքանչիւր եկեղեցւոյ մասնաւոր գլուխները անոր ստորադրեալքն են.

Այս ամէն հետևութիւններէն ուրիշ բան չմնար մեզի իմանալու, միայն պիտի ճանաչեմք, թէ փառաւորութիւնն ու անձնական շահը մարդս որ ստիճան ամբարտաւանութեան կը հանէ, և յոռգիսի խորհուրդատ ստութեան կ'ինջուցանէ, որ այսպէս Ս. Գրոց միտքը խանգարելով, իրենց ըղձին համեմատ վեր 'ի վայր կը տապալեն. թէ որ ողջամիտ վարդապետութեամբ մեկնեն, իրենց այն ամէն հետևանաց ներհակը պիտի գտնեն, և ճշմարտութեան առջևը կորգրուխ պիտի ըլլան։

Քրիստոս երբ որ Պետրոսի ըսաւ "Դու ես վէմ", ինչ բանի վերայ խօսք եղած էր, պատճառը ինչ էր որ ըսաւ. պատճառը իրենց բանին ձեռք չտար ռամիկը որսալու։ Քրիստոս առ Պետրոս միայն կը խօսէր, թէ առ բոլոր առաքեալն. ճշմարտութիւնն աս է, որ իրենց ստութիւնը կը խայտառակէ. վասն որոյ և խօսքը սկիզբէն չեն առնուր։

Քրիստոս այս խօսքը Պետրոսի ըսելէն առաջ. "Հարցանէր ցաշակերտսն, զո՞ ոք ասեն զինէն մարդիկն, թէ իցէ որդի մարդոյ". ահա՛ առ աշակերտսն խօսէր, ինչպէս հետագայ խօսքէն յայտնի է. "Եւ նոքա (աշակերտքն) ասեն, ոմն զՅովհաննէս Մկրտիչ", և այլն. կրկին կը հարցընէ աշակերտացն. "Ասէ ցնոսա (ցաշակերտսն). իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ". ասոր պատասխանին ոչ պիտի տայ. յայտ է թէ, բոլոր աշակերտքն. "Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս և ասէ. Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ". Պետրոս միայն պատասխան տուաւ բոլոր աշակերտաց կողմէն. որովհետև Քրիստոս չըսաւ. Իսկ դու, Պետրոս. այլ թէ՝ "Դո՛ء զո՞ ոչ ասէء զինէն". Պետրոս ոչ այլազգ կը հաւատար, ինչպէս որ միւս աշակերտքը կը հաւատային. ուստի և Պետրոս աշակերտաց հաւատոցը ապաւինելով, պատասխան տուաւ. անոր համար և Քրիստոս իսկապէս իրեն եկե-

զեցին աշակերտաց հաւատոցը վերայ չինեց, և ոչ թէ ի վերայ անձին Պետրոսի միայն։

Իսկ թէ որ Պետրոսի "Դու ես վէմ" ըսելովը կ'ուզեն դարձեալ Պետրոսին գլխաւորութիւն տալ, աստոր պատասխանը կուտանք։

Ամէն մարդ և ամէն քրիստոնեայ հոգևոր եկեղեցի ըլլալով Քրիստոսի, ըստ բանի առաքելոյն, նոյն հոգևոր եկեղեցին կը կայանայ բարոյապէս հաւատոյն վերայ. և անդրադարձաբար, հաւատքը՝ եկեղեցւոյ հիմն է, մենք ալ հոգևոր տաճար ըլլալով Քրիստոսի, հիմնուած-եմք մեր հաւատոյ հիման վերայ. ուստի՝ ասկից կը հետևի որ, Պետրոս ևս իւր այն դաւանած հաւատոյն վերայ (Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ) հիմնուած բարոյապէս մէկ եկեղեցի է Քրիստոսի, որպէս և պարզապէս կ'իմացուի թէ՝ Դու ես վէմ ըսածը՝ բոլոր աշակերտաց հաւատքը և նոյն իսկ անոնց հաւատքն է վէմ հաւատոց նոցա. որոց վերայ չինուած է Քրիստոսի եկեղեցին։ Դիցուք թէ Պետրոսի հաւատոյ վերայ չինեց. ասով կ'իմացուի որ Պետրոսն ալ զՔրիստոս դաւանողներէն մէկն ըլլալով, ինքն ալ հոգևոր տաճար է Աստուծոյ կենդանւոյ, և իւր հաւատքը՝ վէմ և հիմն իւր տաճար ըլլալուն. ուստի՝ ասկէ չհետևիր, թէ Քրիստոս Պետրոսի դաւանութեամբը գլխաւորութիւն տուաւ անոր՝ միւս աշակերտաց վերայ, որով պապն ալ կարող ըլլայ իշխել ամէն ազգաց եկեղեցեաց, կամ ամէն մասնաւոր ազգաց վերայ մէկ մասնաւոր գլխաւորութիւն մը կազմել։

Ի՞նչ դժուար բան է Ս. Գրոց այս նկարագրական միտքը, որ ծածկուած կը մնայ պապականաց լուսաւորմտքերէն. որոնք այսպիսի պարզ բանէ մը այնպիսի արտառոց հետևութիւններ կը հանեն. իրենք ատութեան խորխորատը իջնելէն ետքը պարզամիտներն ևս իրենց հետ կ'իջեցընեն։

ԼԷՕՒ

Նոյն իսկ տեսութեամբ ևս քննենք պապականաց այս դրութիւնը, որով կը հաստատեն զայս. և անով պապին իրաւունք տալէն ետքը, կը պահանջեն ևս, որ ամէն մասնաւոր եկեղեցիք ճանաչեն պապին գերխաւորութիւնը իրենց վերայ։

Երդ՝ որովհետև եկեղեցին Քրիստոսի (իմա՛ ընդհանուր հաւատացեալք) ունի, կ'ըսեն, մի և անտեսանելի գլուխ ինքեան զնոյն ինքն Քրիստոս, և տեսանելի գլուխ եկեղեցւոյ իւրոյ փոխանակ իւր՝ միայն զՊետրոս կարգած ըլլալով, նոյն վսեմական իշխանութեամբ կապելոյ և արձակելոյ յերկինս և յերկրի իբրև ընդհանուր կառավարիչ բոլոր քրիստոնէից, հարկաւ կը պահանջուի, կ'ըսեն, որ մէկ ու տեսանելի գլուխ ևս ըլլայ նոյն ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի. և ըստ որում այս գլխաւորութիւնը Քրիստոս Պետրոսի տուաւ, նորին աղագաւ պապը իբրև յաջորդ Պետրոսի, հարկ է որ ամէն մասնաւոր եկեղեցեաց մէկ ու տեսանելի և հոգևոր գլուխ ըլլայ, ընդհանուր հրամանատար, ընդհանուր իրաւաբան, և ընդհանուր կապող և արձակող յերկինս և յերկրի. ինքը միայն զամէնքը կառավարող, ամէնքը իրեն միայն ստորադրեալ, և ինքը միայն այս ընդհանրութեանը՝ կեդրոն միութեան, աղբիւր իրաւաբանութեան. (Ընթռ Ս. Պետրոսի)։

Ըստ այսմ ընդհանուր քրիստոնէից հոգևոր իշխանութեանց անտեսանելի գլուխը Քրիստոս ըլլալով, եթէ հարկ է որ տեսանելի գլուխ ևս ըլլայ, և այս գլխաւորութիւնը պապին տրուի, Պետրոս առաքելոյն նկատմամբ, ապտի կը հետևի որ, նոյն ընդհանուր քրիստոնէից մարմնաւոր իշխանութիւնն ևս՝ մի և տեսանելի գլուխ մը ունենայ, բաց յիւրաքանչիւրոց մասնաւոր գլուխներէն. ըստ որում հոգևոր իշխանութիւնն առընչակից է միշտ մարմնաւորին հետ։

մանաւանդ թէ՝ անկէ իւր գոյութիւնը կախում ունի միշտ։

Ընթադրենք, թէ պապը՝ մի և տեսանելի գլուխ է Քրիստոսի ընդհանուր եկեղեցւոյն. արդեօք կրնան ցոյց տալ պապականք անոր այդ փառաւոր պահանջման օրինակը՝ իւր հոգևոր իշխանութեան առընչակցին վերայ (այսինքն աշխարհիս մարմնաւոր իշխանութիւնը.) որ ոչ միայն առընչակցութիւն ունի հոգևորին հետ, այլև անկէ գերագոյն է, և այս օրուան օրս՝ ե՛ւ հոգևորագոյն, ե՛ւ հոգևորը անգամ՝ իրեն տակը ունի նուաճեալ։

Ընթէ պապը Քրիստոսի փոխանորդ համարուելով, ինքզինքը Քրիստոսի կողմէն տեսանելի գլուխ կը կոչէ բոլոր քրիստոնէից, ապա Քրիստոս ոչ միայն քահանայապետ, այլև թագաւոր ևս էր տիեզերաց. ուստի անոր փոխանորդ ու անոր կողմէն որ թագաւորն է աշխարհիս մէջ տեսանելի գլուխ՝ ի վերայ ամենայն թագաւորութեանց։

Ուրեմն չափ թագաւորութիւն կայ քրիստոնէից՝ աշխարհիս վերայ. ասոնք ամէնն ալ հաւասարիշխան գոլով մէկմէկու նկատմամբ, հաւասարաչափ իշխանութիւն ունին իրենց հպատակաց վերայ։ Ասոնց և ոչ մէկը մէկէ մը կախում ունին. այլ իրենց տէրութեանը իրենք միայն են ընդհանուր իրաւաբան, ընդհանուր կառավարիչ, ընդհանուր իշխան, և ընդհանուր ու տեսանելի գլուխ։

Իսկ թէ որ ասոնց մէջ և ոչ մէկը կայ՝ ամենուն իշխող և ամենուն գլուխ, կամ թագաւոր թագաւորաց և կայսր կայսերաց՝ երկրիս ընդհանրական մարմնաւոր իշխանութեանց մէջ, կամ մին՝ զբոլորն կառավարող. ապա պապականները որ իրաւամբք այդպիսի իշխանութիւն կը յատշտակեն պապին համար՝ ի վերայ ամենայն հոգևոր իշխանութեանց, և որպիսի տեսանելի գլուխ կ'ուզեն նստեցընել ընդ-

հանրական եկեղեցւոյն Քրիստոսի՝. երբոր անանք և աշխարհիս մարմնաւոր իշխանութեանց նման՝ ամէն ազգ իւր հոգևոր իշխանութիւնը և իւր եկեղեցւոյն մասնաւոր մի և տեսանելի ու առանձին գլուխ ունի, մէկմէկէ անկախ և մէկմէկու հետ հաւասարիշխան։

Թէ որ Յոյնը և ս պապականաց այդ փառասիրութիւնը պահանջելու մասք՝ ընդհանրական եկեղեցւոյ վերայ տեսանելի գլխաւորութիւն պահանջէ իւր եկեղեցւոյն նախկնութեան իրաւամբք, Հռովմայ եկեղեցին և ս, որ այդ ընդհանրութեան մէջն է իբրև անդամ մարմնոյ եկեղեցւոյն, այդ իրաւունքը կու տա՞յ երբէք Յունաց առաքելական աթոռոյն, զոր ինքը և ս չունի. եթէ այս իրաւանց տակը չխոնարհիր Հռովմը, ապա և Հայոց և այլ մասնաւոր եկեղեցիք՝ երբէք չեն խոնարհիր պապին միագլխութեանը. և իրենց հաւասարիշխան ազգային իրաւամբքը և ոչ մի բոպէ կը հաճին պապին եկեղեցւոյ համաշխարհական և միագլխապետական իրաւունք տալ, զոր մի միայն Քրիստոս Տէրն մեր ունի իւր եկեղեցւոյ վերայ. ուստի և կը հետևի որ, ոչ այնքան պապը, այլ որքան անոր արբանեակները այդ միագլխապետական իշխանութիւնը ընդհանուր քրիստոնէից՝ կը բաղձան անոր մատուցանելու վասն հաւատարմութեան. ապա թէ ոչ՝ պապը այս օրուան օրս այնքան նեղը մնացած է ներքին հանգամանքներէ, որ իւր ձեռքի ունեցած իշխանութիւնը հազիւ կրնայ վարել, որ ձեռքէն չհանէ. և ոչ թէ եկամուտ իշխանութեան մը և ս ցանկացող ըլլայ. այսմ վկայ կրնան ըլլալ 1848 և 1849 թուականին եղած Հռովմայ դէպքերը, որ անոր երկակի իշխանութիւնը այնպէս դրդուեցին, մինչև քիչ մնաց որ անանց գոյութիւնն ալ պիտի կորանցընէր։

Երրորդ տեսութեամբ և ս քննեմք պապին գլխաւորութիւնը ընդհանուր քրիստոնէից վերայ, զոր

որ Քրիստոնեայ՞ ազգերը չխոստովանելով՝ հերձուա-
ծող և հերետիկոս կը սեպուին պապին առաքելական
աթոռոյն առջև, և փրկութեան ևս չպիտի հասնին
առանց այն իշխանութիւնը ճանչնալու։

Երբոր զպապը գլուխ ճանաչեմք ընդհանուր քրիս-
տոնէից, յայտ է թէ, և բոլոր քրիստոնեայ ազգերը
մէկ բարոյական մարմին պիտի ճանաչեմք այս գլխոյն.
և հետևաբար այս ընդհանրութիւնը տրամաբաշխե-
լով, ամէն մասնաւոր ազգերն ալ՝ անդամք մարմնոյ
նորա. որպէս թէ անդամները մարմնոյն զօրութիւն
տալով, մարմինն ալ 'ի գլխոյն կենդանութիւն կ'առնու։

Երբ կը տեսնեմք որ մարմինը ջղերով և արեան ե-
րակներով՝ գնոյն հաղորդակցութիւնը մարմնոյ հետ
ընելով, երկուքը միատեղ գլխոյ հետ այս փոխադարձ
տուրևառութիւնը հաղար ու մէկ շրջանակներով կ'ը-
նեն, մէկմէկէ կենդանութիւն կ'առնուն և կու տան,
գլուխը զմարմինը կը կառավարէ, և անդամները
մարմնոյն հետ անքակ կապակցութեամբ զգլուխը
կենդանի կը պահեն. և Առաքելոյ ըսածին պէս,
գլխոյ հետ "Ամենայն մարմին յօդիւք և խազաւորք
տարաբերեալ և խառնեալ է"։

Արդ՝ պապականները, որ զպապը գլուխ կը կոչեն
ընդհանուր քրիստոնէից, տեսանենք թէ ո՞ր ազգը
մարմնոյ նկատմամբ անոր հետ հաղորդակցութիւն
ունի. կամ ինքը գլխոյ նկատմամբ՝ ո՞ր մասնաւոր
ազգերը կը կառավարէ. և որո՞ց վերայ առաւելապէս
գլխոյ պաշտօն կը վարէ բաց 'ի իւր եկեղեցւոյն.
յայտ է թէ, և ո՛չ ազգի մը վերայ ունի իշխանու-
թիւն զանիկա կառավարելու իրաւամբք. թո՛ղ թէ
իւր ազգէն շատերն ալ իրեն իշխանութեան բռնա-
կան լուծը ձգեցին, ելան. ուստի աւելի լաւ չէ՞ որ
իւր ազգին վերայ գլխութիւնը միայն պահելով,
զանիկայ բարուք կառավարէ, որպէս զի անդամները
'ի մարմնոյն չքայքային և իւր կենդանական զօրութիւնը

չկորսնցընեն. քան թէ իւր ազգէն իր ունեցած անձնական և սեպհական կենդանութիւնը կորսնցընելով, ուրիշ մարմիններէ իր անձին կենդանութիւնը պահանջէ. ասով խորհուրդ կու տամք պապականաց, որ հոգան միայն պապին մարմնոյն անդամոցը աւելի դարման տանիլ, որպէս զի պապին կենդանութիւնը չկորսնցընեն, և դառնան անոր կորուսեալ կենդանութիւնը՝ ուրիշ մարմնոյ և անդամոց մէջ որոնեն։

Ընթռ Ս. Պետրոսի ըսուած գրքին մէջ կը տեսնեմք որ ոչ այնքան հեղինակը, որքան անոր թարգմանիչը մեծ մեծ խրոխտմունքներով, լոկ բառերու կուտակութեամբ և միայն բանիւ կը պահանջեն պապին այս գլխաւորութիւնը ամէն ազգաց վերայ, և երբէք և ոչ զմէկը ցոյց կու տան գործով թէ պապին գլխաւորութեան տակն է։

Անգլիացին կը դատապարտէ զպապը և զպապականները, Յոյնը կը նզովէ, Ռուսը կը հալածէ, Գերմանացին հազար ու մէկ արիւնհեղութիւններով պապական իշխանութիւնը կը ջնջէ, և Եւրոպան ընդհանրապէս զպապը իւր լատինական կոպարին մէջ կը պարաւանդէ, և դարձեալ ողորմելի պապականները չեն դադարիր պապին գլխաւորութիւն պահանջել այս ամէն ազգաց վերայ. ցաւալին այս է որ, որքան այս արհամարհելի գլխութիւնը կը պահանջէ, այնքան և մարմնոյ հաւասարութեան մէջ կը մնայ ու չգար։

Ապա այսքան ներհակ պարագաներու մէջ մէկ միութիւն և յոյս միայն գտած է իւր գլխաւորութեանը, Հայաստանեայց եկեղեցին. որ վանզի Ռուսին պէս զինքը չհալածեր, և Յունաց հետ չնզովեր, այլ առաքելական հոգւով կը վարուի անոնց դէմ. և այդ անոտի պահանջմունքը հերքելէն ետքը, զինու զօրութեամբ դէմ չդներ իրեն ըղձիցը. պապն ալ կարծիք կ'ընէ որ իւր ըղձացեալ գլխաւորութիւնը ուիսի գտնէ ազգիս հոգևոր իշխանութեան և եկեղեցւոյ

վերայ , 'և այս՝ ազգիս ներկայ վիճակը կշռելով , որ թագաւորութիւնիս կորսնցուցած , իւր հոգևոր իշխանութենէն ալ ազգին խիստ փոքրիկ մասը բաժնուած , և մանաւանդ թէ՝ քանի մը վեստ Արգիսներ ալ գտնուած է մէջերնիս , որոնք անձանց պատիւնին աւելի կ'ընտրեն , քան ազգի և եկեղեցւոյ գերագունութիւնը . իրենք բաժնուելէն ետքը , կ'ուզեն որ ազգային յատկութիւնիս ալ պապին առանձնաշնորհութիւն ընեն : Այց ո՛րքան վեստ Արգիսներ ալ որ գտնուին . գիտնան որ՝ ազգը իւր ազգութիւնը դարձեալ չկորսնցներ . իւր ազգութեան , իւր հաւատոց քրիստոնէութեան և եկեղեցական իշխանութեան գլուխ ճանչցած է , և կը ճանչնայ իւր առաքելական եկեղեցւոյ յաջորդները , անխառն ըլլալով ինչպէս մինչև հիմա , այնպէս ևս մինչ 'ի կատարած աշխարհի՝ պապին հետ հաղորդակցութենէ :

Այդպիսի անհատներ կորսնցընելով , արդարև ազգին ընդհանրութիւնը չխախտիր . բայց դժբաղդաբար պատրականները անոնց վերայ վստահ ըլլալով , նոր նոր պահանջմունքներ կ'ընեն մեր եկեղեցիէն , որոնք հազար ու մէկ անգամ հերքուած են . ինչպէս ներկայ Աթոռ Ս. Պետրոսի Թարգմանիչը , որ պապին գլխաւորութեանը համար քրիստոնեայ ազգաց վերայ , հաստատուն փաստ մը չկրնալով բերել , միայն գրքին Թարգմանութիւնը բաւական սեպած է , որ ո՛չ աւելի հաստատութիւն մըն է , ըստ որում մէկ անհատի մը գրուածքը ընդհանուր եկեղեցւոյ իրաւանցը չպատասխաներ , կը դառնայ և իւր պահանջմունքը մեր եկեղեցիէն կ'ընէ , որպէս թէ ազգիս եկեղեցւոյ վարդապետաց թղթերէն քանի մը հատուած յառաջ բերելով , կ'ուզէ պարզամիտները որսալ . որոնք իբր թէ պապին գլխաւորութեանը համար գրած ըլլան . որոնց պատասխանը և մեք ազգիս կողմանէ ուղղելով , կը հերքեմք այն ամէն զրպարտու-

թիւնները, զորոնք կամ իրենք կեղծելով՝ մեր եկեղեցւոյ վարդապետաց բերանը դրած են, և կամ իրենց ստութեան ապրիւրներէն հանած են անոնց անունով. ինչպէս պիտի ընթեռնուիմք գործոյս վերջին գլխոյն մէջ[1]։

---

1 Առ այժմ բաւական կը համարիմք հրաւիրել մեր ընթերցողները, որ անդամ մը աչքէ անցընեն Ժամակարգութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց անուն գիրքը՝ տպեալ 1839ին 'ի վանս Մխիթարեան ուխտին 'ի Վենետիկ, և բաղդատեն զայն Կոստանդնուպօլիս կամ Հայաստան տպուած բուն Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյ Ժամագրքին և Շարականին հետ։ Պիտի տեսնեն մեծաւ զարմացմամբ, թէ ինչպէս առանց խղճի յանդգներ է յիշեալ Միաբանութիւնը զանազան դատապարտելի փոփոխութիւններ ընել անոնց մէջ։ Նախ՝ ուր տեղ որ «Ի Հօրէ բղխումն» տեսեր է, բոլորն ալ փոխեր և «Ի Հօրէ և Յորդւոյ բղխումն» դրեր է։ Օրինակի համար, «Առաւօտ լուսոյ» երգին երկրորդ տունը այսպէս այլայլեր է. «Բղխումն 'ի Հօրէ և Յորդւոյ, բղխեալ 'ի հոգւոյս, բան քեզ 'ի հաճոյս». և ուրիշ շատ այսպիսի խարդախութիւններ։ Անոնց մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի է՝ առ Յակոբոս Տեառնեղբայր առաքեալն ուղղեալ շարականին մէկ տունը, որ մերինին մէջ գրուած է. «Սա եղև Գլուխ Առաքելոց սրբոց և կոչեցաւ Եղբայր Տեառն»։ Իսկ Վենետիկի միաբանութիւնը՝ անշուշտ ըստ հրամանի պապին, անհրաժեշտ հարկ համարեր է ճիզվիթական խղճիւ խարդախել մեր Ս. Հայրապետաց օրհնաբանութիւնը, և գրել «Սա եղև Վիճակակից առաքելոց սրբոց և կոչեցաւ Եղբայր Տեառն»։ Նմանապէս մեծ պահոց վեցերորդ Կիւրակէի Օրհնութեան շարականին մէկ տունը՝ «Աստուածածին անհարսնացեալ», և այլն, սքանչելի հմտութեամբ փոխեր՝ «Աստուածածին ամէնօրհեալ» ըրած են վերոյիշեալ Ժամակարգութեանը մէջ. և ուրիշ տպերու մէջ՝ «Աստուածածին առն անգիտակ» ըրած են։ Այս քանի մը փոքրիկ բայց անհերքելի ապացոյցներէն լուսաւորեալ և ողջամիտ ընթերցողները կրնան ճիշտ դատողութիւններ ընել Մխիթարեան միաբանութեանց ուրիշ զանազան գրուածոց և թարգմանութեանց հարազատութեանը վերայ, և մանաւանդ մեր Ս. Հայրապետներէն անոնց յառաջ բերած վկայութեանց վաւերականութեանը վերայ։

ԳԼՈՒԽ Գ.

Հայոց եկեղեցւոյ դէմ պապականաց ըղձարդութիւնը, և անոր առաքելական եկեղեցւոյ շարունակ յաջորդութիւնը մինչև Գրիգոր Լուսաւորիչ. որ և Պետրոս առաքելոյ գլխաւորութեան և Հռովմ գնալոյ վերայ խօսք։

ՀԱՅՈՑ եկեղեցւոյ գլխաւորութիւնը յափշտակող պապականները, նոյն գլխաւորութիւնը պապին ընծայելու՝ այս միջոցը գտած են, թէ Գրիգոր Լուսաւորիչը Ղևոնդէոսէն կարգ առնելով Կեսարիա, "Խոստովանեցաւ ու ընդունեց Պետրոսի աթոռին և Հռովմայ քահանայապետաց գլխաւորութիւնն ու իշխանութիւնը բոլոր եկեղեցւոյ վերայ"[1]. վասն զի, կ'ըսէ թարգմանիչը Աթոռ Ս. Պետրոսի գրքին, թէ "Ս'եր լուսաւորութեան և հաւատոյ հայրը՝ իր մօրը կաթին հետ ծծած էր այն քրիստոնէական սկզբունքը.... որ Կեսարիայի արքեպիսկոպոսական աթոռոյն հաւատքն ու դաւանութիւնն էր. և այս աթոռը, կ'ըսէ, կը խոստովանէր և կ'ընդունէր Պետրոսի աթոռին և Հռովմայ քահանայապետաց գլխաւորութիւնը բոլոր եկեղեցւոյ վրայ"։

Այժմ մեզի կը մնայ քննել, թէ Գրիգոր Լուսաւորիչը Ղևոնդէոսէն որ կարգ առաւ, ինքը Ղևոնդէոս նոյն եպիսկոպոսական կարգը ուստի՞ առած էր արդեօք, Հռովմայ աթոռէ՞ն, թէ Հայաստանեայց առաքելական եկեղեցիէն առաւ, կամ թէ Ղևոնդէոսի եպիսկոպոսութիւնը Թադէոսի և Բարդուղիմէոսի յաջորդութենէ՞ն յառաջ եկած էր, թէ Պետրոսի,

Յայտ է թէ Պետրոս Հայաստան չքարոզեց, ուստի

---

1 Աթոռ Ս. Պետրոսի, երես 221, 222.

և անդ աթոռ հաստատեց։ ապա ինչպէս կ'ըլլայ որ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները Հայաստան առաքելական աթոռ հիմնեն, և նոյն անունց քրիստոնական եկեղեցւոյ աթոռը՝ Պետրոսին և պապին գլխաւորութիւնը քարոզէ իրեն վերայ, երբ որ Պետրոս ևս առաքելոց հետ հաւասարիշխան և առաքելոց հետ քրիստոնական եկեղեցւոյ կառավարչաց մէկն էր։

Նախընթաց գլխոյն մէջ ապացուցուեցաւ, որ Պետրոս առաքեալը հաւասարիշխան մէկն եղաւ առաքելոց։ և նոյն կապելոյ և արձակելոյ իշխանութիւնը, զոր պապականք 'ի դէմս Պետրոսի կ'առնուն, Քրիստոս բացորոշակի բոլոր առաքելոց տուաւ վերնատանը մէջ։ "Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի։ և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի"։ Ահա արքայութեան փականքը՝ զոր Քրիստոս, որ երբեմն Պետրոսի խոստացաւ, այժմ բոլոր առաքելոց տուաւ։ ահա Քրիստոսի եկեղեցւոյ հովուական իշխանութիւնը, որ տրուեցաւ բոլոր առաքելոց՝ իւրաքանչիւրոցն իւր հօտին վերայ։ զոր և հետևաբար իւրաքանչիւրքն թողին իրենց յաջորդաց՝ Քրիստոսի մասնաւոր եկեղեցեաց հովուապետներու։ ապա այս մասնաւոր եկեղեցիները՝ Պետրոսի ոչ բարձրագոյն իշխանութենէն կը ստիպուին անոր գլխաւորութիւնը խոստովանիլ։ մանաւանդ Հայաստանեայց եկեղեցին, որ իւր անդրանկութեամբը կը պարծի քրիստոնէից եկեղեցեաց մէջ։

Առաջին գլխոյ մէջ հաստատեցինք, թէ քրիստոնէութեան ամենէն անդրանիկ եկեղեցին Հայոցը եղաւ։ և քրիստոնէութիւնը Եդեսիայէն սկսեալ՝ գրեթէ բոլոր Հայաստան և առաւել 'ի Կեսարիա Առաջին Հայք ըստուած երկիրը տարածուեցաւ 'ի ձեռն Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոցն և անոնց յաջորդաց։ որոնք մէկմէկէ նոյն եկեղեցական կառավա-

բութիւնը յաջորդաբար առնելով, հասուցին մինչև Գրիգոր Լուսաւորիչ. արդ նոյն Թադէոսի առաքելական իշխանութիւնն էր, զոր յաջորդեց Ղևոնդէոս 'ի Կեսարիա՝ Հայաստանեայց քրիստոսական եկեղեցին կառավարելու։

Ուստի պատմագիրներէն գիտեմք, թէ ինչպէս Ա. Բ. դարու ժամանակը Կեսարիա Առաջին Հայք ըսուած աշխարհը իրեն իշխանութեան տակն էր [1], այսպէս և Ղևոնդէոսի օրոմը բոլոր Կեսարիա մեծ մասամբ Հայ էին ազգաւ և լեզուաւ. "Ինչու որ նոյն տեղերը այս ամէն կողմերս՝ Հայոց Թադին ու գաւառանին կը վերաբերէին" [2], ասոր համար և Կեսարիոյ եկեղեցին Հայոց էր և ոչ Յունաց կամ Հռոմայեցւոց։ Այս կը հաստատէ առաւելապէս Պերմելինոս եպիսկոպոսի գործքը, որ Ղևոնդէոսի նախորդն էր նոյն Կեսարիոյ եկեղեցւոյ հովուապետը, որ և Տրդատայ հօր Մեծին Խոսրովու գործքերը պատմագրած էր. ուստի Խորենացին ալ այն ժամանակի անցքերը կ'առնու, կը պատմագրէ. իրեն քսածին պէս [3], ինչպէս վերը համառօտ յիշեցինք։

Ըստ այսմ Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիա ձեռնադրուելով, նշանակեր, թէ Ղևոնդէոսը Հայոց եկեղեցւոյն գլուխ կամ ծնող եղաւ, թէ և Յոյն ալ ըլլար. որովհետև ինքն ալ Թադէոս առաքելոյ յաջորդն էր, և Հայոց եկեղեցւոյ՝ Քրիստոսի փոխանորդը [4]։

Այսպէս ուրեմն՝ ինչպէս կ'ըլլայ որ, Կեսարիոյ 'աբբեպիսկոպոսական աթոռը Հայոց առաքելական եկեղեցւոյ յաջորդութիւնն ըլլայ, և նոյն առաքելական հաւասարիշխանութեամբը կառավարուի, և խոստո-

---

1 Խորենացի, ա. 14։
2 Ս. Դատաստանի պատմ. երես 1։
3 Խորենացի, բ. 75։
4 Կրօնագիտութիւն Սալ. երես 114։

վանի Պետրոսի և Հռովմայ քահանայապետաց գըլխաւորութիւնը բոլոր եկեղեցւոյ վերայ, զոր ոչ Ղևոնդէոս և ոչ իսկ իրեն նախորդները զայդ խոստովանութիւնն ըրին կամ աւանդեցին Գրիգոր Լուսաւորչին. և թէ ջրին իսկապէս՝ իրենց եկեղեցական կառավարութեան պատմութիւնն ալ կը վկայէ. զոր կը դնեմք ահա Թադէոսէն մինչև Գրիգոր Լուսաւորիչ։

Ա. Թադէոս առաքեալը եղաւ բոլոր Հայաստան աշխարհի նախկին Լուսաւորիչը. քրիստոսական հաւատոյ հիմն ու Հայոց ազգիս ուղղափառ եկեղեցւոյ գլուխը, որ Քրիստոսի Աբգարու ըրած խոստմունքը կատարելու համար եկաւ Եդեսիա. ինչպէս առաջին գլխոյն մէջ պատմեցինք. զԱբգար Թագաւորն ու քաղաքին բոլոր բազմութիւնը մէկտեղ դարձընելով յաստուածգիտութիւն, մկրտեց զամէնքը, և բոլոր քաղաքը Քրիստոսի հաւատովը լուսաւորելէն ետքը, քրիստոնէութեան առաջին եկեղեցին հիմնեց հոն իբրև դուստր Երուսաղէմի Եկեղեցւոյն. և իրեն յաջորդ ձեռնադրելով այն տեղ Աղդէ անուն անձը՝ որ Թագաւորին խոյրարարն էր, հաւատացեալները անոր կառավարութեանը յանձնեց, և ինքը անցաւ անտի՝ գնաց Շաւարշան։

Այն տեղ ևս քրիստոնէութիւնը ծաղկեցընելէն ետքը, իրեն փոխանորդ կարգեց իւր աշակերտներէն մէկը՝ Զաքարիա անուն եպիսկոպոսը, և գնաց Աղուանից աշխարհը, ուստի դարձաւ Կապադովկացւոց աշխարհը՝ 'ի Կեսարիա. այն տեղ ևս բոլոր Հայոց ազգը դարձընելով քրիստոնեայ ըրաւ. և այս քրիստոսական եկեղեցւոյն իրեն տեղը փոխանորդ ձեռնադրեց զԹէոփիլոս եպիսկոպոսը 2։

---

1 Աբգարու ժամանակը՝ Կեսարիա անոր ձեռքը ըլլալով, երկիրն ալ իւր իշխանութեան տակն էր. (Տես Խորենացի, ա. 14։ Ս. Դատարակ, երես 1)։

2 Ասոր իշխանութենէն եկաւ Ղևոնդէոս եպիսկոպոսը Կեսարիոյ. ուստի և Թադէոս առաքելոյ յաջորդութիւնն ունէր Կեսարիոյ Հայաստանեայց եկեղեցին, երբ որ զԳրիգոր Լուսաւորիչը ձեռնադրեց։

Ահա այսպէս Թադէոս առաքեալը, դեռ Բարդուղիմէոս չեկած, Հայաստանու երեք բաժինը (ըստ որում Արևելեան Հիւսիսային կողմը Կուկասեան ազգերը կ'ինային) քրիստոնէութիւնը քարոզելով բոլոր Հայոց ազգին, ամէն տեղ եկեղեցի հաստատեց. և այս եկեղեցիները հովուելու համար, ամէն կողմերն ալ իրեն փոխանորդ և առաքելական յաջորդներ կարգեց։

Բ. Բարդուղիմէոս և Թովմայ առաքեալները՝ որ Յերկոտասանից անտի էին, Թադէոս առաքեալէն ետքը Հայաստան եկան. Քրիստոսի Աւետարանը այն տեղ 'ի միասին քարոզելով, դէպ 'ի Արևելք՝ անցան գնացին Հնդկաստան։

Գ. Յետոյ Բարդուղիմէոս առաքեալը միայն կը վերադառնայ անտի Յերուսաղէմ, ուր Աստուածամօր պատկերը հետը առնելով, միւսանգամ կը դառնայ Հայաստան Թադէոս առաքելոյ վիճակը. ուր քարոզութիւնը առատօրէն կը սերմանէ Աղբակայ, Նախիջևանայ և Գողթնեաց գաւառները. կը մտնէ Այրարատեան երկիրը՝ Արտաշատ քաղաքը, ուր տեղ կը հանդիպի Գ. Եբէոս առաքելոյն, (որ Թադէոս Յակոբեան կ'ըսուէր), որ Հայաստան եկած էր քարոզութեամբ, որ և նահատակեցաւ Յերմի քաղաքը և անդ թաղեցաւ[1]. և անտի բաժնուելով Բարդուղիմէոս, կը մտնէ Հայոց Հեր և Օարևանդ գաւառները, որ Սանատրկոյ իշխանութեան երկիրներն էին, ինչպէս պատմութենէն կը տեսնուի, և անոնց բնակիչները քրիստոնէութեան դարձընելով՝ կ'երթայ Ընձաւացեաց գաւառը. անդ ևս քրիստոնէութիւնը հաստատելէն ետքը՝ կը շինէ փոքրիկ եկեղեցի մը Ս.

---

1 Ասոնք երկուքը, Բարդուղիմէոս և Թադէոս, Այրարատեան Նահանգին մէջ գիշերը մէկտեղ օթած ատեններին, մեծ քարի մը վերայ խաչ մը կը փորեն, որու տակը կը կենան, և անունը Օթեաց Խաչ կը կոչեն, որոյ վերայ յետոյ մատուռ կը շինուի. (Յայտարարութիւն, յեղ յունիսի)։

Աստուածածին անուամբ, և անդ կը դնէ Երուսաղէմէն իր հետը բերած Աստուածածնի պատկերը։

Ետքը կ'երթայ Ուրբանոս քաղաքը, ուր կը նստէր Անատրուկ, որ Թադէոս առաքեալը նահատակած էր, ուր տեղ քարոզութեամբ և սքանչելեօք շատերը քրիստոնեայ ընելէն ետքը, երբ Թադաւորին քոյրն ալ քրիստոնեայ եղաւ, Թադաւորը բռնեց զԱրդուղիմէոս և բոլոր նորադարձները, և պէտպէս տանջանքներով նահատակեց։

Դ. Իսկ Զեբեդոս, որ և Թադէոս Յակոբեան, ըստ ոմանց Յուդա Թադէոս եղբայր Տեառն և Յակոբայ արդարոյ՝ երկոտասան առաքեալներէն մէկը, այն է՝ Յուդա առաքեալ, ինչպէս վերը ըսինք, ազգմամբ Ասորոյն Աբեսարանը Ասիոյ Հարաւային կողմերէն քարոզելով՝ Պարսկաստանէն Հայաստան կը մտնէ և այն տեղի հաւատացեալները կը հաստատէ քրիստոսական հաւատոյ մէջ, զոր առաքեալներէն առած էին. և ետքը կը նահատակուի Յոմի քաղաքը՝ ինչպէս ըսինք։

Թադէոս առաքելոյ բոլոր այս քարոզութեան ժամանակները՝ իրեն հետ գործակից էր և Սիմոն Կանանացի առաքեալը, որոնք հեթանոսներն ևս դարձընելով՝ հաւատացելոց թիւը կը շատցընէին, եկեղեցիներ կը շինէին, և ամէն տեղ եպիսկոպոս կը ձեռնադրէին։

Ահա այս չորս Առաքեալները եղան Հայոց ազգիս քրիստոնական հաւատոյ նախկին քարոզիչները, Հայաստանեայց եկեղեցւոյ նախկին Լուսաւորիչները. և ասոնք Հայաստանու մէջ ամէն տեղ եկեղեցի հաստատելով, անոնց կառավարիչ կարգեցին իրենց աշակերտներէն հոմիւ բանաւոր հօտին. և իրենց հոգևոր իշխանութեանցն ու առաքելական քարոզութեանցը յաջորդ և փոխանորդ Քրիստոսի. որոնց յաջորդութիւնը շարունակ և անընդմիջաբար իջաւ

մինչև Գրիգոր Լուսաւորիչ, և այս յաջորդութիւն-ները եկեղեցական իշխանութեան՝ սկսան և շարունակեցան Հայաստանու առաքելական այս ջրոս Աթոռներուն մէջ, Աղուանից, Անդեսիոյ, Կապադովկացւոց Կեսարիոյ, և Հեր և Օրևանդ գաւառներուն։

Ա. Անդրէ առաքեալ աշակերտ Թադէոսի 1. անոր հետ եկաւ Հայաստան և իւր վարդապետէն եպիսկոպոս ձեռնադրուելով, գնաց Աղուանից աշխարհը Ուտի գաւառը, որ Հայաստանին Արևելքը կ'ինայ։ ու զամէնքը դարձուց քրիստոնէութեան, և եկեղեցի շինեց Գետ աւանին մէջ, ուր և քարկոծմամբ նահատակեցաւ, յամս 52—70։

Օ. Անդէ եպիսկոպոս խոյրտարար, որ առաջինն եղաւ Թադէոսի աշակերտներէն Անդեսիոյ մէջ, և եպիսկոպոս ձեռնադրուելով անկէ, անոր առաքելական իշխանութեանը յաջորդ եղաւ Մինջագետաց, Աղուոց, Մարաց և Պարսից երկիրները։ Աբգարու մեռնելէն ետքը՝ հաւատացելոց հետ հալածանք կրելով, անոր որդւոց հրամանաւը նահատակեցաւ Անդեսիա քաղաքը, յամս 33—37։

Ի. Սոսթէնէս աշակերտ Թադէոսի, որ անոր հետ Հայաստան եկած և անկէ եպիսկոպոս եղած էր, իւր վարդապետէն բաժնուելով մնաց Հայաստանի մէջ, քարոզեց Սիւնեաց աշխարհը և անդ նահատակեցաւ, յամս 60—80։

Ը. Օտքարիա՝ նոյնպէս Թադէոս առաքելոյ աշակերտներէն, ինչպէս վերը ըսինք, անոր հետ եկաւ Հայաստան, ու եպիսկոպոսութիւն առնելով իւր

---

1 Պատմիչներէն ոմանք կ'ըսեն, թէ Եղիշէն իւր վարդապետէն չառաւ եպիսկոպոսութիւնը, այլ 'ի Յակոբայ Տեառնեղբօրէն։ ըստ որում, կ'ըսեն թէ՝ Թադէոսի վախճանէն ետքը Երուսաղէմ գնաց, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և Հայաստան դարձաւ։ բայց ոմանք ալ կ'ըսեն թէ՝ Թադէոսէն առաւ եպիսկոպոսութիւնը, և անոր հրամանաւը գնաց Աղուանս։ ինչպէս Յովսէփ Ջուղայեցի կ'ըսէ։ (Սոսրագրութիւն Շահխաթունեան։ ա։ հատոր։ երես 145)։

վարդապետէն Շաւարշան քաղաքը, անոր տեղը փոխանորդ կարգեցաւ. ուր տեղ և տաճարիս տարիէն եռքը նահատակեցաւ Հայոց Բ. Գրուանդ Թագաւորէն, յամի Տեառն 76։

Թ. Թէոփիլէ Անտիոքացի՝ Թադէոս առաքելոյ Յետին աշակերտներէն, որ Կեսարիա քարոզած ատենը անոր հետն էր. այն տեղի հաւատացելոց հաւատարիմ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, իւր վարդապետին յաջորդ Կեսարիոյ եկեղեցւոյն[1]. և մեռաւ յամի Տեառն 60։ Որոր իշխանութեանը յաջորդեց յետոյ Ղևոնդ, որ ձեռնադրեց զԳրիգոր Լուսաւորիչը, ինչպէս իւր տեղը կ'ըսեմք։

Ժ. Օեմենտոս, Օտքարիային յաջորդ եղաւ՝ երկրորդ եպիսկոպոս Արտազ գաւառին Հայաստանու հարաւային կողմերը[2]. և Դրիստոսի եկեղեցին հովուեց ութը տարի, և ետքը Գրուազ քրմապետին հրամանաւը նահատակեցաւ, յամի Տեառն 74։

ԺԱ. Կոմի, որ Բարդուղիմէոսին աշակերտ եղաւ Պարսկաստան Խորասան քաղաքը. և անոր հետ դարձան Գողթան գաւառը՝ Ադուլիս. ուր եպիսկոպոս ձեռնադրուեցաւ նոյն վիճակին վերայ իւր վարդապետէն, և Հայաստանու այս Արևելեան կողմը առաքելական պաշտօնին փոխանորդ ըլլալով, հաւատացեալները շատցուց և շատ սքանչելիքներ ըրաւ, և նոյն Ադուլիս աւանին մէջ մեռաւ, Դրիստոսի 88 թուականին։

ԺԲ. Տուբիաս[3], յաջորդ Կեսարիոյ եկեղեցւոյ,

---

1 Կարծիք կ'ընեն, թէ առ սա գրեաց Ղուկաս զԱւետարանն և զԳործս Առաքելոց։

2 Հայս Օեմենտոսը սպաննեց Սանատրկոյ դահիճը՝ սխալմամբ, (որ իւր եղբայրն էր), երբ զԹադէոս առաքեալը կը նահատակէր. զոր տեսնելով Ս. Առաքեալը, աղօթքով ողջացուց զՕեմենտոսը. որ իսկոյն հաւատաց անոր քարոզութեանը և քրիստոնեայ եղաւ. և յետոյ Արտազ գաւառի աթոռը յաջորդեց։

3 Սա էր Տոմբիթիոյ ազգէն, որ Բաբելոնէն եկաւ Եկբատան քաղաքը. և ասոր որդին սոյն Տուբիասն էր, որ եկաւ Եդեսիա, և Թադէոս առաքեալը հոն եկած ժամանակը իւր տունը առաւ. և ինքը եպիսկոպոս եղաւ նոյն Եդեսիոյ եկեղեցւոյն։

Ադդէէն եռքը եպիսկոպոս եղաւ Հայաստանու Հայ-
բաւային կողմը, որ Դոմետիանոս կայսեր օրովը շատ
տանջանք կրելով, նահատակեցաւ Քրիստոսի 80
թուականին։

Ժ.Դ. Բաբելաս եպիսկոպոս՝ Կոմսին յաջորդ եղաւ
Գողթան գաւառը, որ Տուբխասայ ընկերը ըլլալով,
Բարդուղիմէոս առաքեալը գրած էր անոր հետ հո-
վիւ իրեն վիճակի հաւատացելոց վերայ։ Սա իրեն
այս վիճակին մէջ եղած հեթանոսական աղանդը վեր-
ցուց, ինչպէս կը գրէ Սիւնեաց պատմագիրը, յամի
Տեառն 90։

Ժ.Դ. Բարսումա եպիսկոպոս Անդեսիա քաղաքի,
փոխանորդ Թադէոսի առաքելոյն՝ 'ի յաջորդութե-
նէն Թէոփիլոսի[1] Տրայիանոս կայսեր օրովը, եղաւ
հովիւ Անդեսիոյ եկեղեցւոյն, կը քարոզէր և կը դար-
ձընէր անհաւատներէն շատերը, և այն պաշտօնին
մէջ ծերութե հասնելով, մեռաւ յամի Տեառն 115։

Նոր յաջորդեցին ուրիշները և հովուեցին անընդ-
հատ Անդեսիոյ եկեղեցին մինչև Գրիգոր Լուսաւորիչ,
որ ատեն բոլոր Հայոց ազգը դարձան քրիստոնէու-
թեան, ինչպէս կը վկայէ և Հ. Մկրտիչ Ասդերեանը
Վարք Սրբոցի մէջ, հատոր Ժ. երես 144։

Ժ.Ե. Կոն եպիսկոպոս Անդեսիոյ՝ յաջորդեց նոյն
քաղաքի եկեղեցական իշխանութեանն ու քրիստո-
նէից տեսչութեանը Դիոկղետիանոսի օրովը, երբ որ
նոյն քաղաքին դատաւոր էր Մուսխիանոս անուն
մարդ մը, որուն ժամանակը Դիոկղետիանոս հալածեց
զքրիստոնեաները իւր բոլոր տէրութենէն, ուստի
կ'երևի որ Կոնի իշխանութիւնը եղաւ Քրիստոսի 291
թուականէն մինչև 295ը։

Ժ.Զ. Մխիթար Վանահայր, փոխանորդ եղաւ Սիւ-

---

1 Բարսումա՝ Թէոփիլոսի յաջորդութենէն ըլլալով, երկուքին մէջը 55 տարի միջոց կայ, կարելի է որ՝ Բարսումայէն առաջ ուրիշ յաջորդ մը ևս եղած ըլլայ Թէոփիլոսին։

նեաց երկրի եկեղեցւոյ առաքելական յաջորդութեանը՝ Ստեփէի աթոռոյն, յամի Տեառն 150։ Ասոր համար կը վկայէ Ստեփաննոս Օրբէլեան Սիւնեաց պատմութեանը մէջ. որ Նախավկային վանքը վանահայր եղած է 400 տարի յառաջ քան զՀայոց Թուականը. և մարմինը թաղուած է փայտէ անտուկով եկեղեցւոյն քով՝ վերապին մէջ։

ԺԱ. Օրթիկոս եղաւ եպիսկոպոս Փոքր Հայաստանի Կոմանայ անուն քրիստոնէից քաղաքը՝ Ադեսիոյ վիճակին մէջ. Մարկոս Աւրելիոս կայսեր ժամանակը՝ աւելի հռչակուած էր, եւ թղթով եւ բանիւ կը մաքառէր Մոնտանա անուն հերձուածողին դէմ. որ և յետոյ Սեւերոս կայսեր հալածանաց օրովը նահատակեցաւ յամն 160–190։

ԺԲ. Աղեքսանդրոս եպիսկոպոս Դամիրք նահանգի Փոքր Հայաստանու մէջ. որ քիչ ատեն Քրիստոսի եկեղեցին կառավարելէն ետքը՝ Երուսաղէմ գնաց, Նարկեսոս եպիսկոպոսի ծերութեանը համար՝ անոր տեղը եկեղեցւոյ տեսչութիւնը կը վարէր, ինչպէս որ Աստուծմէ տեսիլք եղաւ իրեն, Քրիստոսի 210–220 Թուականին (Եւսեբիոս, Դպրութիւն Ը. 25)։

ԺԳ. Մէհրուժան եպիսկոպոս Կեռարիոյ Հայոց, Տրդատայ հօր՝ Մեծին Խոսրովու ժամանակը Քրիստոսի եկեղեցին հալուեց առաքելական իշխանութիւն. սա ևս նահատակեցաւ Խոսրովու հրամանաւը շատ քրիստոնէից հետ մէկտեղ, ինչ ատեն Դեկոս և Վաղերիոս բռնաւոր կայսրները կը հալածէին ընդհանուր քրիստոնեաները, Քրիստոսի 257 Թուականին։

Ի. Ակակիոս եպիսկոպոս Տիգրանակերտու Հայոց քաղաքի, որ նոյն Դեկոսի օրովը՝ երբ որ համարձակ քրիստոնէութիւնը կը քարոզէր, Մարկիանոս դատաւորը բանտ դրաւ. բայց յետոյ Դեկոսի հրամանաւը արձակեցաւ, և մեռաւ յամն 250–280։

ԻԱ. Աբքեղայոս եպիսկոպոս 'ի Միջագետս Հայոց,

զոր կը յիշեն այլազգի մատենագիրք ; նոյն թուական-
ներու մէջ, այն է 260–280 · (Տե՛ս 'ի Կրօնագիտու-
թիւն Հայ· երես 99)·

ԻԿ· Պերմելիանոս կամ Փիրմելիանոս Կեսարիոյ
եկեղեցւոյն ապաստաւոր էր, և անոր եպիսկոպոսը է-
ղաւ· և Լրոգինէսին աշակերտած էր յամի 251 1։ Սա
էր՝ որուն համար Խորենացին կը վկայէ թէ Մ'եծին
Խոսրովու գործքերը պատմագրած էր, և ինքն ալ
նոյն ժամանակի պատմութիւնները անկէ կ'առնու,
և սա բերաւ 'ի Կեսարիա Յովհաննու Կարապետի
նշխարքը· ուսկից Ղ.ևոնդէոս՝ ասոր յաջորդը, Գրի-
գոր Լուսաւորչին պարդև տուաւ զանոնք։ Պերմե-
լիանոս շատ անգամ Նիրուսաղէմի կողմերը եղած ժո-
ղովքները գնաց Պօղոս Շամշատացի հերձուածողին
դէմ, ու կ'արհամարհէր անոր գրուածքները, ինչպէս
Նւսեբիոս կը վկայէ (Եկեղեցական պատմ· գլ· ԼԸ)։
Շատ հալածանքներ կրեց, և մեռաւ յամի 272։

ԻԳ· Կղեմէոս եպիսկոպոս՝ եղաւ յաջորդ Պերմե-
լիանոսի՝ Կեսարիոյ վիճակին· շատ հալածանք կրեց
Նէրելիանոս կայսեր օրովը, և յետոյ Լուսիաս դա-
տաւորէն տանջանք կրելով՝ մեռաւ յամի 287։

ԻԴ· Վլասիոս եպիսկոպոս եղաւ Սեբաստիոյ, որ
անոր սահմանը ծնած էր Փոքր Հայաստանու մէջ։
Նոյն վիճակի քրիստոնէական եկեղեցւոյ միջնորդելովը՝
եպիսկոպոս՝ ձեռնադրուելով, հաւատացեալները կը
կառավարէր և հաւատոյ համար նահատակուողները
կը յորդորէր, ինչպէս Նւստռատիոսեան Սուրբերը·
Յետոյ ինքն ևս նահատակեցաւ Ադրիկողայոս դատա-
ւորին հրամանաւը՝ Սեբաստիայէն դուրս, յամի 315։

---

1 Ասոր յաջորդութեան թուականէն կ'երևի, որ այս Պերմելիանոսն
ալ Մէհրուժանին հետ մէկ ժամանակի մէջ եղած են Կեսարիոյ մէջ·
ուստի կը հետևի որ երկու եպիսկոպոս կային նոյն վիճակին մէջ· ըստ ո-
րում այս Պերմելիանոսը եպիսկոպոս կ'ըլլայ Կեսարիոյ՝ Քրիստոսի 251
թուականին· իսկ Մէհրուժան սոյն եկեղեցւոյ եպիսկոպոսը կը վախճանի
257 թուին։

Այսր օրովը Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեռնադրուած էր տասներկու տարի յառաջ, և իրեն առաքելական հովուապետական իշխանութիւնը հաստատեց Վաղարշապատ քաղաքին մէջ Հայաստանեայց մայր եկեղեցւոյ Աթոռը, ինչպէս վերը կը տեսնուի։

Ի՜. Աթանագինէ եպիսկոպոս՝ Գրիգոր Լուսաւորչի ամուսնոյ եղբայրը, որ քրիստոնեայ ծնողաց զաւակ ըլլալով, գովելի և բարի ու զօրաւոր վարք ունեցաւ. որոյ պատճառաւ Սեբաստիոյ եպիսկոպոսը իւր քովը առնելով, գործակից ու ժողովրդոցը տեսուչ ըրաւ. յետոյ Բարբարոսաց երկիրը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, ուր գերի եղած ժողովրդոց հետ գնացած էր, դարձաւ իւր երկիրը. և քսան տարիի չափ Քրիստոսի եկեղեցին հովուելէն ետքը, Աղրիկոյ դատաւորէն այրուելով կը նահատակուի յամս 285–290։

Ի՜Օ. Ղևոնդէոս եպիսկոպոս Կեսարիոյ, որ ինչպէս կ'երևի ժամանակագրութեան ընթացքէն, Կղեմէոսէն ետքը անընդմիջաբար կը յաջորդէ Կեսարիոյ եպիսկոպոսական աթոռը, և զնոյնը կը կառավարէ առաքելական իշխանութեամբ մինչև Նիկիոյ ժողովքին ժամանակները, շատ վիշտ կրելով քրիստոնէից մեծ հալածանաց ժամանակները։

Այս է, որ Թադէոս առաքելոյ առաքելական իշխանութեանը յաջորդ ըլլալով Կեսարիոյ եկեղեցւոյն՝, Քրիստոսի 302 թուականին՝ զՍ. Գրիգոր Լուսաւորիչը եպիսկոպոս ձեռնադրեց, յաջորդ նոյն առաքելական իշխանութեան և ընդհանրական փոխանորդ Հայաստանեայց քրիստոսական եկեղեցւոյն, որ Թադէոս մեր նախկին Լուսաւորչի նշխարքներէն՝ մեզի պարգևեցաւ զաւակ կենդանի։

Բաց 'ի այս ամէն վերը գրուած եպիսկոպոսներէն՝ որոնք Հայաստանեայց Քրիստոսի եկեղեցին կառավարեցին, ուրիշ եպիսկոպոսներ և աշակերտներ շատ

Եղան Հայաստանու մէջ Լուսաւորչէն յառաջ, բայց զանոնք միայն կարդեցինք հոս, որոնք առաքելական իշխանութիւնը փոխանորդութեամբ մէկմէկու յաջորդելով՝ շարունակ և անընդհատ հատուցին Թադէոս առաքեալէն մինչև Գրիգոր Լուսաւորիչ։

Ահա յայտնի կը տեսնուի այս առաքելական յաջորդութենէն, որ ջրս Առաքեալները միանգամայն եկած են Հայաստան աշխարհը. և խորհրդաւոր նմանութեամբ Հայաստանու մէջ բղխած Դրախտին ջրս գետերուն նման՝ նոյն Հայաստանու ջրս կողմերը քրիստոնէութիւնը ոռոգեցին. Հայաստանեայց քրիստոնական եկեղեցւոյ առաքելական ջրս աթոռները հաստատեցին, Սիւնիք, Աղեսիա, Կեսարիա և Արտազ գաւառները՝ իրենց փոխանորդ եպիսկոպոսներ ձեռնադրեցին. որոնք նոյն ձեռնադրութիւնը իրենց յաջորդացը տալով, իրենց քարոզութեամբը բոլոր Հայաստան Աւետարանի ճշմարտութիւնը մատակարարեցին, և եկեղեցական իշխանութիւնը մէկ մէկէ առնելով՝ իջուցին մինչև Գրիգոր Լուսաւորիչ։

Եւ ինչ զարմանք որ Դրախտէն ելած ջրս գետերը Հայաստանու մէջ այս ջրս առաքելական աթոռոց օրինակն ըլլային, և նոյն ջրս աթոռները՝ ջրս գետերուն իսկութիւնը. վասն զի ինչպէս գետերը ամբողջ Հայաստանը կ'ոռոգեն, այսպէս նոյն ջրս աթոռները բոլոր Հայաստան բղխեցաւ քրիստոնէութեան և աստուածգիտութեան շնորհաց աղբիւրը. կարծես թէ՝ ջրս Աւետարանիչքը եղան Հայաստան աշխարհի ջրս կողմերը։

Ահա Քրիստոսի Առաքելոց քարոզութիւնը Հայաստանու մէջ այսքան արդիւնք ունեցաւ. որով բոլոր աշխարհը քրիստոնէութեամբ լուսաւորուեցաւ անոնց օրովը և անոնց յաջորդներուն ձեռքովը, և թէպէտ թագաւորական իշխանութիւնը այս փոփոխման մէջ երկար ատեն չտևելով, բռնութիւնը զօրացուց հա-

տարակոց հաւատացելոց վերայ, բայց անոր ալ այն անձինքը միայն հետևեցան, որոնք աւելի հակամէտ էին քաղաքական իշխանութեանը. կամ որոնք նոյն իշխանութեան ձեռքով մեծութեան հատած էին. բայց այսքան զօրութեանը դէմ ևս՝ քրիստոնէութիւնը այնպէս բոլոր Հայաստան տարածուեցաւ, և քրիստոնեայ եկեղեցին ընդարձակուեցաւ Հայաստանու ծոցին մէջ եպիսկոպոսներուն անընդհատ յաջորդութեամբը, մինչև որ Լուսաւորչի քարոզութեամբը իսպառ ապուռ բարձաւ կռապաշտութիւնը, որ անոնց առաքելական աթոռը յաջորդեց։

Ուրդ՝ ինչպէս տեսանք, Գրիգոր Լուսաւորչէն 300 տարի յառաջ Հայոց եկեղեցին ընդուներ է քրիստոնէութիւնը. և մինչև Լուսաւորիչ, առաքելական յաջորդք և Քրիստոսի փոխանորդք՝ այսքան եպիսկոպոսներ անցան առաքելոց պաշտօնին վերայ նոյն եկեղեցին կառավարելու. և ինչպէս բան է, որ և ոչ մէկը Պետրոսի կամ անոր յաջորդաց հրամանաւը եպիսկոպոս չեղաւ. կամ անոնց իշխանութեամբը նոյն եկեղեցին հովուելու հրամանը չունեցաւ. այլ իրենք մէկ մէկէ առնելով, իբրև թէ Թադէոս առաքեալէն առին՝ Գրիգոր Լուսաւորչին աւանդեցին։

Եւ այս եպիսկոպոսները իրենց քարոզութեանց մէջ իբրև Քրիստոսէ խրկուած նոյն Հայոց եկեղեցին կառավարելու, Քրիստոսի հաւատքը կ'ուսուցանէին և նոյնը կը խոստովանէին. ուստի և այս եկեղեցական կառավարութեանը մէջ և ոչ մէկէ մը կախումն չունէին, և ոչ մէկու մը հրամանը չէին պաշտեր իրենց առաքելական պաշտօնին հետ. այլ որ ինչ վարդապետութիւն իրենց նախորդներէն առած էին, նոյնը ևս 'ի գործ կը դնէին։

Ուստի թէ որ Պետրոս առաքեալը գլուխ էր ամէն եկեղեցւոյ և անոր հրամանաւը կը կառավարուէին միւս առաքելական եկեղեցիքը, պէտք էր որ Հայոցը

ևս անոր կառավարութեան կամ հրամանին տակն ըլլար. և հետևաբար, պէտք էր որ Թադէոս առաքելոյ այս յաջորդները Պետրոսի յաջորդաց հրամանաւը եկեղեցին կառավարէին, և զանիկայ հովուելու կարգն ու կանոնը անոնցմէ առնէին։

Բայց ասոնց և ոչ մէկը չերևցաւ Թադէոս առաքելոյ յաջորդաց եկեղեցական կառավարութեանը մէջ. ոչ Պետրոսի հրամանաւ Ուռաքեալները Հայաստան եկան, և ոչ անոնց յաջորդները Պետրոսի յաջորդաց հրամանաւը Հայոց եկեղեցին կառավարեցին. ուստի՝ ոչ թէ Պետրոսի յաջորդաց, այլև ոչ իսկ Պետրոսի անունը յիշած կամ անոր իշխանութիւնը ծանուցած չեն Հայոց եկեղեցւոյ կառավարութեանը վերայ։

Թադէոս և Բարդուղիմէոս իրենց հետևանքներովը մէկտեղ, որ ընդհանուր Հայաստան իրենց քարոզութեամբը կերպարանափոխ ըրին և կռապաշտութեան խաւարին վերայ աստուածգիտութեան լոյսը ծագեցին, երբէք չքարոզեցին Պետրոսի գլխաւորութիւնը կամ եկեղեցական իշխանութիւնը անոր ձեռքն ըլլալը, որպէս զի իրեն յաջորդներն ալ նոյն օրինակն ունենային։

Պէտք չէր որ Թագաւորին ծառաները իրենց Թագաւորը վերնալէն ետքը՝ անոր փոխանորդի միապետական իշխանութիւնը հպատակաց յայտնէին։

Հայաստան եկող Ուռաքեալները Պետրոսի իշխանութիւնը չխոստովանեցան. ըսել է որ, զանիկայ իշխան չէին ճանչնար. և հետևաբար անոնց յաջորդներն ալ չճանչցան. վասն որոյ և չխօսեցան երբէք։

Ուստի Հայաստանեայց եկեղեցին ալ Պետրոսի գլխաւորութիւնը այնպէս կը ճանչնայ, ինչպէս ճանչցած են զանիկայ հիմնադրող առաքեալները, և անոնց յաջորդող եկեղեցւոյ հովուապետները. ինչպէս վերը ըսինք։ Եւ ինչպէս Հռովմայ եկեղեցին զպասը

կը ճանչնայ իրեն գլուխ և աղբիւր իրաւաբանութիւն ։ այնպէս և ս Հայոց եկեղեցին իրեն գլուխ կը ճանչնայ իւր Եպիսկոպոսապետները , աղբիւր իրաւաբանութեան իւր եկեղեցական իշխանութեանը մէջ , կապող և արձակող զեկեղեցւոյ անդամները , փոխանորդ Քրիստոսի և յաջորդ Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոցն մեր նախկին Լուսաւորչաց ։

Մինչև հիմա ըսածներէս յայտնի եղաւ որ , Հայաստանեայց եկեղեցւոյ քրիստոնէութեան սկիզբէն մինչև Գրիգոր Լուսաւորիչ , այսինքն 300 տարի , եկեղեցական իշխանութիւնը զՊետրոս առաքեալը գլուխ չճանչցաւ , և ոչ երբէք անոր իրաւունքը Պետրոսի յաջորդաց հրամանին տակ էղաւ ։ Թող զայս , Ս. Գրքէն ալ մէկ վկայութիւն մը չկայ Պետրոսի գլխաւորութիւնը հաստատող՝ ուղղափառ եկեղեցւոյ ընդհանրութեանը վերայ . որով գոնէ անոր յաջորդն ալ քրիստոնէական եկեղեցւոյ կառավարութեան իրաւաբանութիւնը ունենար . բայց ընդհակառակն՝ անոր հաւասարիշխանութեանը վերայ միւս առաքելոց հետ Քրիստոսի եկեղեցին կառավարելու , նոյն Ս. Գրոց մէջ շատ տեղ կայ , որ այս տեղս կը համառօտեմք , աւելի հաստատելու պապականոց սխալ դրութիւնը՝ Պետրոս առաքելոյ գլխաւորութիւնը վերայ ։

Պօղոս առաքեալ երբ որ եկեղեցւոյ գլխաւորները կը թուէ , զՊետրոս առաքեալն ևս իրենց հետ հաւասարապէս մէկտեղ կը յիշէ . “Որս ետ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են , նախ զառաքեալս , երկրորդ զմարգարէս”, և այլն . ուստի յայտնի կը տեսնուի , թէ միւս առաքեալները իրենց գլուխ չէին ճանչնար ամենևին զՊետրոս առաքեալը ։

Ներն Պօղոս առաքեալը իւր թղթոց մէջ քանի տեղ եկեղեցւոյ գլուխ՝ զՔրիստոս կը կոչէ . բայց Պետրոսի գլխաւորութիւնը երբէք մէկ տեղ ալ չյիշատակեր . այլ անոր հաւասարիշխանութիւնը յայտնի կը ցուցընէ

առաւէլ լապէս Հռովմայէցւոց Թղթոյն մէջ. (ԺԲ. 5.) "Նազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս. այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք". որով Պետրոս առաքեալը միւս առաքելոց հետ, և բոլորը 'ի միասին ընդհանուր քրիստոնէից հետ՝ մի մարմին կ'ըլլան Քրիստոսի։

Քրիստոս ինքը՝ և ս առաւել առաքելոց հաւասարութիւնը ցոյց տուաւ, քան թէ Պետրոսի գլխաւորութիւնը. երբ որ Յեբեթիայի որդիքը կը վիճէին մեծութեան համար, այդպիսի մեծութիւն իշխանք աշխարհաց խնդրեն. այլ ոչ եղիցի այնպէս, ըսաւ, և 'ի ձերում միջի. որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ամենեցուն ծառայ։

Թէ որ զՊետրոսը գլուխ կարգած ըլլար, հարկաւ Քրիստոս ատ պէտք էր յայտնել. և ոչ ըսել թէ, "Յայդ իշխանք աշխարհաց խնդրեն"։ Թոռղ թէ և առաքեալները անգամ Պետրոսի գլխաւորութեանը համար կարծիք չունէին. թէ որ գլխաւոր ըլլար, ալ ինչ հակառակութիւն պէտք էր ըլլալ իրարու հետ, զոր Աւետարանիչը կը գրէ. "Լուեալ տասանցն՝ բարկացան 'ի վերայ երկուց եղբարցն. . . . վիճէին ընդ միմեանս 'ի ճանապարհին՝ թէ ո՞վ իցէ մեծ. . . եղև հակառակութիւն 'ի մէջ նոցա՝ թէ ո՞վ 'ի նոցանէ համարիցի մեծ. . ."։

Լաւի Պետրոս չէ՛ թէ միւս առաքելոց մէջ մեծ էր կամ գլխաւոր, այլ անոնք բոլորը մէկտեղ այդ փառասէր աշխարհային ցանկութեանը համար, նախատինք ալ լսեցին 'ի Քրիստոսէ. "Այլ (դուք) մի՛ կոչ՛ցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է. և մեծն 'ի ձէնջ՝ եղիցի ձեր սպասաւոր". (Մատթ. իգ. 10, 11)։ "Մի է ձեր ուսուցիչ. և ամենեքին դուք եղբարք էք". (Մատթ. իգ. 8)։

Առաքելոց հաւասարութիւնը առաւելևս յայտնի է Քրիստոսի եկեղեցւոյ կառավարութեանը մէջ Պօ-

ղոս առաքելոյ ըսածէն , որ զՊետրոսը Յանդիմանեց Անտիոք քաղաքը · "Յորժամ եկն Կեփաս Անտիոք , ընդդէմ դարձայ նորա , քանզի գոգ իբրև ստգտեալ ինն էր . . . և կեղծաւորեցան ընդ նմա և այլ Հրէայքն · · · իբրև տեսի թէ ոչ ուղիղ գնան 'ի ճշմարտութիւն Աւետարանին , ասեմ ցԿեփաս առաջի ամենեցուն . Եթէ դու որ Հրէայդ ես , հեթանոսաբար և ոչ հրէաբար կեաս , զինչդ ստիպես հեթանոսաց լինել հրէարէն". (Գաղատ · բ · 11–15) ։

Իսկ թէ Պետրոս առաքեալը հաւասարիշխան էր միւս առաքելոց հետ , ինքն ալ կը վկայէ , ինքզինքը անոնց պաշտօնակից կոչելով · "Ծերիցուն այսուհետև աղաչեմ իբրև երիցակից և վկայս չարչարանացն Քրիստոսի" ։

Այսքան վկայութենց մէջ չտեսնուիր որ Քրիստոս զՊետրոսը երբէք գլուխ և իշխան կարգած ըլլայ միւս առաքելոց վերայ · և ոչ երբէք առաքեալները վկայեցին կամ գրեցին , թէ Պետրոս իրենց գլուխ եղած ըլլայ · ըստ որում միշտ Քրիստոս հաւասարութիւն կը պատուիրէր առաքելոց մէջ · չէր ուզեր որ իրմէ ուրիշ գլուխ մը ճանչնան · և թէ՝ երբոր առաքեալներն ևս կ'ուզէին իմանալ թէ՝ ո՞վ իցէ մեծ , այն ատենն ալ Յանդիմանեց զանոնք , "Բայց դուք մի՛ զոք կոչէք վարդապետ", և այլն ։ Դարձեալ անոնց կատարեալ հաւասարիշխանութիւնը ցուցընելու համար , ըսաւ · "Գացէք և դուք յերկոտասան աթոռս , դատել զերկոտասան ազգս Իսրայէլի" · (Մատթ · ԺԹ · 28) ։

Ուստի այն ևս նայինք , որ պատկան արքանեակները զՊետրոս առաքեալը գլուխ կարգելէն ետքը , "Դու ես վէմ" ըսելովը , անոր իշխանութիւն ալ կու տան Քրիստոսի ընդհանուր եկեղեցին կառավարելու , յաջորդ խօսքովը · "Եւ տայց քեզ զփականս արքայութեան երկնից" · որով ցոյց կու տան թէ , միւս առաքեալները անոր հրամանին ներքևն են · և

անոնց նկատմամբ՝ ընդհանուր ուղղափառ եկեղեցին և Պետրոս առաքելոյ յաջորդները միայն իրաւունք ունին կապելու և արձակելու։

Բայց թէ որ ճշմարտութեամբ խօսին, կրնան ցոյց տալ Աւետարանին մէջ, թէ Քրիստոս Տէրն մեր՝ որ Պետրոսի խոստացաւ փականքն արքայութեան երկնից, այսինքն եկեղեցւոյ կապելոյ և արձակելոյ իշխանութիւնը, այս ապառնի խոստմունքը իրօք ալ Պետրոսի տուա։

Արդարև տուաւ նոյն եկեղեցական իշխանութիւնը և կատարեց Քրիստոս իւր խոստմունքը. բայց ոչ Պետրոսի, այլ ամենայն առաքելոց. երբ որ եկաւ վերնատունը և զառաքեալսն պատրաստեց յուղարկելու քարոզութեան յաշխարհ ամենայն, "Փչեաց Յիսուս յառաքեալսն և ասէ. Առէք Հոգի Սուրբ. (այսինքն փականքն արքայութեան, որ է իշխանութի կապելոյ և արձակելոյ) եթէ ումեք թողուցուք՝ թողեալ լիցի. և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի"։

Պետրոսի խոստացաւ այս իշխանութիւնը, բայց արդ բոլոր առաքելոց 'ի միասին տուաւ. որովհետև միայն զՊետրոս առաքեալ գլուխ չկարգեց եկեղեցւոյ, այլ և զբոլոր առաքեալները հաւասարապատիւ և հաւասարաստիճան իշխանք եկեղեցւոյ դրաւ, և անոր կառավարիչ։

Պատճառը ի՞նչ էր, որ Պետրոսի կը խոստանայ, և 'յետոյ բոլոր առաքելոց կու տայ։— Որովհետև Պետրոս ըստ հաւատոյ առաքելոցն զՔրիստոս դաւանեց, ուստի և այս իշխանութեան խոստմունքը, որ 'ի դէմս Պետրոսի ըրած էր, բոլոր առաքելոց խոստացած էր Քրիստոս. վասն որոյ և վերնատանը մէջ "Փչեաց Յիսուս յառաքեալսն (և ոչ առ Պետրոս միայն) և ասէ. Առէք Հոգի Սուրբ", և այլն։

Ասի կը հետևի որ, եկեղեցւոյ գլխաւորութիւնն ալ բոլոր առաքելոց տուաւ Քրիստոս։ Զոր պատա-

կանք Պետրոսի տուած կը համարին՝ "Դու ես վէմ" ըսելուլը, որ յետագայ վկայութիւններէն աւելի յայտնի կ'ելլայ։

Ուստի այսպէս առաքեալները այս իշխանութիւնը 'ի Քրիստոսէ առնելէն ետքը, ամէն տեղ քարոզութեան ատեն եկեղեցւոյ կառավարութեանը մէջ միշտ հաւատարմութիւնն 'ի գործ կը դնէին, բոլորը մեկտեղ եկեղեցական գործոց վճիռ կու տային, և ոչ թէ անհատի մը նախագահութեամբ։ Ինչպէս են հետևեալ եկեղեցական գործքերը։

Ա. Երբ որ Յուդայի տեղը զՄատաթիայն յառաքելութիւն կ'ընտրէին. "Կացուցին, կ'ըսէ, երկուս . . . . . և ետուն վիճակս նոցա, և ել վիճակն Մատաթեայ, և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն". (Գործ. ա. 23—26)։

Բ. Երբ որ եօթն սարկաւագները կ'ընտրէին որբերը և այրիները հոգալու. "Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն աշակերտացն, և ասեն. Ո՛չ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս . . . . և հաճոյ թուեցաւ առաջի ամենայն բազմութեանն, և ընտրեցին (զարս եօթն). զորս կացուցին առաջի առաքելոց, և աղօթս արարեալ, եդին 'ի վերայ նոցա զձեռս". (Գործ. զ. 2—7)։

Գ. Երբ որ քրիստոնէից թլփատութեան և անթլփատութեան համար վէճ եղաւ նորադարձ եկեղեցւոյ մէջ, Պետրոս չկրցաւ վճիռ տալ միայն, այլ "Ժողովեցան առաքեալքն և երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ . . . յոտն եկաց Պետրոս և ասէ ցնոսա, արք՝ եղբարք . . . ընդէր փորձէք զԱստուած դնել զլուծ 'ի վերայ պարանոցի աշակերտացն . . . պատասխանի ետ Յակոբոս, և ասէ. Շմաւոն պատմեաց (մեզ) . . . վասն որոյ և ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ որք 'ի հեթանոսաց դառնան առ Աստուած . . . յայնժամ հաճոյ թուեցաւ առաքե-

ըսին և երիցանցն ամենայն եկեղեցեաւն. (ժողովոյ վճիռն ալ ոչ մէկուն անունովը տրուեցաւ, այլ ամենուն)։ Հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ և մեզ". (Գործ. ԺԵ. 6–29)։

Դ. Պօղոս առաքեալ յայտնապէս կը վկայէ առաքելական հաւատարիմութիւնը եկեղեցւոյ գործոյ կառավարութեան մէջ. "Իբրև գիտացին զշնորհսն որք տուեալ էին ինձ, Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս, որք կարծեալ սիւնքն էին, ձեռն ետուն հաւանութեան". (Գաղատ. Բ. 9)։

Թէ որ Պետրոս ըլլար գլուխ եկեղեցւոյ, Պօղոս աւելի գիտէր. ուստի զՅակոբոսը նախապատիւ չէր յիշեր. ուսկից կ'երևի որ այժմեան այդ գահասիրութեան ոգին ալ ամենևին չկար մէջերնին, որոյ հետամուտ եղողներուն՝ վայ տուաւ Քրիստոս։ "Սիրէք) զնախաթոռս 'ի ժողովուրդս, և զգահագլուխս յընթրիս". զոր և սպասաւորները Պետրոսի սեպհականելով, պապին համար կը պահանջեն այսօր ընդհանուր Եկեղեցւոյ գլխաւորութիւն մը աշխարհիս հոգւով. երբ Պօղոս առաքեալ չէ թէ այնպիսի գահասիրութիւն մը իւր ամբակցին կու տայ, այլ զՅակոբոսը անկէ նախադաս կը յիշատակէ։

Ե. Սրբոյ Առաքելոց ժողովը զՊետրոս և զՅովհաննէս իբրև հաւատարիմ պաշտօնեայ եկեղեցւոյ՝ Սամարիա կը յուղարկեն հաւատացելոց դարձին համար, անդանօր կը տեսնուի Պետրոսը ոչ իշխանաւոր, այլ սոսկ պաշտօնեայ մը առաքելոց ժողովոյ հրամանին ներքևը. "Իբրև լուան որք յԵրուսաղէմ առաքեալքն էին, թէ և 'ի Սամարիա ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս, որք իջեալք, կացին յաղօթս 'ի վերայ նոցա". (Գործ. Ը. 14, 15)։

Բոլոր այս եկեղեցական կառավարութենէն կ'երևի, որ Քրիստոս սահմաներ էր բոլոր առաքեալքը, որ

'ի միասին մէկ իշխանութեամբ կառավարեն զեկեղեցին, և ոչ թէ Յակոբոսը կամ Պետրոսը միայն իշխանաբար կառավարեն. երբէք այսպիսի անհատի մը իշխանութիւն չկար առաքելական եկեղեցւոյ կառավարութեանը մէջ, զոր և Քրիստոս Տէրն մեր սաստկապէս արգիլեց, ըսելով. "Իշխանութի բաժանեալ յանձն՝ կործանի"։ Եթէ պապականաց պահանջած առաքելապետութիւնն ու փոխանորդական իշխանութիւնը եղած ալ ըլլար եկեղեցւոյ մէջ, աւելի Յովհաննէս աւետարանչին կը վայելէր, որ Քրիստոսի սիրելի աշակերտն էր, և էապէս իրեն փոխանորդ կարգեց, խաչին վրայէն ըսելով իւր մօրը. "Կի՛ն դու, ահա՛ որդի քո"։ Ի վերայ այսր ամենայնի ոչ Յովհաննէս աւետարանիչ և ոչ իւր յաջորդները այսպիսի փոխանորդական իշխանութիւն մը չպահանջեցին և չեն պահանջեր։

Իսկ որովհետև պապականները Ս. Գրոց այսքան անհերքելի ճշմարտութիւնները կը ժխտեն, և Պետրոս առաքելոյն աշխարհական իշխանութե՞ ոգի կու տան քրիստոսական հոգևոր հօտին վերայ, ուրիշ մէկ վկայութիւն մը ևս ունին ծուռ մեկնութեամբ, որ է ասելն Քրիստոսի առ Պետրոս, "Արածեա՛ զոչխարս իմ". որով ընդհանրական եկեղեցւոյ 'ի հաւատոյն կառավարութեան տանձը Պետրոս առաքելոյն ձեռքը կը ջանան տալ 1։

---

1 Զարմանալի է որ պապականները, միայն Քրիստոսի առ Պետրոս առաքեալն զրուցած պատուաւոր խօսքերը յառաջ կը բերեն միշտ. զորոնք Տէրն մեր 'ի բժշկութիւն Պետրոսի քանի մը ապգտանելի գործոցը զրուցած է. ինչպէս կը տեսնուի Ս. Աւետարանին յետագայ վկայութիւններէն.

Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա (զՊետրոս), և ասէ. Թերահաւատ, ընդէր երկմտեցեր. (Մատթ. ԺԴ. 31)։

Եւ նա (Յիսուս) դարձեալ 'ի Պետրոս, ասէ. Ե՛րթ յետս իմ, սա՛տանայ, գայթակղութիւն իմ ես. զի՝ ոչ խորհիս դու զԱստուծոյն, այլ զմարդկան. (Մատթ. ԺԶ. 22)։

Քեզ զի՞ փոյթ է, դու եկ զկնի իմ. (Յովհ. իա. 23)։

Տրամեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ սիրես զիս. (Անդ. իա. 17)։

Քրիստոս կամելով Պետրոսի երեք անգամ ուրացութիւնը բժշկել, երեք անգամ անոր սէրը պահանջեց. որովհետև իրեն խոստմանը վերայ չկրցաւ կենալ, որ ըսած էր Քրիստոսի. "Թէպէտև ամենեքին գայթակղեսցին 'ի քէն, սակայն ես ոչ գայթակղեցայց. Պետրոս այսպէս ուխտելէն ետև, որ ըզ-Քրիստոս պիտի չուրանայ, շատ չանցած՝ ուրացաւ. Այսոր համար Քրիստոս վերստին Պետրոսի հաւատքը պահանջելով, երբոր հաստատուն գտաւ զանիկա իւր հաւատացը վերայ. "Այո՛ ցնա. Արածեա՛ զոչխարս իմ". այսինքն՝ վերստին քո առաքելական պաշտօնդ վարէ, որոյ համար 'ի սկզբանէ ընտրեցի զքեզ. "Արթա՛յք առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի".

Եթէ առ ամենայն առաքեալսն ասաց՝ "Արթա՛յք առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի", յայտ է թէ Պետրոսի ևս ըսելով, "Արածեա՛ զոչխարս իմ", իւր առաքելութեան պաշտօնին համար ըսաւ, և ո՛չ թէ ընդհանուր եկեղեցւոյ կառավարութեանը համար։ Այսն տեղ աշ Ս. Գրոց մէջ գրուածները մէկզմէկ կը բացատրեն. բայց պապական այս նոր Գերականներն են, որ բացայայտեալը՝ առանց բացայայտչի կ'ուզեն գործածել։

Բայց գոհութիւն Աստուծոյ, որ ամէն գիտութեց բուն հեղինակն Քրիստոս, այդ նոր հեղինակներուն մոլորաշաւիղ կանոններէն ժողովուրդը ազատելու համար, նոյն Ս. Գրոց մէջ ուրիշ տեղ, և այդ խօսքէն շատ յառաջ՝ անոր բացայայտիչը ևս գրած, առաքելոց եկեղեցական իշխանութիւնը չափաւորած և Պետրոս առաքելոյն ևս պատուէր տուած է, որ զոչխարը արածելը ուրիշ կերպով չկրնար ընել, բայց միայն՝ ինչպէս որ ինքը կը հրամայէ։

"Եթէ մեղանչէ քեզ եղբայր քո, երթ, յանդիմանեա՛ զնա, յորժամ դուն և նա միայն իցէք... ապա թէ ո՛չ լուիցէ քեզ, ա՛ռ ընդ քեզ միւս ևս կամ եր-

կուս . . . իսկ եթէ նոցա ոչ լուիցէ , ասասջիր յեկեղեցւոջ . ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ , եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւոր . ամէն ասեմ ձեզ . զի զոր կապիցէք յերկրի , եղիցի կապեալ յերկինս . և զոր արձակիցէք յերկրի , եղիցի արձակեալ յերկինս". (Մատթ . ԺԸ . 15–19) ։

Ահա եկեղեցական իշխանութիւնը , զոր Քրիստոս բոլոր Առաքելոց կու տայ . "Ասասջիր յեկեղեցւոջ — Որ միանգամ կապիցէք յերկրի", և այլն , ըսելով . իսկ պապականք Պետրոսին միայն կու տան , "Արածեա զոչխարս իմ" ըսելուն համար ։

Քրիստոս յայտնի ըրաւ իւրաքանչիւր առաքելոց զատ զատ իշխանութիւնը , իւր եկեղեցւոյն վերայ . Երթ , յանդիմանեա զնա". և բոլորին մէկտեղ ընդհանուր եկեղեցւոյն վերայ . "Ասասջի՛ր յեկեղեցւոջ", և միանգամայն բոլոր առաքելոց հաւասարաչափ իշխանութիւնը , "Որ միանգամ կապիցէք յերկրի" ըսելով ։

Պարտ էր Քրիստոսի ասել . Ասասջի՛ր Պետրոսի . զի զոր միանգամ կապեսցէ Պետրոս , եղիցի կապեալ յերկինս . որպէս զի պապականաց վարդապետութիւնը կատարումն առնու . վասն զի՝ Պետրոսի միայն ըսաւ , "Արածեա զոչխարս իմ" ։

Ի՞նչպէս հասկընալ պէտք է և հետեւեալ Քրիստոսական հրամանները , զոր եկեղեցւոյ կառավարութեան համար բոլոր առաքելոց մէկտեղ ըրաւ . "Երթայք յաշխարհ ամենայն , և քարոզեցէք զաւետարանն արքայութեան ամենայն արարածոց". (Մարկ . ԺԶ . 15) ։ "Աշակերտեցէք զամենայն հեթանոսս . . . Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի". (Մատթ . ԻԸ . 19 , 20) ։

Այսոնք և ասոնց նման անհերքելի ճշմարտութիւններ , Պետրոս առաքելոյ հաւասարիշխանութիւնը համար , պապականք Քրիստոսի բերնէն ելելէն ետքը ,

ինչ տեղէ վկայութիւն կ'ուզեն այլեւս ; պապին իշ-
խանութիւնը ընդհանրական ընելու , որ Պետրոս ա-
ռաքելոյ յաջորդը կը կոչէ զինքը ։

Հայոց եկեղեցին՝ Քրիստոսի տուած իշխանութե-
նէն դուրս՝ եկեղեցւոյ կառավարութեանը մէջ ու-
րիշ իշխանութիւն չճանչնար , և իրաւունք ալ ունի
չճանչնալու . վասն զի Քրիստոս ինքն զգուշացուց ։

Պետրոս առաքեալ իւր Վարդապետին հոգին ունե-
նալով , ամենևին մէկ տեղ չգրեց իւր ընդհանրական
իշխանութիւնը , և ոչ ալ այդպիսի իշխանատիրութեան
նշոյլմը անգամ ցոյց տուաւ իւր թղթոցը մէջ . բայց
այդ գահատիրութիւնը առաքելոյն տալով , յայտ է
թէ Քրիստոսի նկատմամբ կու տան իբրև անոր փո-
խանորդ՝ ընդհանուր եկեղեցին կառավարելու ։

Ուրդ՝ Քրիստոս իւր եկեղեցւոյ կառավարութիւնը ;
իրեն փոխանորդ ոչ զՊետրոս , այլ երկոտասան ա-
ռաքեալները միանգամայն կարգեց , ինչպէս յայտնի է
այն բացարձակ հրամաններէն , զորոնք վերը նշանակե-
ցինք . այսինքն՝ "Եթէ ումեք թողուցուք զմեղս ,
թողեալ լիցի . . . Երթայք յաշխարհ ամենայն , և
քարոզեցէք զաւետարանն . . . . Աշակերտեցէք զա-
մենայն հեթանոս" , և այլն ։ Որոնք պատուիրելէն
ետքը՝ արգիլեց և ս որ անոնցմէ և ոչ մէկը կարող
ըլլայ ընդհանուր իշխանութիւն բանեցընել . "Եթէ
նոցա ոչ լուիցէ , ասասջի՛ր յեկեղեցւոջ" ։

Եւ իսպառ առաքելոց մտքէն գլխութեան ախտը
փարատելու համար՝ պատուիրեց , ինչպէս շատ ան-
գամ ըսած էր , թէ "Ո՝եծն ի ձէնջ , եղիցի ձեր սպա-
սաւոր" . և որպէս զի անոնց միտքը տպաւորէ թէ ե-
կեղեցւոյ կառավարութիւնը մէջ՝ իրենց Գլուխը միշտ
իրենց հետն է , ըսաւ . "Ես ընդ ձեզ եմ զամենայն
աւուրս" , և այլն . և եկեղեցական իրաւունքը ընդ-
հանրապէս իմ ազդեցութեամբս կը վճռուի ամե-
նուդ հաւասարիշխանութեամբը . "Հաճոյ թուեցաւ
Հոգւոյն Սրբոյ և մեզ" ։

Ով էր որ հեթանոս քրիստոնէից անթիւրութեան վճիռը տուաւ առաքելոց ժողովոյն մէջ։ — Թէ և Պետրոս "Ղլուխն եկեղեցոյ և աղբիւրն իրաւաբանութեան" անդ էր, բայց ոչ իրաւունք և ոչ գլխութիւն ունէր որ ինքը վճռէ, այլ "Հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ — Ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա"։ Ասել է թէ Քրիստոսի աներևոյթ նախագահութեամբը առաքելոց ժողովը վճռեց։

Քրիստոս՝ որ իւր առաքեալները իւրաքանչիւր աղգաց եկեղեցիներուն գլուխ կարգեց, և միշտ անոնց ժողովքին մէջ ներկայ էր, արդեօք երբ զլացաւ զնոյն գլխաւորութիւնը անոնց յաջորդներէն, որոնք այժմ Քրիստոսի մասնաւոր եկեղեցեաց գլուխներն են։ Առաքելոց եկեղեցական իշխանութիւնը շարունակող՝ ինքն իսկ Քրիստոս չէր, որ անոնց ըսաւ. "Ես ընդ ձեզ եմ". և այժմ նոյն Քրիստոս չէ, որ անոնց եբեսփոխանաց կ'ըսէ. "Ուր իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա"։ Մինչ 'ի կատարած աշխարհի խոստացաւ, մինչ 'ի կատարած ես մեզ հետ ու մեր մէջն է և պիտի ըլլայ։ — Մինթէ այս չէ՞ մեր ճանչցած գլուխը. այս չէ՞ և պապականաց ուրացութիւնը։ Պետրոս զՔրիստոս եբրեցս ուրացաւ. ի՞նչ զարմանք, եթէ Պետրոսի յաջորդները Քրիստոսի գլխաւորութիւնը բոլորովին ուրանան։

Եթէ առաքեալները զՊետրոս առաքեալը գլուխ ճանչնային իրենց, յայտ է թէ Քրիստոսի այնքան հրամանները ոտքի տակ առած կ'ըլլային. և Պօղոս, որ տրուպն էր առաքելոց, չէր վստահանար Պետրոսի նման գլխաւորի մը կեղծաւորութիւնը երեսը զարնել հաւատացելոց ժողովքին մէջ. "Յորժամ եկն Կեփաս 'Ի Անտիոք, ընդդէմ դարձայ նորա. քանզի գոգ իբրև ստգտեալ ինն էր։ քանզի մինչև եկեալ

էին ամենք առ 'ի Յակոբայ, ընդ հեթանոս սա ուտէր անխտիր. իսկ իբրև եկին, զատանէր և որս չէր զանձն, երկուցեալ յայնցանէ, որք 'ի թլփատու թենէ անտի էին. և կեղծաւորեցան ընդ նմա և այլ ՝ի՞րեայքն". (Գաղատ. բ. 11—13).

Ահա այս աղբիւրէն բղխած է ՝ի՞ռ ովմայ պապին անսխալութիւնն ալ. և այս անսխալութիւնը պիտի տեւէր 'ի մշտնջենաւորս պապականաց մէջ, թէ որ դերապայծառ ՝ի՞սուսեանը դժբաղդաբար յայտնի չընէր աշխարհի. վասն զի պապը անոր ընտրութեան վճռոյն մէջ սխալելով, ինչպէս կը վկայէ Կոստանդնուպօլսոյ հռովմէական ՝ի՞այոց գիտնական և ընտիր մասը, պիտի պարտաւորի վերջապէս յետս կանչելու զ՝ի՞սուսն դերապայծառը, ինչպէս ժամանակաւ Լեոն ԺԲ. զդերապայծառ Գաշուրը ետ կանչեց Ագիպտոսէն և խստիւ պատժեց զնա՝ չարաչար խաբուած ըլլալով անորմէ։

Մի՛ գուցէ որդիական ժառանգութիւն ճնաց պապականաց այս կեղծաւորութիւնը. որով Քրիստոսի Տեառն մերոյ իւր եկեղեցւոյ վերայ ունեցած գլխաւորութիւնը Պետրոս առաքելոյն տալով, նոյն գլխաւորութիւնը իբրև հայրենի ժառանգութիւն մը պապին կը մատուցանեն. այլ պապը այս օրուան օրս Ս. Կիպրիանոսի հետ կը խոստովանի. "Փականքն եկեղեցւոյ ոչ տուան նմա միայնակ (այսինքն Պետրոսի), այլ միութեանն եկեղեցւոյ"։

Ահաւասիկ ՝ի՞այաստանեայց եկեղեցւոյ՝ զՊետրոս առաքեալը ճանչնալուն խոստովանութիւնը, ինչպէս մինչև հիմա գիտցինք. ուր կը տեսնենք թէ, զՊետրոս առաքեալը կը ճանչնայ և կը խոստովանի՝ Քրիստոսի երկոտասան առաքեալներէն մէկը. անոնց հետ հաւասարիչեան, Քրիստոսի ընդհանուր եկեղեցւոյն 'ի միասին վճիռ տուող, անոր կառավարութեանը անոնց հետ հոգացող, անոնց գործակից և երիցակից,

անդամ առաքելական մարմնոյն, ամէնքը մէկտեղ՝ մի մարմին Քրիստոսի, և Քրիստոս՝ գլուխ իւր մարմնոյ եկեղեցւոյն. "Բազումքս մի մարմին եմք Քրիստոսի".

Այսպէս կը ճանչնայ մեր եկեղեցին զՊետրոս առաքեալը. և երբէք այս ճանաչողութենէն չելլեր և չխոտորիր. և ոչ միայն զՊետրոս, այլև միւս առաքեալները ևս իրենց ունեցածէն աւելի կամ պակաս չքարոզեր. վասն զի, ինչպէս Քրիստոս Տէրն մեր զինքը դրաւ գլուխ եկեղեցւոյ՝ առաքելական եկեղեցւոյ կառավարութեանը մէջ, այնպէս ևս մեր եկեղեցին՝ Գլուխ ընդհանուր եկեղեցւոյ, Աղբիւր իրաւաբանութեան և Կեդրոն միութեան զՔրիստոս միայն կը ճանչնայ, նոյն իսկ Քրիստոսի մանաւոր եկեղեցեաց առաքելական յաջորդաց եկեղեցական կառավարութեանը մէջ. վասն զի՝ երբ որ անոնք ընդհանուր եկեղեցւոյ իրաւանց համար յանուն Քրիստոսի կը ժողվուին, անդ է և Քրիստոս 'ի մէջ նոցա.

Իսկ Պետրոս առաքելոյ առաքելական քարոզութիւնը վերայ 'ի Հռովմ, և անդ եկեղեցի հաստատելուն կամ քան և հինգ տարի հովուելուն, արդէն մեր ժամանակի Տ. Յովհան Վանանդեցի աստուածաբան քահանային գրուածքը[1] ամենուն առջևը ելլալով, մենք ալ անկէ աւելի ըսելիք չունիմք նոյն նիւթոյն վերայ. մանաւանդ թէ՝ Աթոռ Ս. Պետրոսի գրքին թարգմանիչը՝ Հայաստանեայց եկեղեցիէն Պետրոսի գլխաւորութիւնն ու անոր նկատմամբ պապին ընդհանրական իշխանութիւնը աւելի կը պահանջէ, քան թէ Պետրոսի Հռովմ գնալը. զոր և մենք ալ ահա կը հաստուցանեմք 'ի փառս նորա.

Թէ Պետրոս առաքեալ Հռովմ գնաց կամ չգնաց, մեր ուղղափառ սուրբ հաւատոյն կամ եկեղեցական իշխանութիւնը փնաս չբերեր. մենք Քրիստոսի Տեառն

---

1 Հերքումն կարծեաց գնալոյ Ս. Պետրոսի 'ի Հռովմ, տպեալ 'ի Զմիւռնիա 1853.

մերոյ իւր եկեղեցւոյն ըրած կառավարութիւնը չեմք ուրանար պապին արքաներեակներուն նման. որոնք Քրիստոսի ձեռքէն գլխաւորութիւնը կ'ուզեն անիրաւութեամբ յափշտակել։

Թէ որ պապը Պետրոսի աթոռը Հռոմ կը բաղձայ դնել, թող դնէ. բայց գիտնայ որ անոր գլխաւորութեան աթոռը Հայաստանեայց եկեղեցական իշխանութեան կեդրոնը չդրաւ և երբէք պիտի չկրնայ դնել մինչև 'ի կատարած աշխարհի. վասն զի՝ քանի որ Հայոց ազգը կայ, ընդհանուր քրիստոնէից հետ անոր Գլուխը Քրիստոս է մինչև 'ի կատարած աշխարհի. "Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև 'ի կատարած աշխարհի"։

Թէպէտ զուր տեղը կը թափտուին Հայոց ազգին եկեղեցւոյ յեղափոխական դարերուն մէջ. և ինչպէս իմաստուն Թարգմանիչը կ'ըսէ՝ առանց ուրանալու իր հազար ու մէկ ուրացութեացը հետ. "Այն դժբաղդ ու աղետալից տարիները որոնց մէջ սրդէն հոգեվարութեան մէջ ինկած թագաւորութիւնն իր վերջին շունչը կու տար", (Աթոռ Ս. Պետրոսի, երես 259), և ասդիէն անդիէն՝ ազգատեաց, հաւատափոխ և հաւատուրաց մարդկանց հերետիկոսական թղթերէն թերթ մը ձեռք ձգելով, գողնալով և շատ անգամ իրմէ բան խառնելով, այն սուրբ, սրբասէր և պատկառելի վարդապետաց անունով յառաջ կը բերէ, որոնք Նաւարդեցւոյ, Կատուկեցւոյ, և այլ իրեն նման պապական Լեհացիներու և Յունանեաններու ոգւոց պտուղներն են. բայց անոնց ամենուն պատասխանն ալ կ'առնու գործոյս վերջին գլխոյն մէջ.

Ու ցաւալին այս է որ, այնպիսի իրաւունքներ կը պահանջեն լուսաւորեալ դարուս մէջ, որոնք հազար ու մէկ անգամ ընդհանուր եկեղեցիէն հերքուած են տգիտութեան դարերու ատեանին մէջ.

Այժմ՝ որ աստիճան տգիտութեան մէջ պիտի հա-

մարուին Վ. ՀՆՆայի Մ՝խիթարեան պապականները, ո՞
րանք կարծելով թէ նոյն հին կուրութեան ամպը ու
րիշներուն աչքը դեռ պատած է, պապական ատեան
ներէ վճռուած անիրաւութիւնները՝ տգիտութեան
թմրութենէ նոր արթնցածի մը պէս, մեղ կ՝առա
ջարկեն։

Բայց թէ որ ասոնց ըրածին բուն պատճառը քնն
նեմք, աւելի փառասիրական ջանք մը կը գտնեմք
այդ պահանջմանցը մէջ, քան թէ իրաւունք. վասն
զի Վ. ՀՆՆայի Մ՝խիթարեան միաբանութիւնը իրենց
ասոխ ունին այս օրուան օրս գրատուներով և գրաւոր
արդեամբք իրենցմէ հարուստ զ՝Մ՝խիթարեան ուխտը
Վ. ենեակոյ, որոնցմէ երկպառակութեամբ զատուած
և հերձուած են. ուստի կ՝ուզեն որ անոնց նման ի
րենք ևս հռչակաւոր ըլլան, և հարուստ գրատուն, ոչ
կէզօծ խաբէութեան գործիքներ և ամէն նիւթերու
վերայ գրուածքներ ունենան։

Վասն որոյ զարմանք չէ որ Հ. Պալճեանը ևս այն
փառասիրական ջանքով՝ հաւատափոխ մարդկանց գիր
քերէն այն անուշահոտ նիւթերը ժողված ըլլայ, և
իրեն հայրանունին համաձայն մեղը շինելու ատեն,
յանկարծ այս ազգակործան թոյնը կաղմէ. վասն զի
ստոյգ է որ, մի և նոյն ծաղկանց անուշահոտութիւնը
մեղուները ծծելով՝ մեղը կը շինեն, օձերը ծծելով՝
մարդասպան թոյնը կը կաղմեն։

ԳԼՈՒԽ Դ.

Հայոց եկեղեցին կը ճանչնայ զԱ. Գրիգոր Լուսաւորիչ իբրեւ ընդհանրական գլուխ, փոխանորդ Քրիստոսի, յաջորդ Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոցն, անկախ ի բնաւ հաւատոյ և հաւասարելական ուղղափառ եկեղեցիներու գլխաւորաց։

Ա. Գրիգոր Լուսաւորչի Հայաստանեայց եկեղեցւոյ հովուապետական իշխանութիւնն ու առաքելական գահին յաջորդութիւնը այս տեղս դեռ չտրատմած, քանի մը խորհրդածութիւն կը պարտաւորիմք կարգել այս նիւթոյս վերայ. որովհետև այս մեր պատասխանը հարկաւ զանիկա կը պահանջէ այս տեղս. և Ընթռ. Ա. Պետրոսի գրքին մէջ մեր Լուսաւորչին պատմութիւնը կը տեսնէ զմեզ. զորն որ մեծ փաստառած է պապական թարգմանիչը՝ պապին գլխաւորութիւնը մեր եկեղեցւոյ վերայ հաստատելու։

Թէ որ արդարև Գրիգոր Լուսաւորիչ Հռոմգնաց պապին գլխաւորութիւնն ու ընդհանուր եկեղեցւոյ վերայ անոր ունեցած իշխանութիւնն ընդունելու և խոստովանելու թէ իւր հաւատոյ հիմը Պետրոսի աթոռն է, և հետևաբար Հայոց եկեղեցւոյ իրաւաբան և ընդհանուր հրամանատար անոր յաջորդող պապերն են, և թէ մեր եկեղեցւոյն գլուխ և հիմն հաւատոյ զպապերը ճանչնան, յայտ է թէ Գրիգոր Լուսաւորիչ՝ այս ամէն արտօնութիւնները պապին տալու հրամաններ և անոր հպատակելու այգպիսի անժխտելի ապացոյցներ իւր նախորդներէն ունեցած պիտի ըլլար, որոնք Թադէոս առաքելոյ իշխանութիւնը յաջորդեր էին, և ինքն ալ նոյն առաքելական գահին յաջորդ, Քրիստոսի փոխանորդ և Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյն կառավարիչ էր։

Արդ՝ նոյն Թադէոս առաքելոյ յաջորդաց պատ-

մուԹեանը մէջ ամենևին տեղ մը այդ խոստմանու-
Թիւնը չտեսանք, որոնք մեր եկեղեցւոյ գլուխ և կա-
ռավարիչները ըլլալով, պէտք էր իրենց հոգևոր իշ-
խանուԹեը գլուխ և ընդհանուր կառավարիչ Պետ-
րոս առաքելոյ յաջորդ պապերը ճանչային. որովհե-
տև Քրիստոսի հրամանները քան զմեզ աւելի և քան
զմեզ շատ կարդացեր ու աղէկ հասկըցեր էին, և
նոյն հրամաններուվը քրիստոսական եկեղեցիները կը
կառավարուէին. այն է, ընդհանրական եկեղեցւոյ
կառավարուԹեանը մէջ առաքեալք հաւասարիշխա-
նուԹիւն ունենալով, անոնցմէ և ո՛չ մէկը ինքնիշխան
կամ գլուխ ըլլալով, եկեղեցական գործքերը մէկտեղ
վճռելով, և այլն, ինչպէս նախընԹաց գլխոյն մէջ
ըսինք. ուստի յայտ է Թէ Լուսաւորիչ ևս անոնց
հրամանաւը և շաւղքը պէտք էր որ եկեղեցին կա-
ռավարէր, և ո՛չ Թէ գնալ պապէն իրաւունք կամ
եկեղեցւոյ կառավարուԹիւնը խնդրել. որով կ'երևի
Թէ, Լուսաւորիչ եԹէ Հռոմ ևս գնացած ըլլար,
հպատակուԹիւն կամ անկէ կառավարուԹի ընդու-
նելու և կամ զպապը եկեղեցւոյ գլուխ ճանչնալուն
համար չէր. վասն զի երեք հարիւր տարի առանց
Պետրոսի գլխաւորուԹեանը կառավարուող եկեղե-
ցին, անշուշտ կառավարուԹիւն ալ և գլո՛ւխ ալ
ունենար պիտի, ինչպէս որ իրաք ալ ունէր. և այդ
գահասիրուԹե ոգին ալ Ծ. դարուն մնաւ Հռով-
մայ իշխանուԹեանը մէջ, և ո՛չ Թէ Գրիգոր Լուսա-
ւորչի օրովը։

Իսկ այժմ առանց վկայուԹեան պնդելով Թէ,
Լուսաւորիչ Հռովմ գնաց, այս տարօրինակ հե-
տևուԹիւնը կը հանէ Թարգմանիչ Պալճեանը, և ի-
րեն մահացու Թոյնը նոյն անուշահոտուԹեան ներքև
մԹերած ըլլալով, կը ջանայ յաշխարհ ամենայն տա-
րածել և ազգիս բարեպաշտական մասը Թունաւորել,
էբը Թէ Լուսաւորիչ Հռովմ գնաց պապին գլխա-

ւորութիւնը ճանչնալու, և անոր միահեծան կառավարութեանը ներքև մեր եկեղեցին յանձնելու։

Այց, ինչպէս ըսինք, Լուսաւորիչ որ արդարև Կեսարիոյ արքեպիսկոպոսական աթոռոյն հաւատքն ու դաւանութիւնը ունէր, նոյն իսկ Կեսարիոյ քրիստոնական եկեղեցւոյ Թադէոս առաքելոյն յաջորդներէն առած էր, և "Իր մօրը կաթին հետ ծծած էր քրիստոնէական սկզբունքը"։ (Ն. Թոռ Ս. Պետրոսի, երես 221)։ Ընդունելի, այսինքն նոյն իշխանութեան յաջորդներէն գրով կամ աւանդութիւն չունեցածը՝ ինքնիրեն չէր կրնար և չէր ուզեր հաւատոյ կամ եկեղեցական աւանդութեանց մէջ առնուլ. որով և իւր հօրաքեռական իշխանութիւնը պապին բռնաւորական երկաթի գաւազանին ներքևը դնել. ուր Քրիստոսի Տեառն մերոյ՝ եկեղեցւոյ կառավարութեանը տուած հրամանները, որ վերը ըսինք, ոտքի տակ չէր ձգեր երբէք. ուստի՝ եթէ ստոյգ ևս ըլլար Լուսաւորչի Հռոմ գնալը, անկէ չհետևիր, որ հանդամանքները ըլլալէն ետքը, թէ զպապը Հայոց եկեղեցւոյն գլուխ և ընդհանուր կառավարիչ ճանչնալու համար գնաց, ինչպէս որ հարազատ պատմութիւնն ալ կը վկայէ։

Ինչքան յայտնի ապացոյցներն ու Քրիստոսական բերանոյ անժխտելի վկայութիւնները կամելով ժխտել Պալճեանը, և հաստատակութիւնը մոքէն կարծելով թէ ինկած ըլլայ, որոնք դարերով հաստատուած են, Հայոց եկեղեցւոյ քրիստոնէական ուսաւորութեան սկիզբը և առաքելական քարոզութիւնը քօղարկեալ ձևով Լուսաւորչէն կ'առնու, որպէս զի զՊետրոսը՝ առաջին ընէ քրիստոնէութեան մէջ քան զՀայոց կաթուղիկէ ուղղափառ եկեղեցւոյն Նուաքեաները, և "Հայոց եկեղեցին՝ Հռոմայ եկեղեցիէն իւր հաւատքը առաւ" ըսելը՝ անժխտելի ընելու կարող ըլլայ։ Ով Հայոց եկեղեցւոյ անդրանկութիւնը. զոր հաղար ութ

հարիւր յիսուն և երեք տարի անցնելէն ետքը՝ Հռ. Պաւղեանին նման իւր ուրացող որդւոց մէկը՝ այսօր Հռովմայ առատաշնորհութիւն կ'ընէ. իւր հայրենի եկեղեցին ու հաւատքը՝ որ "Իր մօրը կաթին հետ ծծած է", այնքան ուրացած է, որ Հայոց եկեղեցւոյ քրիստոնէութիւնը կ'ուրանայ 'ի հաճոյս պապին, և անոր եկեղեցական իշխանութեան յաջորդները կը թողու անյիշատակ. որոնք առաքելական փոխանորդութեամբք շարունակ և անընդմիջաբար Հայաստանեայց քրիստոսական եկեղեցին երեք դար կառավարեցին Լուսաւորչէն յառաջ անկախ և առանց մէկու մը գլխաւորութեան, և ամենևին Պետրոսի գլխաւորութիւնը չքարոզեցին, զոր Լուսաւորիչն ևս գէթ 'ի պաշտօնէ ճանչնար և խոստովանէր Հռովմ գնացած ատենը։

Եթէ այսու մտօք Հռ. Պաւղեանը՝ մեր քրիստոնէութիւնը ընդհանուր քրիստոնէութէն երեք դար ետքը ցոյց տալով, որ բոլոր ազգաց քրիստոնէութենէն յառաջ սկսած էր, Հռովմայ քրիստոնէութիւը յառաջ կ'ուզէ դնել, և զպապը՝ գահերէց Հայոց եկեղեցւոյն՝ Լուսաւորչի Հռովմ գնալուը, յայտ է թէ, ընդհանուր քրիստոնէից խոստովանեալ ճշմարտութիւնը, այսինքն մեր եկեղեցւոյ առաքելական յաջորդութիւնը կ'ուզէ թագուցանել պապին առջևը, որ անոր նախագահութեանը պատիւ ընծայած ըլլայ. և իւր հոգւոյ աչքը ազգատեցութեան գարշելի մառախուղով պատած ըլլալուն՝ եթէ կ'ուզէ հասարակութեան աչքէն ևս ծածկել, զոր ընդհանրապէս ազգային և այլազգի պատմիչները բացայայտ գրած են, ասով ալ յայտնի կ'երևի՝ թէ ազգային պատմիչներն ևս կ'ուզէ ստել։

Ապա ուրեմն՝ մեք և "Հերոմոն կարծեաց գնալոյ Ս. Պետրոսի 'ի Հռովմ" անուանեալ տետրակն ևս իրաւունք գտած եմք ըսելու թէ, Պետրոս առաքեալ

երբէք Հռոմ գնացած չէ · զոր ոչ Գործք առաքելոցը կը յիշատակէ և ոչ ստուգագիր պատմիչները կը գրեն։

Երբ որ Թարգմանիչ պապականը քրիստոսական հաւատոյ հիմն զՊետրոս կը կացուցանէ ընդդէմ առաքելական հրամանին . "Հիմն այլոք ոչ կարէ դնել քան զեդեալն . որ է Յիսուս Քրիստոս"։

Երբ որ զՊետրոս՝ առաքելոց գլուխ կը դնէ . "Զոր միանգամ կապիցէք յերկրի"։

Երբ որ Պետրոսի միայն կու տայ առաքելոց իշխանութիւնը . "Եթէ (երկուցն կամ երից) ոչ լուիցէ , ասասջիր յեկեղեցւոջ"։

Երբ որ Քրիստոսի տեղը զՊետրոս կը կարգէ դատաւորիւ իրաւանց . "Հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ"։

Երբ որ (ջարտջար հայհոյութեամբ և ս) Քրիստոսէն վեր Պետրոսին կու տայ Թագաւորական գերագունութիւն բոլոր քրիստոնէից վերայ , զոր և ոչ Քրիստոս յանձն առաւ ընել այս աշխարհիս մէջ · "Իմ Թագաւորութիւն չէ՛ յայսմ աշխարհէ"։

Թէ որ Քրիստոսի Թագաւորութիւը չէ յաշխարհի ասա , ապա ո՞րպիսի յանդգնութիւն է Թարգմանչին և նոյն իսկ հեղինակին , որ Քրիստոսի չբրած Թագաւորական գերագունութիւնը պապին կու տան . ո՞րպիսի նախատինք և ս չհամարիր իրեն Պետրոս , որ իւր Վարդապետէն ջոնսած և իր չունեցած Թագաւորական գերագունութիւնը իւր յաջորդը ունենալ ուզէ ։

Ո՞վ կրնայ արդեօք նմանեցընել Պետրոսի բրած առաքելական պաշտօնը և իւր յաջորդինը , երբ հեղինակը՝ առանց ցպոյ և մախաղի կը վարէ նոյն պաշտօնը · իսկ պաշտօնեայն՝ Թագաւորական գերագունութեամբ և Թագաւորական գաւազանաւ ։ Պետրոս առաքեալ առանց ցպոյ և մախաղի կը հաստատէ զեկեղեցին · վասն զի՝ իրեն Գլուխը Քրիստոս իւր

հետն էր . "Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս" . իսկ իւր յաջորդը՝ ինքնագլուխ թագաւորական գերագունութեամբ . ուրեմն Քրիստոս փոխանակ Պետրոսի յաջորդին , այսինքն պապին հետ ըլլալու , կը յանդիմանէ զնա , ասելով . Իշխանութիւն բաժանեալ յանձն՝ կործանեսցի :

Ահ աշխարհի փառասիրութեանը . որ Քրիստոսի ներկայութիւնը կ'ուրանայ , թագաւորական գերագունութիւն և Պետրոսի չունեցած իշխանութիւնը պապին համար կը փնտռէ . աւելի պէտք էր Քրիստոսի ներկայութիւնը խնդրել , որով Քրիստոսի եկեղեցին կը շինուի , քան ինքնագլխութիւն , որով նոյն եկեղեցին կը կործանի :

Ահա այս ամէն ստութիւնները ճշմարտութե՞ն ներքևը վարագուրել ուզելով , Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելական յաջորդութիւնը չյիշատակեր Հալածեանը . վասն զի և ոչ մէկ ձեռնտուութիւն մը կը գտնէ իւր ստութեանը , և ոչ բառ մը անոնց բնընէն եւած՝ Պետրոսի գլխաւորութեանը համար . որովհետև անոնք ամէնքն ալ առաքելոց հաւասարիշխանութիւնը կը խոստովանին եկեղեցւոյ կառավարութեանը մէջ . և այս ընդհանրական մարմնոյն մի գլուխ կը ճանչային զՔրիստոս , և ոչ մէկը պապին հետ թէ՛ հոգևոր և թէ քաղաքական նկատմամբ հաղորդակցութիւն չէին ըրած . վասն զի զՀռովմայ պապը՝ իրենցմէ մէկը և հաւասարիշխանութիւն ունեցող մը կը ճանչային . այն ալ Քրիստոսի մասնաւոր եկեղեցի ըլլալով և մէկ մասնաւոր գլուխ ունենալով . երբէք մէկը չէր ասեր՝ թէ Ես Պետրոսեան եմ , և միւսը՝ թէ Ես Պօղոսեան եմ , և ուրիշ մը՝ թէ Ես Ապօղոսեան եմ , և այլն :

Իսկ մեր թագաւորական իշխանութիւնը որ դժբաղդաբար Հռովմայեցահին ստորանկեալ էր հարկատուութէ , և Տրդատայ ժամանակը անոր տէրութեանը պաշտ-

պան եղան Հռոմայեցիք, որոյ պատճառաւ և նա ինքն Տրդատ Հռոմ գնաց՝ 'ի շնորհաւորութիւն Կոստանդիանոսի դարձին. գուցէ այս մեր ազգային իշխանութեան յեղափոխութիւնը յարմար միջոց մը գտած են պապականք՝ մեր եկեղեցական հոգևոր իշխանութիւնն ալ ստորադրելու պապական կառավարութեանը. ուրեմն այժմ ևս բոլոր ազգաց եկեղեցական իշխանաւորները՝ մեր եկեղեցւոյ հովուապետական գլուխ և իրաւաբան պէտք է որ ըլլան. ուրախեմ մեր ազգը ամէն տէրութեանց մէջ ցրուած են գրեթէ, և անոնց ստորադրեալ և հարկատու են. և նոյն իսկ պապական ժողովուրդը Օսմանեան պետութեանը ստորադրեալ ըլլալով, պէտք է որ իրենց քրիստոնական եկեղեցւոյն գլուխ և ընդհանրական կառավարիչն ալ՝ անոնց կրօնից նախագահը ճանչնան. Սոսկալի հետևութիւն։ Բայց թէ որ Տրդատայ Հռոմայ գահին 'ի քաղաքական խոնարհելովը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ալ պապին 'ի հոգևորս հպատակիլ և մեր եկեղեցւոյն զպասը գլուխ ըլլալ կը հետևցընեն, հարկաւ վերի հետևանքն ալ պիտի ընդունին. վասն զի պապական ժողովուրդը այս օրուան օրս ունի նոյն քաղաքական վիճակը Տաճկաստանի մէջ, և աւելի ևս. և ի՛նչ վիճակ որ ունէր մեր ազգը՝ Տրդատայ և Լուսաւորչի օրովը Հայաստանու մէջ, և ի՛նչ յարաբերութի՛ն որ այսօր պապական ժողովուրդը ունի Օսմանեան տէրութեան հետ իւր հպատակութեանը մէջ, նոյնը չունէր անգամ մեր ազգը այն ժամանակը՝ իւր հարկատուութեանը մէջ։

Իսկ թէ որ ազգիս տպարանները անհոգութեամբ կամ Կաթուղիկոս անունը դիւրահաւանութեամբ Եպիսկոպոսական իշխանութենէն վեհ անուն մը հասկընալով, Ժամակարգութեան գրոց մէջ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելական յաջորդութիւնը Թադէոս և Բարդուղիմէոսէն ակսելու տեղ՝ Գրիգոր

Լուսաւորչէն սկսեր են. որով և պապականաց պատ-
ճառ տուած են ըսելու, թէ Հայոց քրիստոնէու-
թիւնը անկէ սկսաւ, և թէ՝ Լուսաւորիչ Հռոմ
գնաց, և եկեղեցւոյ կարգ, կանոն ու ձեռնադրու-
թիւն նաև առաւ, և առով պապին գլխաւորութիւնն
ընդունեց. պարտք կը համարիմք այսուհետև մեր
ազգնամեաց այդպիսի դարան գործելու գողութեան
տեղերը գոցել, որ մեր ազգէն ապաւէն չունենան,
գայլօրէն չյարձակին և չյափշտակեն զոչխարան ու
ցրուեն։

ԺԸ. դարուն վերջը, մեր ազգին մէջէն և ս մեծ մա-
սամբ՝ պապականաց այս անափառական վէճը վերջա-
ցած կը համարուէր. վերջին վայրկեանն էր արդէն
Սրմաքէշներու և Յունանեաններու լուութեան.
Հայելի Աղբեր-Ռեան գիրքը իւր նիւթական և բա-
րոյական ազդեցութիւնը կորսնցուց, և ամէն մարդ
ակն ունէր, թէ մինչև ցայն վայր ոչքան որ Ս. Գրոց
միտքը ծուռ մեկնութեամբ ձգձգած են Պետրոսի հա-
ւասարիշխանութիւնը՝ ինքնիշխանութիւն կամ ինքնա-
դլխութեան փոխելու, պիտի դառնան և ուղիղը
խոստովանին այն ամէն վկայութիւնները, որով Քրիս-
տոս իւր առաքելոցը պատուէր տուաւ բոլորին մեկ-
տեղ՝ իւր եկեղեցին կառավարելու՝ անանձնիշխան
փառասիրութեամբ։

Թէ և կային արժանաւորաց գրուածքներ և ս, այլ
այդ վէճերու հետ դադարեցան. որոնց հեղինակները
ոչ սոսկ անձինք էին կամ Վէնեցի Մխիթարեանց
նման ատելութեան որոմներ յագարակ աշխարհիս,
այլ Քրիստոսի եկեղեցւոյ ագարակը հասունացեալ
ատոք սերմունք բարեպաշտութեան և երկնից շտե-
մարանը լցուցանող ցորեանք, շատերը Հայաստա-
նեայց առաքելական դահին փոխանորդք և ամէնքը
պապին հաւասարիշխան հոլովապետք. այնպիսի մար-
դիկ և այնպիսի հովիւք եկեղեցւոյ, որոնք զփառս

իրեանց այլում ոչ տային. Քրիստոսի սիրովը զմիմեանս կը սիրէին, Քրիստոսի հրամանաւ զեկեղեցին կը կառավարէին և կը մաքրէին ղորոմն ապականիչ. զոր թշնամին հաւատոյ՝ Քրիստոսի կենարարը վարդապետութեանը վերայ սերմանեց։

Վասն զի այնպիսի կրօնական խնդիրները ազգիս մէջ տեղի ունենալով, նոյն մեր ազգային ուսումնական վիճակն ու զարգացումը ետ մնացած էր. մանաւանդ թէ՝ ազգային միութեան քակտմանը պատճառ կ'ըլլային, քան թէ բաժանմունքը կը միացնէին։

Բայց նոյն բաժանեալ մասը՝ որ փոխանակ ազգին ամբողջութեանը հետ միանալու, մէկմէկէ ալ կտոր կտոր եղած են՝ մէջերնին՝ վէճ հանելով երէկ և այսօր, անցած գնացած ատելութիւնը նորէն արտաշնչեցին, ամէն լսելիք ապականեցին և լուսաւորեալ մաքերը պղտորեցին. ինչպէս որ ներկայ դարուս լուսաւորութիւնը բանիւ կը խոստովանի՝ Պաշտեանը՝ Ա. Թուռ II. Պետրոսի գրքին յառաջաբանութիւնը մէջ, և գործով նոյն լուսաւորութիւնը տգիտութեան խաւարին մէջ կը ծածկէ, և Քրիստոսի հրամանէն դուրս մեր եկեղեցիին Պետրոսի չունեցած և չբրած իրաւունքն ու արտօնութիւնները կը պահանջէ, ցանկալով որ կրօնական դժբաղդ վէճերը նորէն ձեռք առնումք։

Ուստի՝ եթէ մաքերնին այդ է եղեր որ իրենց՝ ազգին լուսաւորութեանը համար բռուած աշխատանաց փոխարէնը նոյն կրօնական վէճերովը հատուցանեմք, և իրենք մէկզմէկ հերձուածող կոչելով, ոմն Գոլէճցի, ոմն Վենետիկցի, ոմն Վէննացի, մեր վերայ կը յարձակին, հոգերնիս չէ ամենևին. մեք իրենց ամէն հերձուածներուն ևս միօրինակ կը պատասխանեմք։

Ազգային պատմիչներէն յայտնի է, որ Ընակ Գրիգոր Լուսաւորչի հայրը՝ Խոսրովը սպաննելու համար, երբ որ դաւանօք Ընտաշիրէն փախչելով իւր բոլոր գերդաստանովը Հայաստան եկաւ, Խոսրովու հրա-

ւիրակ զօրքը անոր դիմաւորեցին յԱրտազ գաւառը. ուր Թադէոս առաքելոյ գերեզմանը ըլլալով, երբ որ Ինակ նոյն տեղը օթեւանեցաւ, Աստուած մեր ազգին պարգևելով զԼուսաւորիչը, այն տեղ յղացաւ Ս. Գրիգոր, Թադէոս առաքելոյ իսկական յաջորդը. ո՞ր առաքելական հօտը պիտի հովուէր Քրիստոսի 256 Թուականին, որ հետևեալ տարին ծնաւ Վաղարշապատ Թագաւորանիստ քաղաքը.

Եւ ահա՛ այս ժամանակը՝ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հովուապետք կային Եդեսիոյ մէջ՝ Օլմիկոս եպիսկոպոս, և Կեսարիոյ մէջ՝ Պերմելիանոս եպիսկոպոս, որ մեռաւ 272 Փրկչական Թուականին, իրեն յաջորդ Թողլով զՎղեմէոս եպիսկոպոսը, և նա՝ զՊանդէոսը, յորմէ Գրիգոր Լուսաւորիչ եպիսկոպոսութիւն առաւ, ինչպէս կը տեսնեմք.

Այդ երբ որ Խոսրով սպաննուեցաւ, և անոր հրամանաւը Ինակայ տունը կը կոտորէին, այն ատեն Եւթաղեա անուն մէկը, որ Ս. Գրիգորի դայեկին քոյրն էր, առաւ զԳրիգոր և պահեց անոր դայեկին հետ. և երբ որ խռովութիւնը դադարեցաւ քաղաքին մէջ, առաւ Եւթաղեա երկուքը մէկտեղ, զՍ. Գրիգոր և անոր դայեակը, փախաւ գնաց 'ի Կեսարիա, և հոն մկրտելտուաւ զմանուկն Գրիգոր։

Ելդ՝ այս Եւթաղեան քրիստոնեայ մեծատուն ըլլալով Կեսարիոյ մէջ, իւր Սոփիա անուն քոյրը (որ Լուսաւորչի դայեակն եղաւ) Բուրգար անուն Պարսիկ մէկու մը կնութեան տուած էր. որոնք Ինակայ տունը կոտորելու ատեն Վաղարշապատ գնացած ըլլալով, առին զԳրիգոր և վերադարձան կրկին 'ի Կեսարիա, ինչպէս ասացաւ։

Ասա այսմ՝ թէ որ այս բարեպաշտ գերդաստանը քրիստոնեայ էր, ինչպէս հարազատ պատմութիւնն ևս ճիշդ կը վկայէ 1, ապա ի՞նչպէս կրնային Վաղարշ-

1 Խորենացի, բ. 77։ Յոյսաւուրս, նոյեմբեր 18.

շապատի նման բարբարոս քաղաքի մը մէջ մնալ։ ուր տեղ Թադաւորն ալ այնքան կռապաշտութեան զը-հերու ճնճերով յագեցած, չէ՛ թէ իւր քաղաքին մէջ յայտնի, այլ նաև ծածուկ ևս անգամ չէր կրնար քրիստոնեայ բնակիլ։ որովհետև Խոսրովու պատմութենէն կ'իմացուի որ, շատ քրիստոնեաներ նահատակեց, շինուածքներուն վերայ շատ տարիներով ծառայեցնելէն ետքը[1]։ բայց վասն զի Քրիստոսի եկեղեցին և. ոչ դրունք պ ժոխոց յաղթահարել պիտի կրնային, անոր համար ևս Վաղարշապատ քաղաքին մէջ քրիստոնեայք պակաս չէին։ և ամենևին բռնութիւն չկար բարբարոս քաղաքի մէջ՝ քրիստոնեայ ժողովրդոց բնակելու։ ըստ որում Քրիստոս ա-նանց հետն էր։ "Եւ զի յայնմ ժամանակի գտանէին ուրեք ուրեք յաշխարհին Հայոց քրիստոնեայք"[2]։ Եւ թէ որ Վաղարշապատ քաղաքը քրիստոնեայ կար, յայտ է թէ Հայոց քրիստոսական եկեղեցւոյ այն շրջի Ընթռուոց յաջորդութիւնը՝ Հայաստանու մէջ կը շարունակուէր, ինչպէս նախընթաց գլխոյն մէջ տեսանք։ և այն շարունակութիւնը իջաւ Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց իշխանութենէն, որում յաջորդ եղաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ։

Ընդ ոստիսի թշնամական հոգւով թարգմանիչը իւր հայրենի և ազգական եկեղեցւոյ առաքելական անձնիշխան հովուապետութիւնը և անոր անընդհատ շարունակութիւնը ազգատեաց բարուք ուրանալով, ազգային պատմիչներն ալ նախատելու մտօք, Գերմանական սահմաններէն՝ Հայաստանի համար վկայութիւն կու տայ անվկայ բերանով. "Ոչ ոք կրնայ տարակուսիլ, որ Կեսարացւոց եկեղեցին 'ի սկզբանէ այս հաւատքն ունէր Ս. Պետրոսի գլխաւորութեամբ վրայ։ և այս հաւատքին մէջ ծնաւ, սնաւ ու զարգացաւ

---

1 Խորենացի, բ. 72։

2 Զամչ. պատմ. Հայոց, հատոր Ա. երես 359։

մեր նախահայրն Ս. Գրիգոր"[1]։

Ահա ասով կ'ուզէ թարգմանիչ պապադաւանը ցոյց տալ, թէ Ս. Գրիգորի դայեակն ու սնուցանողները (որոնք վերը յիշուեցան) Հռոմայեցի էին. և Լուսաւորիչ անունց հաւատքն ունէր, որոց և Յոյն ըլլալը անգամ հաստատելու չվստահանար, թող թէ Լատին ըլլալը. ուր կրնայ ցոյց տալ արդեօք, թէ Հայաստան նաև Վաղարշապատ քաղաքը այն քարբարոս ժամանակի մէջ այդ ազգերէն եկած են, որոնք Յունաստանի սահմանագլուխն ևս չտեսան, և ոչ թէ Հայաստանու կեդրոնը, երբ ամէն ազգ իւր հայրենեաց մէջն էր։

Խոսրով քրիստոնեաները կը նահատակէր, որոնք յայտ է թէ, իւր ազգէն էին. ապա ի՞նչպէս կ'ըլլայ, որ Յոյնը և Լատինը Վաղարշապատ ըլլան, և Ս. Գրիգորը իրենց հաւատքովը սնուցանեն, և Կեսարիոյ եկեղեցին Պետրոսի գլխաւորութիւնը ճանչնայ, որ չէր ընդուներ և չէր խոստովաներ զայն. իսկ թէ այն ժամանակի Կեսարիոյ եկեղեցին Յունաց ալ որ ըլլար, դարձեալ այդ խոստովանութիւնը չունէր. և մեր Հայաստանեայց նախկին Լուսաւորչաց Թադէոսի և Բարդուղիմէոսի աշակերտութենէն առած էր իւր հաւատքը, և անոր եպիսկոպոսքը յիշեալ առաքելոց յաջորդութեամբ անոնց փոխանորդքն էին և կը կառավարէին զեկեղեցին։ Ահա անոնց բովանդակ պատմութիւնը աչքէ անցընելով, և ոչ մէկը չի տեսանք որ Հռոմայ աթոռոյն գլխաւորութեանը վերայ այն հաւատքը ունենայ, ապա ուստի՞ կրնայ հաստատել թարգմանիչը, որ "Կեսարացւոց եկեղեցին 'ի սկզբանէ այն հաւատքն ունէր Ս. Պետրոսի աթոռոյն վերայ". և չկրնար ցուցընել և վկայութիւն ալ չունի, թէ "Ան հաւատքին մէջ ծնաւ, սնաւ ու զարգացաւ մեր նախահայրն Ս. Գրիգոր"։ Այսպա թող

1 Աթոռ Ս. Պետրոսի, երես 225։

զմ՝նք, որ Պետրոսի աթոռն ալ առանց մէկ վկայութեան Հռովմէն վերցընէ, Կաղարշապատ քաղաքը մեր Հայաստանեայց եկեղեցւոյ Թադէոսի և Բարդուղիմէոսի Առաւարչական աթոռը բերէ դնէ, և այնպէս անամօթութեամբ գրէ. "Նա ուղիղ բանը կը ցուցընէ, որ առ մեր առաքելաշնորհ Հայրապետը արևմուտքէն կամ Հռովմէն Հայաստան գարձած եկած ըլլալով, հարկ էր, որ նոյն վարդապետութիւն, նոյն ուսմամբ եկած, ու նոյնն ալ քարոզած ըլլայ"[1]։

Այսուհետև թէ որ կ՚ուզէ, Պետրոսի աթոռը Կաղարշապատէն ալ վերցընէ, ու յաթոռ բարձրութեան թող դնէ, և անոր "Թադաւորական գերագունութիւնն" ալ[2] Այսուծմէ թող պահանջէ. Հայոց եկեղեցին Քրիստոսի հրամանէն դուրս՝ Պետրոսի այդ խոստովանութիւնն ըրած չունի, և ընելիք ալ չունի մինչ՝ի կատարած աշխարհի, որով պապը ըլլայ մեր եկեղեցւոյն "Ընդհանուր իրաւաբանութեան". և մեք ալ առաքելոյն պատասխան չունիմք տալու. միայն թէ մեր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութիւնը յառաջ կը բերեմք այն ամէն անիրաւ պահանջմանց ու ստութեանցը դէմ, որ մեր Ս. Հայոց վերայ բարուրանօք գրած է առաքելական թարգմանիչը, աս դիէն ան դիէն շինծու թղթեր ժողվելով։

Արդ Ս. Գրիգոր Առաւարչի՝ որ Հաւատոյ համար Քրիստոսի Տեառն մերոյ չարչարանաց պակասութիւնը լցուց այնքան դառն տանջանօք. Ստուած ողորմեցաւ Հայոց ազգին, որ անոր աղօթիւքը՝ նորէն պայծառացաւ քրիստոնէութիւնը. Ցրդաս թագաւորի նման կռապաշտ մարդուն քարացեալ սիրտը այնքան կակղացոյց, որ մամի պէս շուտ մը Գրիգոր Առաւարչի ձեռօք և անոր Քրիստոսական քարոզութեամբը սուրբ հաւատոյ դրոշմը ընդունելով, սկսաւ կատա-

---

1 Աթոռ Ս. Պետրոսի, երես 225-226։
2 Անդ. երես 188-316։

բեալ հեզութեամբ բոլոր ազգը քրիստոնէական նախկին լուսոյը լուսաւորել. և Հայոց Քրիստոսական եկեղեցւոյ կառավարութիւնը, որ քաղաքական իշխանութեան բռնութեան ներքևն էր, ազատել, "Առնելով զՀայաստան ամէն՝ երկրպագուս Ս. Երրորդութեան", նորադարձ՝ աբքային ներգործութեամբը։

Եւ որովհետև Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ ձևը՝ Աստուած Ս. Գրիգորի տեսլեանը մէջ երևցուց, անոր համար ևս 'ի պատիւ Տեառն Աստուծոյ և 'ի շնորհս այսքան սքանչելեաց նորա, այն տեղը ընտրեցին Աստուծոյ անուանը փառաբանութեան տեղի, Հայոց ազգի հաւատոյ Մայր և Գլուխ ամէն եկեղեցեաց, և շինեցին զեկեղեցի, անոր առաքելական իշխանութեանը փոխանորդ կարգեցին զնոյն ինքն Ս. Գրիգոր, որ այս ամէն քրիստոնէութեան լուսաւորութեանը համար՝ Հայոց ազգիս Երկրորդ Լուսաւորիչ անունը ստացաւ։

Եւ ահա՛ այս առաքելական եկեղեցւոյ փոխանորդութիւնը առնելու համար Կեսարիա գնաց Գրիգոր Լուսաւորիչ, ուր մեր նախկին Լուսաւորչաց եկեղեցական իշխանութիւնը յաջորդաբար կը շարունակուէր. և Լևոնդէոսէն ձեռնադրուելով, յամի Տեառն 302 նոյն Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց եկեղեցական իշխանութիւնն ու հովուապետութիւնը փոխադրեց Վաղարշապատ Հայաստանու կեդրոնը, ուր տեղ Աստուած ընտրեց աթոռ իշխանութեան իւր Առաքելոցը, և անոնց իշխանութեանը արժանացոյց արդեամբք փոխանորդ ելլալ զՍ. Գրիգոր, որ առաքելական աթոռոյն Episkoposապետ և Մայր Եկեղեցւոյն ընդհանրական Գլուխ եղաւ, և այս ընդհանրական եկեղեցւոյ կառավարութեը մէջ միացոյց՝ Եդեսիոյ, Կեսարիոյ, Սիւնեաց և Աղուանից Հայոց եկեղեցեաց առաքելական յաջորդութիւնները՝ իւր ընդհանուր քրիստոսական փոխանորդութեան ներքևը։

Ահա Ս. Գրիգորի Հայաստանեայց առաքելական գահին վոխանորդութիւնը, որ նոյն առաքելական իշխանութեամբ բոլոր Հայաստանը կեդրոնացոյց և իւր առաքելական իշխանութեան և հովուապետական գաւազանին ներքևն առաւ. և ամէն տեղ, ամէն քաղաք և ամէն նահանգ եկեղեցիներ կանգնեց և քահանաներ ձեռնադրեց։

Արդ՝ թէ որ Լուսաւորիչ իւր հաւատքը Հռոմէն բերած էր, ապա ինչո՞ւ "Ուղիղ բանը չի ցուցներ որ աս մեր առաքելաշնորհ Հայրապետը Հռոմէն դարձած եկած ըլլալով, նոյն վարդապետութիւնն ալ քարոզած ըլլայ". ինչո՞ւ այս ամէն քրիստոնէական եկեղեցոյ հաստատութիւնները ընելու՝ պապէն հրաման չխնդրեց, կամ անոր պատգամաւորը բերել չի տուաւ իբրև իրեն գլուխ և հրամանատու պապին կողմանէ. որ չէ՞ թէ իւր հաւատքը Հռոմէն բերած չէր, այլև Հռոմ ևս դեռ գնացած չէր. երբ Հայաստան իւր հաւատքը քարոզեց, երբ վիրապէն դուրս եկածին պէս՝ Գրիգորի անուամբը բժշկեց զԹագաւորը, և Կեսարիա առաքելական յաջորդութիւնը առնելէն ետքը, եկեղեցիներով և քրիստոնէութիւն պայծառացոյց զՀայաստան։

Թէ որ Լուսաւորչի Հռոմ չգնալէն այս սուտը կը հանէ, զարմանք չէ, որ անոր գնալէն ալ միւս սուտը ստեղծէ, թէ Լուսաւորիչ իւր հաւատքը Հռոմէն բերաւ, և թէ՝ Լուսաւորչի հաւատքը՝ Պետրոսի ու անոր յաջորդ պապերուն գլխաւորութիւնը ճանչնալն էր։

Ագաթանգեղոս ականատես պատմիչը Տրդատայ համար կը գրէ, որ Հռոմ գնաց իւր քրիստոնէութենէն տասն և վեց տարի ետքը, յասելն. "Այսրն Կոստանդիանոս արքային Տրդատայ իբրև եղբօր սիրելւոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, առաւել վասն աստուածածանութեան նորա, դա-

ջինս առեալ կռէր ընդ նմա , միջնորդ կալեալ զհաւատն , որ 'ի Տէր Քրիստոսն էր , զի անշուշտ մինչև 'ի բուն զհաւատարիմ սէրն 'ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն"։

Այլ թէ Լուսաւորիչը ձեռնադրութի՞ առնելու , պապին հետ դաշինք դնելու , անկէ պատրիարգական իշխանութիւն առնելու , Հայոց եկեղեցւոյն ընդհանուր կառավարիչ այնուհետև զպապը ճանչնալու , 'ի բանս հաւատոյ պապին վճիռներուն հնազանդելու և ընդհանրապէս պապէն կախումն ունենալու գնաց , ինչպէս Հ. Զամչեանը սնոտի աշխատանօք կ'ուզէ հաստատել առանց վկայութեան , և գուցէ նիւթ տուած է Հ. Պալճեանին այսօր իւր ազգակործան թոյնը կազմելու , անոնց ամէնն ալ առանց ականատես վկայի մը չեմք ընդունիր երբէք . և վասն զի Ա. գամիանդեզոս ականատես պատմիչը երբէք այդպիսի բան գրած չէ , վասն այսորիկ պապական ոգւոյ ինքնատեղծ ստութիւններ , և ծ. դարէն ետքը Քրիստոսական եկեղեցւոյ ամենամաքուր աւանդութեանց վերայ՝ Հռոմայ չար մշակաց ձեռքը ցանուած որոմանց պտուղն են։

Ի՞նչ պատճառ կայ , որ պապին գլխաւորութիւնը հաստատելու համար մեր ազգային պատմիչները կը թողու , ու Ոսյնալդոսները , Մենեդիկտոսներն ու ուրիշ Լատինացւոց նախապաշարեալ մարդիկը վկայ կը կոչէ . իսկ Լուսաւորչի Հռոմ գնալը , վասն զի այլազգի պատմիչները չեն ընդունիր , երաղապատում Փոստոսի նման աղճատախօս պատմիչներով կ'ուզէ հաստատել . վասն զի անոնց՝ այսինքն այլազգի պատմիչներուն և ո՛չ մէկը Տրդատայ Հռոմ գնալը անգամ չեն ընդունիր , թո՛ղ թէ Լուսաւորչի գնալը . եթէ Տրդատայ Հռոմ գնալը տարակուսական է Յոյն մատենագրաց քով , և նոյն իսկ Կոստանդիանոս կայսեր վարքը գրողը ամենևին չյիշատակեր այդպիսի

համբաւաւոր դէպք մը, որոյ համար Տրդատ գնացած պիտի ըլլայ 'ի Հռոմ, ապա Լուսաւորչի գնալը բոլորովին սուտ և շինծու կ'երևի. և այս ամէն ստութիւնները տարածելով, պատճառ կու տան մեզի որ, վաղը կամ միւս օրը՝ Գաղղիական Եկեղեցոյ ըստուած գիրքը, որ Իւրոպական լեզուներով լցուած է աշխարհքս, Հայերէն լեզուաւ ևս տպենք ու տարածենք. և աշխարհիս ճշմարտութեանը ընծայեմք պատերուն անարժան և միանգամայն փառաւոր գործքերը՝ 'ի փառս սրապականաց, որոնք զայնպիսի սուրբ մարդիկը Քրիստոսական եկեղեցոյ սրբութիւնը ընդհանրական գլուխ կամին կացուցանել։

Իսկ մեք ներքին համոզմամբ համոզուած եմք Ագաթանգեղոսի ականատես վկայութիւնը վերայ, Լուսաւորչի Հռոմ չգնալուն համար. որովհետև նա ինքն Ագաթանգեղոս Տրդատայ ատենադպիրը ըլլալով, անշուշտ ներկայ էր անոր հետ 'ի Հռոմ. և Լուսաւորչի համար չգրեր, թէ հաւատքը Հռոմէն բերաւ, կամ միանգամ ձեռնադրեալն՝ կրկին ձեռնադրուեցաւ պապէն, և անոր գլխաւորութիւնը խոստովանեցաւ. այլ այսչափ միայն կ'ըսէ որ, իբրև կենդանի նահատակ Տրդատ հետը տարաւ [1]։ Ուստի այսպիսի խարդախ բանէ թարգմանիչը կը հանէ, թէ "Կեսարացւոց եկեղեցին 'ի սկզբանէ աս հաւատքն ունէր Ս. Պետրոսի աթոռին գլխաւորութեամբ ելլայ. և աս հաւատքին մէջ ծնաւ, սնաւ ու զարգացաւ մեր նախահայրը Ս. Գրիգոր". և թէ՝ "Հռոմէն Հայաստան դարձած եկած ըլլալով, հարկ էր որ նոյն վարդապետութեամբ ու նոյն ոսմամբ եկած ու նոյնը քարոզած ըլլայ". (Աթոռ Ս. Պետրոսի, երես 225, 226)։

---

1 Աստ վերայ ալ այսօր մեք կը տարակուսիմք, և կը դուշակեմք, որ անշուշտ այս կտորը պապականք սպրդած են Ագաթանգեղոսի ձեռագիրներուն մէջ, երբ որ դաշանց ըսուած թուղթը իրենց բնածին խարդախ հոգւոյն հնարեցին։

Ի՞նչ զարմանք ։ որ Ագաթանգեղոսը Լուսաւորչի հետ Հռոմ ըլլայ ։ և անոր Հռովմէն հաւատք առնելը չգրէ , իսկ Հ. Պալճեանը այսօր ելլէ , և ինքը աւելի հաւատարիմ ըլլալով Լուսաւորչին , անոր Հռովմէն առած արտօնութիւնները , որ այնքան դարերով ատուքեան մէջ ծածկուած էր , և զոր պատմիչը լռած է , ինքը յերևան հանէ . և զ Լուսաւորիչ հաւատարիմ ճանչցող մարդը՝ ինքը անոր անհաւատարմութիւն ընէ , և նոյն անհաւատարիմ հոգւով Ագաթանգեղոս պատմիչը սուտ հանելէն ետև , Մովսէս Խորենացին ևս ստէ , որ ամենևին բան մը չգրեր Լուսաւորչի՝ Տրդատայ հետ Հռոմ գնալուն վրայօք . և թէ՝ "Հայոց նորածին եկեղեցւոյ առաջին Հովիւը՝ եկեղեցւոյ գլխոյն հետ հաւատոյ ու հաղորդակցութեան միութեան կապով՝ անխզելի ևս կը կապուէր . և էր Հայ ժողովուրդը՝ որ օտար դաւթէ Քրիստոսի ոչխարաց դաւիթը մտած էր . Ինդ դուռն ոչխարաց՝ յանձն իր հովուին՝ կը լսէր ու կը ճանչնար դռնապանին , Պետրոսի յաջորդին , ձայնը , կ'երթար անոր ետևէն , և կ'ըլլար 'մի հօտ և մի հովիւ' ". (Ագթոռ Ս. Պետրոսի , երես 227 , 228 , 229) ։

Մովսէս Խորենացին՝ Լուսաւորչի Հռոմ գնալը չգրելէն ետև , երբ որ Տրդատայ Հռովմէն գալը կը գրէ , այս ալ ցոյց կու տայ , որ Կեսարիա այն ժամանակը Հայոց տէրութեան ձեռքն էր , և Հայք էին այն տեղ . որոյ համար այսպէս կ'ըսէ . "Տրդատայ Հռովմէն եկած ժամանակը՝ Կեսարիոյ նախարարքը դիմաւորեցին ու ընդունեցին զինքը իբրև զիւրեանց թագաւոր" ։ Ասկէ յայտնի է , որ Կեսարիոյ եկեղեցին Յունաց ալ չէր՝ այլ Հայոց . ուստի Լուսաւորիչ անկէ ձեռնադրութիւն առնելով , չկրնար Յունաց եկեղեցին Հայոց եկեղեցւոյն ծնող ըլլալ . որովհետև այն ալ Թադէոս առաքեալէն առած էր , ինչպէս նախընթաց գլխոյն մէջ ըսինք . և այժմ ևս

ազգիս նոր մատենագրին հետ ըսեմք , որ "Հայոց եկեղեցին էր 'ի Բրիտոսէ հիմնեալ, Յերուսաղէմէ սկսեալ և յառաքելոց շինեալ, երեք դար տուեց զանազան եպիսկոպոսաց կառավարութեան տակ Հայաստանի զանազան քաղաքներուն մէջ, Փոքրն Հայաստան , կամ Առաջին Հայք ըսուած երկիրը՝ 'ի Կեսարիա , Թադէոսէն մինչև Ղևոնդ . յորմէ մեր Լուսաւորիչը ձեռնադրուելով, Թագաւորն ու ազգը միանգամայն մկրտեց . և Հայոց հալածուած Բրիստոսական եկեղեցին՝ 'ի լոյս քրիստոնէութեան վերստին հանեց". (Կրօնագիտութիւն Սալ. երես 100) :

Ըստ այսմ թէ որ Մովսէս Խորենացին Լուսաւորչի Հռոմ գնալը չգրեր , ապա ա՞յս է եղեր Հ. Պալճեանին հաւատարմութիւն ճանչնալը , որ մեզմէ՝ իւր ստութեանը "Գլուխ ծռել" կը պահանջէ , երբ որ ինքը Խորենացւոյ ճշմարտութեանը գլուխ չծռեր ։ որով և իւր հաւատարմութիւնը ազգին առջևն ևս կորսնցընելով , կը ստէ զԽորենացին , երբ իրեն միաբանակից Ս. Դաստուրակին պատմութիւնը գրողը առանց Խորենացւոյ վկայութեան՝ ամէն բան սուտ կը հանէ . այս ծերունազարդ ալեօք մարդն է ահա , որ ազգիս ստուգապատում մատենագիրն է . և Թարգմանիչը անոր հակառակ գրիչը ձեռք կ'առնու իրեն ստախօս լեզուն շարժելու . "Հայաստանեայց առաքեալը հաւատարիմ աշակերտ էր Փրկչին , ի՛նչ որ բերնով կը սորվեցընէր՝ գործքով ալ կը կատարէր . և այն խնարհ անձը ; որ յանձն չէր առներ երթալ նախիլ սիեղերական ժողովոյ մը մէջ . . . . . երբ որ Տրդատ եռանդուն ու քաջ Թագաւորը փառօք և շքով և մեծ պատրաստութեամբ կ'երթար Հռոմ ; ինքն ալ կ'ընկերանար ու կը դիմէր Ս. Պետրոսի յաջորդը մեծարելու". (Ալթառ Ս. Պետրոսի , եր. 227) ։

Մեծ հարազատութիւն է որ այսօր Հ. Պալճեանը Լուսաւորչին կ'ընէ . անոր չունեցած արտօնութիւն-

ներոնը՝ կ'ուզէ անոր եկեղեցւոյ զաւակները գողնալ, և Հռոմայ այն կեղծեալ հաւատքին փոխարէն՝ պապին ընծայել։ Եթէ ստուգիւ Լուսաւորիչ՝ հաւատքը Հռոմէն առած ըլլար, այդ առաքելութիւնն ալ՝ ոչ թէ Պալճեանին, այլ Լուսաւորչին կը վայելէր որ ընէ պապին։

Բայց կ'երևի որ Հ. Պալճեանը՝ ըստ այսմ մասին աւելի հաւատք ընծայած է Հ. Զամչեանին ըստ հաճոյս ժողված՝ Հայոց պատմութեանը, որ Ա. հատորոյն Բ. գրոց ծանօթութեանը մէջ, երես 636, Ս. Գրիգորի Հռոմ գնալուն վրայօք չկրնալով Ագաթանգեղոսէն վկայութիւն մը բերել, և նոյն ակնառոս պատմիչովը հաստատել, յետագայ մարդոց և ուրիշ անհաւատարիմ անձանց անվաւեր վկայութիւնները աս դիէն ան դիէն կը ժողվէ ու կ'ըսէ, թէ Լուսաւորիչս Տրդատայ հետ Հռոմ գնաց, և Մեղքեսորոս պապէն ձեռնադրութի առաւ, և այլն։

Ձեռնադրութիւնը Հռոմէն կ'առնու Լուսաւորիչ, բայց Ագաթանգեղոս զ Լուսաւորիչը՝ նախ քան Տրդատայ 'ի Հռոմ գնալը, Եպիսկոպոս և Քահանայապետ տանս Հայոց կը կոչէ։ Ուստի ասոր ալ պէտք չէ որ զարմանանք, վասն զի 'ի վաղուց անտի գիտէինք, որ այս Զամիչը կուտերով լեցուն էր՝ մինչդեռ պապադաւանութեան մէջ կը տանջուէր, որ և նոյն բանը շարունակելով, կը դառնայ իրեն ստութեանը ինքը վկայութիւն կու տայ թէ, "Ամենայն մատենագիրք մեր վկայեն, թէ . . . . . Ս. Գրիգոր գնաց 'ի Հռոմ"։

Բայց յետոյ Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնը խոստովանելով, և մեր եկեղեցւոյ կարգաց ուղղութեանցը ջատագով հանդիսանալով, իւր Վէմ հաւատոյ ըստուած գրքին մէջ, ամենևին չյիշեր, թէ Լուսաւորիչ իւր հաւատքը Հռոմէն բերաւ ու Հայաստան քարոզեց։

Իսկ թէ որ վաղը կամ միւս օրը Հ. Պալճեանը իւր միւս ծառայակցացը հետ ելլէ ու ըսէ, թէ Հ. Զամչեանին յառաջ բերած պատմիչներուն և նամակագիրներուն գրուածքները ըստ այսմ մասին մեք կ'ուրանամք, որոց մէջ հաւատարիմ մարդիկ նաև Կաթուղիկոսներ կան (երես 637, 638, 639), արդէն պատասխանը կու տամք, որ բոլոր եկեղեցական խնդրոց համար, եթէ ականատես և արժանահաւատ պատմիչներ չվկայեն, չեմք ընդունիր ամենևին, և սուտ ու կեղծիք կը ճանչնամք ուրիշի մը գրուածքը ըստ այսմ մասին։ Իսկ պապական արքանեակներուն՝ ամենևին անոնց կարգը անցընելու անգամ արժանի չեմք համարիր, թէ՛ իրաւ ըլլայ և թէ սուտ։

Վասն զի՝ այսպիսի կարևոր խնդրոյ մը համար, այսինքն Լուսաւորչի Հռոմ գնալուն, եթէ ստոյգ ըլլար, անշուշտ Խորենացին չէր լռեր. ուստի մեք և Խորենացւոյ նման հաւատարիմ "Օրերունաղարդալեօք" պատմիչը Թողլով, Ինչպանդի նման աղճատախօսի մը չեմք կրնար հաւատալ. զոր պապական արքանեակները ընդհանրապէս իրենց գրքերուն մէջ անհաւատարիմ կը ճանչնան. իսկ այս կարևոր խընդրոյն վրայօք, որ մէկէ մը վկայութիւն չունին իրենց ստութիւնն արդարացընելու, կը դառնան Ինչպանդին հաւատարմութիւն կ'ընծայեն։

Այս խղճմտանքով ալ Հ. Զամչեանը՝ ուրիշ նոր մատենագրի մը դժկամակութիւնը կը ջանայ ջրել, (հատ. Ա. եր. 639), որ չէ թէ Լուսաւորչի Հռոմ գնալը միայն՝ այլև Տրդատայ գնալն ևս միանգամայն սուտ կը հանէ. Ագաթանգեղոսի ըսածը տարակուսական ցուցընելով. ըստ որում Կոստանդիանոսի վարուցը ականատես պատմիչը գրած չէ՝ վերը մեր ըսածին պէս։ Եթէ այլազգի պատմիչները անգամ առանց ականատեսութեան պատմիչի մը գրուածքը չեն ընդունիր, ապա ո՞րպէս կրնամք մեր Ս. Լուսաւորչի վրա-

յօք՝ Ագաթանգեղոսի և Խորենացւոյ չգրած բանը ընդունիլ։ Այո՛ Հ. Զամչեանը ևս այս իւր ստուգութիւնը առանց վկայութեան՝ իբրև ճշմարտութիւն կ'ընդունի. և նոր մատենագրին ճշմարտութիւը հանդերձ վկայութեամբ՝ սուտ կը համարի, յասելն. "Ընդդէմ այսմ ճշմարտութեան դժկամակ ցուցանէ զինքն Յովհաննէս Ստիլտինկ նոր մատենագիր 'ի քննութեան Ագաթանգեղոսի"։

Ուստի այսպիսի ստութիւններէ Հ. Զամչեանը այս օգուտը կը քաղէ, որ իւր սարսափելի ստութեան հատորներն ալ հիմակուհիմա կը մաքրուին. որովհետև այնպիսի պատմաբանական գրեանք պապականաց խաբէութեան գործիք ըլլալով՝ մեզի անընդունելի են մինչև յոյժ, և Ֆրոբականտայի ատեանը քննուած գիրքը՝ Հայոց ազգին պատմութի չկրնար ըլլալ. ասոր համար ալ այժմէն կը ծանուցանեմք Մխիթարայ ուխտին՝ 'ի բանս հաւատոյ զրաջան և զրախօս երկախտմբ մշակացը, որ եթէ մեր ազգին պատմութիւնը կը շարունակեն, ինչպէս լսած եմք, և Ֆրոբականտայի ատեանը զանիկայ պիտի քննէ, մեր ազգին ամենևին ընդունելի չէ՛. վասն զի նոյն մեր ազգին պատմութեան շարունակութիւնը արդէն աւելի՛ լաւ և աւելի՛ հաւատարմութեամբ գրած ու պատրաստած ունիմք, և կարօտ չեմք իրենց գրուածոցը. որոնք եթէ նախնի մատենագրաց ճշմարտութիւնը խարդախութեամբ կը փոփոխեն, ոչ գիտէ, թէ այժմեան իրենց գրելիքներուն մէջևս ի՞նչ զրպարտութիւններ և ի՞նչ պակասութիւններ (որովք իրենք՝ երբեմն երբեմն ազգը վրդովեցին) ազգերնուս վերայ դրած ու ինքզինքնին արդարացուցած չեն, կարծելով թէ այնպիսի ստութիւններ այսուհետև գին կ'ընեն, և իրենց՝ յարգ և պատիւ կը վաստակին, Աստոնց բոլորը թողունք որ ժամանակը յայտնէ. մեք դառնամք բանիս ընթացքը աւարտել։

Թէ որ ստութիւնը կրնայ ճշմարտութեան տեղ անցնիլ, ուրեմն այժմեան պապին համար ալ վաղը կ'ելլէ մէկը ու կը գրէ, թէ Հռոմայ պապը 1848ին յեղափոխութեանը առեն՝ փախաւ 'ի Ռուսիա, և Ռուսի դաւանութիւնն ընկալաւ. երբ ճշմարտութիւնը ցոյց կու տայ, որ պապը Հռոմէն փախաւ Կայեթայ քաղաքը գնաց։

Թէ որ այսպիսի սխալ պատմութի՛ մը ընդունելի ըլլայ Հռոմայ եկեղեցւոյն, մեզի ալ ընդունելի կ'ըլլայ Ռիւզանդի նման երաշապատումներուն վկայութիւնը՝ Լուսաւորչի Հռոմ գնալուն և հպատակելուն վրայօք։

Հաւատարիմ մարդիկ ևս ըլլայլին, դարձեալ որովհետև ականատես և վկայեալ պատմիչէն առած չեն, իսպառ կ'ուրանամք, վասն զի՝ ի՞նչ ծանր բան է Ռիւզանդներու տուած սուտ վկայութիւններն ուրանալ. երբ Հ. Պալճեանն ու իւր բոլոր պապական համախոհները՝ Ալեքսանդրի մէջ Պրիստոսի Տեառն մերոյ տուած ճշմարտութիւնները կ'ուրանան, և կը հերքեն այն ամէն վկայութիւնները, որոնք Պետրոսի՝ միւս առաքելոց հետ մի մարմին ըլլալն ու միմեանց հետ հաւասարիշխանութիւն ունենալնին կը հաստատեն. և այնքան սուտ սուտ մեկնութիւններ կու տան անոնց՝ պապին համար աշխարհիս փառքը վաստակելու, որովք աւելի կը նսեմանայ նոյն փառքը այս լուսաւորեալ դարուս մէջ, քան թէ կ'առաւելու։

Ճշմարտութիւնը խնդրող մարդերը՝ այսպիսի եկեղեցական կարևոր խնդրոց ճշմարտութիւնն ալ Ս. Գրքէն և ստուգաբան պատմագիրներէն կը փնտռեն. և անոնցմէ դուրս մոցածին բաներու ո՛չ կը հաւատան և ո՛չ իբրև ճշմարտութիւն կ'ընդունին. ուստի ճշմարտութեան տեղ չքռներ, եթէ վաղը Պալճեանէն աւելի զրպարտիչ մէկը ելլէ՝ Հայոց այժմեան Կաթուղիկոսը Հռոմ գնաց ըսելով սուտ մը հանէ և

գրով աշխարհք տարածէ։ Թէ որ այսպիսի բաները ճշմարտութիւն տեղ կ'անցնին, և պապին գլխաւորութիւնն ալ այսպիսի ստութիւններու ապաւինած է, մեք աւելի ճշմարտութեամբ կրնամք գրելու, թէ բոլոր Մխիթարեանները հիմակուհիմա ներքին համոզմամբ համոզուած են վերստին իրենց մայրենի եկեղեցւոյն ծոցը դառնալու, և ամէն տեղ ու ամէն երկիր պատահած ատեննին, Հայոց ջատագով են, և Հայոց եկեղեցին Հռովմայ եկեղեցիէն վեր կը բռնեն միշտ։

Ահա այսպիսի ստութիւններով Հ. Պալճեանը իւր թարգմանութիւնը յաւելուած մը ըրած է. և առանց վկայութեան, վկայութի՞ կ'ուզէ մեր Հայաստանեայց եկեղեցիէն՝ Հռովմայ պապերուն գլխաւորութեանը համար. և այս վկայութիւնները, ինչպէս ըսած եմք, քանի մը հերձուածողաց անվաւեր և շինծու թղթերն են, որոց պատասխանն ալ կու տամք այս վերջին գլխոյն մէջ։

ԳԼՈՒԽ Ե.

Հայապանեայց եկեղեցւոյ Հայրապետաց և Վարդապետաց անուամբը՝ սուտ և շինծու ըղձերուն հերքումը. անոնց ջաջերը՝ պապականներէն գրուելն ու անոնց գրուելուն պատճառը։

Ա. ՊԵՏՐՈՍԻ և Հռովմայ պապերուն գլխաւորութեանցը համար, զոր Հ. Պալճեանը Ընթռ Ա. Պետրոսի ըսուած գրքին յաւելուածոյն մէջ՝ իբր Հայաստանեայց եկեղեցիէն վկայութիւններ կը բերէ, այն ամէնը ասկէ կը հետևցընէ թէ՝ Ա. Լուսաւորիչ

Հռոմի գնացած ըլլալով, և ինքը՝ Հայոց եկեղեցւոյ գլուխ զպասը խոստովանելով, իւր փոխանորդներն ալ ընդհանրապէս բոլոր ազգին հետ՝ այնպէս գլուխ կը ճանչային զպասը, և Հռոմայ գահին կը հպատակէին, որ վասն այնչափ հպատակութեան թղթեր ալ կը գրէին։

Բայց մեր "Օրերունի ալեօք" պատմիչը, որ իւր հաւատարիմ գրիչովը Ս. Գրիգորի Հռոմ գնալը չգրեր, և նոյն Պալճեանը անկէ վկայութիւն չունենալուն, զանազան մարդիկներէ լսածներուն միայն ապաւինած է, մեք ևս սուտ կը հանեմք այս տեղս նոյն թղթոց շատերը, և կը համառօտեմք խօսքերնիս։

Արդ՝ այս թղթերուն բոլորն ալ սուտ հանելը առջևնիս դրուած է. բայց առ ժամս համառօտ խօսելու համար ուրիշ բարեպատեհ առթի կը թողումք, և միայն անոնց ամենասուտ մասերը փշաքաղ կ'ընեմք աստանօր։

Հ. Պալճեանը իւր յաւելուածոյն մէջ երբ կ'ըսէ, թէ Լուսաւորիչ Հռոմ գնաց և պապին հպատակեցաւ, անկէ ետև անոր յաջորդացը համար այսպէս կը գրէ. "Այս հաւատքը Ս. Լուսաւորչէն անցաւ իր յաջորդաց վրայ նոյն հաստատութեամբ ու եռանդեամբ. և ահա կը տեսնենք որ Ս. Վրթանէսի կաթուղիկոսութեան ատեն Արդիկէ 347ին գումարուած Ս. Ժողովքին ամենայն մեծարանքով կը հպատակի Հայոց եկեղեցին". (Ընթռ. Ս. Պետրոսի, եր. 229)։

Արդ՝ թէ որ Հայոց եկեղեցւոյ այս հպատակութիւնը՝ զՀռոմայ պապը գլուխ խոստովանիլ, և Արդիկէի ժողովքը պապին հրամանաւը ըլլալով, անոր մէկ կարգ ու եկեղեցւոյ կանոններ ընդունիլ կը համարի, ահաւասիկ Վրթանէս հայրապետին Արդիկէ գնալը ամենևին պատմագրաց մէջ չկայ, և ո՛չ իւր ստութեան ապաւէն Հ. Պալճեանը գրած է. ապա ի՞նչպէս կը համարձակի ըսել, թէ Հայոց եկե-

ղեցին Սարդիկէի ժողովքին, այսինքն պապին կը հը-
պատակի։ Այլ ըստ որում պապին այն ամէն իրա-
ւունքն ու իշխանութիւնը՝ առանց աստուածային կա-
մաց և իրաւանց է, զոր բոլոր քրիստոնէից եկեղեցի-
ներէն կը պահանջէ, որպէս թէ Քրիստոս Պետրոսին
տուած և անկէ ետ պապին անցած է, բայց և ոչ
մէկէ մը վկայութիւն չկրնալով բերել, այսինքն ոչ
Ս. Գրքէն և ոչ ալ արտաքին գրքերէն, Հայոց եկե-
ղեց-ոյ Վկայ-ութ-ն անուանով ստութիւններ կը հրատա-
րակէ, և ատոնցմով պապին գլխաւորութիւնը հաս-
տատել, և զպապը Հայոց եկեղեցւոյն կարգ ու կա-
նոն տուող ցուցընել կ'ուզէ։

Բայց Ս. Վրթանէս Հայոց առաքելական եկեղե-
ցւոյն փոխանորդ ըլլալով իւր հօրը աթոռը, և իւր
նախորդներէն գիտնալով, որ իւր աթոռը՝ միւս ազ-
գաց հետ եկեղեցական իշխանութեանց մէկն է,
և ամէնն ալ Երուսաղէմայ եկեղեցիէն սկսելով։
իւր եկեղեցւոյ բարեկարգութեանը համար՝ չէ՛ թէ
Հռոմայ պապէն կամ անոր գահէն, այլ Երուսա-
ղէմայ աթոռէն և անոր գահակալ Մակար եպիսկո-
պոսէն խնդրեաց զկարգ և զկանոն։ և անով բարե-
զարդեց իւր առաքելական աթոռը՝ Հայոց եկեղե-
ցին, ինչպէս գրուած է 'ի Կանոնագիրս, ու նաև
Զամչեանի Հայոց պատմութեանը մէջ։ (Տե՛ս հատոր
Բ. երես 422)։

Ահա՛ Հ. Պալճեանին այս մէկ ստութիւնը յառաջ
բերելով, անոր գիրքը բովանդակ՝ գրաւորական աշ-
խարհի առեանին առջև կը հանեմք, որ ամէն լուսա-
ւոր մտքերը դատեն, քննեն և իմանան, թէ միւս
այն յառաջ բերուած սուտ վկայութիւնները ևս
քանի՞ առաւել սուտ են, և ի՞նչպէս մէկ գրքէ մը
վկայութիւն չունեցած՝ իւր այն ստութիւնները՝ Վ-ի-
յ-ութ-ն՝ Հայոց եկեղեց-ոյն՝ 'ի վերայ գլխաւոր-ութեան Ս.
Պետրոսի և հանայապետաց Հռոմայ կը կոչէ։

Միայն մեր եկեղեցին, ինչպէս միշտ ուղղափառութեամբ խոստովանած է, այժմ ևս այն ամէն սուրթեց դէմ կը խոստովանի, թէ մինչև Ժ. դարը Հռովմայ եկեղեցւոյն հետ մի, և 'ի հաւատոյն համաձայն էր. ասոր համար և մեր Վարդապետներէն շատերը՝ այն ժամանակը անոնց հետ միաբանիլ կ'ուզէին. բայց այն ժամանակէն ետև Լատինացիք շատ բաներ և օտար վարդապետութիւններ խառնեցին հաւատոյ մէջ, զոր ոչ Քրիստոս պատուիրեց և ոչ Պետրոս քարոզեց. այս պատճառաւ Հռովմայ եկեղեցին Հայոց և Յունաց ընդհանրական եկեղեցիէն բաժնուեցաւ. և այս բաժանմունքով մինչև ցայսօր ալ Քրիստոսի ուղղափառ եկեղեցւոյ միութենէն զատուած է նոյն Հռովմայ եկեղեցին. բայց և այնպէս կ'ուզէ այս միութեանը ընդհանրական գլուխ ըլլալ, երբ ինքը հերձուած է անկէ.

Եւ ահա ասոնք են այս օրուան օրն՝ զանիկա հերձող նոր ու օտար վարդապետութիւնները, որոնք ընդհանրական ուղղափառ եկեղեցին չունի և չխոստովանիր իբրև ուղղափառ հաւատոյ մասն.

Ա. Թէ Հոգին Սուրբ ոչ միայն 'ի Հօրէ, այլև ՅԱրդւոյ կը բղխի.

Բ. Թէ Քաւարան կայ ննջեցեալ հոգւոց համար, ուր արդարոց և մեղաւորաց հոգիները՝ մեռնելէն ետև պիտի քաւուին.

Գ. Թէ մեղքերուն և պատիժներուն ներողութիւն կայ միայն պապէն դրամով գնելու.

Դ. Թէ Պետրոս առաքեալ գլուխ էր բոլոր առաքելոց, և անոնց մէջ յառաջնութիւն ունէր.

Ե. Թէ Հռովմայ պապն է յաջորդ Ս. Պետրոսի. որով և նման նմա՝ գլուխ և միտրեռական տէր է բոլոր եկեղեցեաց Եպիսկոպոսապետաց և Եպիսկոպոսաց.

Զ. Թէ Քրիստոսի եկեղեցւոյ կատարելութիւնը

միապետական է. և այս միապետը՝ Հռոմայ պապն է։

Է. Թէ հարկ է ժողովրդոց հաղորդիլ միայն 'ի Ս. Մարմնոյն Քրիստոսի, և ոչ 'ի Ս. Արեանէն։

Ը. Թէ բոլոր քահանաներն ու սարկաւագները ազատք է որ անկին ըլլան և ամուսնանան։

Թ. Թէ արժան չէ՛ ժողովրդոց Աստուածաշունչ գիրքը կարդալ։

Ժ. Թէ այն քրիստոնեայն որ պապին չհնազանդիր, և չհպատակիր Հռոմայ եկեղեցւոյն, ոչ կարէ փրկուիլ և արքայութեան արժանանալ։

ԺԱ. Թէ արժան չէ՛ աշխարհականներուն հերետիկոսաց գրքերը կարդալ, այսինքն այն ամէն քրիստոնեաներուն, որոնք պապին և Հռոմայ եկեղեցւոյն հպատակ չեն. վասն որոյ և հրաման չկայ ժողովրդոց՝ անոնց յօրինած գրքերը կարդալ։

ԺԲ. Թէ Հռոմայ պապը միմիայն անսխալելի դատաւոր է՝ ամէն հաւատոյ նիւթ եղած վէճերու և վարուց։

Ահա՛ ասոնք եղան Հռոմայ եկեղեցին Քրիստոսի ընդհանրական եկեղեցիէն տարբերող մասերը, զորոնք պապերը աշխարհային փառասիրութեամբ Քրիստոսի հրամանին հակառակ՝ իրենց անձանց վսեմութիւն մը համարելով, հաւատքին մաքրութիւնը պղտորեցին, և միւս եկեղեցեաց հետ ունեցած համաձայնութիւնին կորսնցուցին. որով մեր և Յունաց եկեղեցիէն բաժնուեցաւ, և մինչև ցայսօր ևս նոյն բաժանման մէջ կը մնայ. և այս բաժանմունքը երբէք չվերնար, քանի որ այն մտացածին, օտար ու չարահնար վարդապետութիւնները չվերցընեն պապերը։

Ուստի Ներսէս Շնորհալին և իւր յաջորդը, որ Յունաց հետ կ'ուզէին միանալ, նոյն միութեան վերայօք եղած թղթերն ու գրուածքները յառաջ կը բերէ Հ. Պալճեանը՝ իբր Շնորհալին ոչ թէ Յունաց

հետ միանալ կ'ուզէր , այլ պապին գլխաւորութիւնը ճանչնալ , և այն թղթերն ևս պապին հպատակելու համար գրած է ինքն ու իր յաջորդները . ուստի այս ալ այնքան ճշմարիտ է , որքան Ս . Վրթանէսի Արդիկէի ժողովքէն կարգ ու կանոն խնդրելը , ուր , ինչպէս վերը ըսինք , ամենևին գնացած չէ .

Այց ենթադրենք թէ Շնորհալին և իւր յաջորդները ուղղակի պապին գրեցին , և Հռովմայ պապին հետ միանալ կ'ուզէին . արդ՝ Շնորհալւոյ , Գրիգոր կաթուղիկոսաց , և Կիւռ Անանուէլի ու Միխայէլ Յաւնաց պատրիարգի մէջ այնքան երկար ատեն փոխադարձ բանագնացութեանց պատճառն ի՞նչ էր . ո՞չ ապաքէն այն ամէն օտար ու նորահնար վարդապետութիւնները վերցընել կ'ուզէին , զորոնք Ժ . դարէն ետև՝ հաւատոյ դաւանութեան և եկեղեցական ծիսից մէջ աւելցուցին , հակառակ առաքելական կանոնաց .

Այս արդ՝ նոյն միաբանութիւնը այժմ ևս կ'ուզեմք ընել Հռովմայ եկեղեցւոյն հետ , թէ որ պապը՝ վերոյիշեալ այն ամէն անապարական , և Քրիստոսական հաւատքը տարբերող պահանջմունքը վերցընէ՝ իւր "Ընդհանուր իրաւաբանութեամբը". եթէ չվերցըներ , այլ ի՞նչ միութիւն կ'ուզեն իւր արբանեակները , երբ իրենք Քրիստոսական եկեղեցւոյ միութենէն բաժնուած են .

Թո՛ղ զայն թէ , պապին իշխանութիւնը , որ այժմ Պալճեանը՝ այն լոկ ածականներովը կ'ուզէ հաստատել , զորոնք Հայրապետք կամ մասնաւոր անձինք ոմանք ժամանակ ժամանակ գրած են պապերուն , ո՞ւրու յայտնի չէ , թէ այն ժամանակները՝ Հայոց տերութիւնը բարբարոս ազգերէ նուաճեալ ըլլալով , կը ստիպուէին՝ զազգը պաշտպանելու համար , այնպիսի վերստուութիւններ և այնպիսի քաղաքական պատուանուններ տալ քրիստոնեայ եկեղեցւոյ գլխոյ մը , որ ,

եթէ այն ժամանակի Պարսից դեսպանին ևս, ազգին պաշտպանութիւնը համար՝ անոնց հաւատքին յարմար գրեր գրած և պէս պէս մակադրականներով զարդարած ըլլային մեր նախնիքը, այն գրերն ևս այս օրուան օրս Հ. Պալճեանին նման քաջ թարգմանչի մը ձեռք անցնելով, միթէ անկէ՞ ևս պէտք էր այս հետևութիւն հանել, թէ Հայք այն ժամանակն ալ Պարսից դեսպանը ընդուներ են եղեր. բայց զարմանք չէ՛, որ Հ. Պալճեանի նման ճշմարտախօս բերնէն՝ այս ալ ապաստուէր.

Թէ որ այսպիսի զրպարտութիւնները իրաւացի ըլլար, զորոնք Հ. Պալճեանը՝ միմիայն թղթակցութեամբ, այն երջանիկ Հայրապետաց վերայ կը դնէ, և ազգերնիս երբեմն Հռովմայ հարկատու ըլլալովն՝ եկեղեցինիս ալ կ'ուզէ հպատակ ընել պապին իշխանութիւնը, ապա պէտք և աւելի իրաւացի էր, որ այս օրուան օրս Վրաց եկեղեցին ևս՝ մեր Հայաստանեայց եկեղեցւոյն հպատակ ըլլար, վասն զի անոնք ալ այն ժամանակը մեր թագաւորութեանը հարկատու էին.

Իսկ այն Կաթուղիկոսները, որոնք Շնորհալւոյ դասակարգութենէն ետև յառաջ կը բերէ, և անոնց թղթերը Հայոց ընդհանրական եկեղեցւոյ կողմանէ՝ իբրև Հռովմայ պապը ընդհանուր գլուխ ճանչնալու վկայութիւն կը կոչէ, ամենևին պատասխանւոյ արժանի չէն, վասն զի՝ զանոնք ամէնքն ալ Հայաստանեայց եկեղեցին հրապարակական դատապարտութեամբ հերքած ըլլալով, իբրև նեխեալ անդամ՝ իւր մարմնոյ ամբողջութենէն կտրեր ձգեր է, որոց վրայօք երկար գրելու բաւական տեղ չունիմք պատանօր. ուզողը թող կարդայ նոյն իսկ Զամչեանին ժողոված պատմութեանը մէջ, որոց գործքերը այնքան հրապարակական են ազգային պատմագրութեց մէջ, մինչև անգամ Հ. Զամչեանն ևս ստիպուեր է ճշմարտութիւնը գրել. ապա թէ ոչ՝ դժուարին չէր իրեն զանոնք ևս արդարացընել, որպէս զի Հ. Պալճեանը աւելի ընդարձակէր այսօր իւր ստութեան յաւելուածը

Ուստի պատճառ համար բաւական է որ բոլոր Հայոց ազգը գիտէ և պատմութիւններէն հաւատի կը ճանչնայ, թէ այնպիսի մարդիկ հերքուած են իրենց ազգային միութենէն և եկեղեցւոյ ծոցէն՝ Ռուբինեանց թագաւորութեան ժամանակէն. և Կիլիկիոյ մէջ՝ եղած ազգիս հոգևոր իշխանութիւնը մարմնաւորէն կախումն ունենալով, թագաւորական իշխանութեանը յակամայից կը հետևէր, որ ինչպէս Հ. Պալճեանն ևս կը պարծի. "Ռուբինեան թագաւորները . . . . իրենց արքունական թագը Հռոմայ քահանայապետաց պարտական էին" ըսելով. (Ընթռ. Ի. Պետրոսի, երես 241). Այսր համար ալ բոլոր Հայաստան իւր հաղորդակցութիւնը կտրած էր Կիլիկիոյ հոգևոր իշխանութենէն և թագաւորէն, և զանոնք բոլորն ալ ստունացեալ կը ճանչնար մեր եկեղեցին, ինչպէս նաև Արևելեան չորս Ընթռնները Հայոց, որոց հաճութեամբը կը նստէր Կաթուղիկոսը։

Այս ամէն բաներս ցոյց կու տան Օ. աքարիա Սպասալարի ժամանակին եղած անցքերը, երբ Հայոց եկեղեցւոյ Արևելեան միութիւը դատապարտեց այն նորու օտար ծէսերը՝ զորոնք Յովհաննէս և Դաւիթ Կաթուղիկոսները Սպասալարին խրկեցին, բայց ոչքան վրդովմունքներ եղան ու ջնդունուեցան։ Այլ եթէ այն ժամանակի մարդոց վկայութեանցը ապաւինած է Հ. Պալճեանը, և զանոնք կ'ուզէ յառաջ բերել իբր ընդհանուր ազգին կողմանէ վկայութիւնք, 'ի հաստատութիւն գլխաւորութեան պապերուն, ինչպէս իւր Յաւելուածոյն մէջ գրած է, կրնայ ցոյց տալ արդեօք, թէ նոյն անձինքը Ռուբինեանց թագաւորութիւնը վերջանալէն ետքը՝ կացին, մնացին այն խոստովանութեան՝ այսինքն լատինութեան մէջ, որ ժամանակ այնպիսի թղթեր առ երկիւղի գրեցին. Եթէ մնացին, յայտնի է մեզ Ընդաւարձեցւոյ գործքերէն, զոր բոլոր ազգը՝ ժողովքով իւր գրուածոցը

հեւոտ 'ի միասին զինքն ալ դատապարտելով հերքեցին, և նոր Կաթուղիկոս նստեցուցին անոր տեղը։

Եւ որովհետև ասոր գործքը ազգիս քաջ յայտնի է, Հ. Պալճեանն ևս անոր վկայութիւնը կամ թուղթը յառաջ բերած տեղը՝ Ընաւարզեցի մականունը թագուցած է. (Ընթռ Ս. Պետրոսի, երես 251). որ ըլլայ թէ անոր Զեռնարկ հաւատոյ ըսուած գիրքն ալ ընդունելութիւն գտնէ ազգէն, երբ ջրոս հարիւր տարի յառաջ դատապարտուած է ժողովքով. քանզի իւր այն օտար և չարահնար վարդապետութիւնը մէջ, 'ի լատինութիւն դարձընել կ'ուզէր զՀայոց եկեղեցին։ Եւ զանիկա "Է. Գրիգոր" կոչելով Պալճեանը, հատարակութիւնը խաբել և Կաթուղիկոսաց շարքը համրել կ'ուզէ, երբ նոյն Ընաւարզեցի Գրիգորը՝ օրինաւոր Կաթուղիկոսաց դասէն հանուած է. (Տե՛ս 'ի ցանկս Համէ. պատմ. հատոր Գ.)։

Ուստի՝ այս ալ ըսենք որ, Հ. Պալճեանին ըսածին պէս, եթէ "Նոյն (Խոյ) ժողովն իրեն սեպհականեց ու հաստատեց Գրիգոր Է. (Ընաւարզեցի) կաթուղիկոսին թուղթը, և Հռոմէական աթոռին գլխաւորութեանը համար ստորագրեց առ վճռոյս. 'Հնազանդիլ պարտ է սուրբ և առաքելական եկեղեցւոյն Հռոմայ.... քանզի որպէս մարմին հնազանդի գլխոյն, նոյնպէս ընդհանուր եկեղեցի՝ որ է մարմին Քրիստոսի, հնազանդիլ պարտի նմա՝ որ գլուխ 'ի Քրիստոսէ հաստատեցաւ եկեղեցւոյ'"։ Այլ և Ընտանյի ժողովքը գումարուելով՝ Հաղբատացիներուն, Սանահնեցիներուն և Հորոյգետացիներուն ուսումը ունայն և անոտի և առասպելաբանութիւն համարեց. (Ընթռ Ս. Պետրոսի, երես 251, 252), ապա ի՞նչ է որ կը պատմէ Պալճեանի ստութեան վկայն՝ Հ. Համէանը, որ միւս գլխոց մէջ Լուսաւորչի Հռոմ գնալը կը հաստատէր (որ Հ. Պալճեանին մեծ փաստն է) և ասա կը ջրէ անոր մէկ հատիկ

ապաւէնը 'ի մասին պապին գլխաւորութեան , այս-
ինքն Ն՝նաւարզեցւոյ թուղթը , (որուն մէջ ինքը նը-
րահնար կանոններ դրած էր) , ու կ'ըսէ . "Ն՝յս ա-
մէն կանոնաց և ո՛չ մէկը ջնդունուեցաւ , ո՛չ 'ի Կի-
լիկիա և ո՛չ յՆ՝րևելս . ինքն միայն այն կանոններէն
ո՛րը որ կրնար , ծածուկ կը կատարէր"։ Կ'երևի որ այս
երկու հարք մէկմէկու ատուԹիւններուն ալ հաւատք
չեն ընծայեր ։ Հայոց ազգին մէջէն այսպիսի հոգւոյ
տէր մարդիկ բաժնուելէն ետև , զարմանք չէ՛ որ
ո՛չ միայն 'ի լատինուԹիւն դարձընեն զՀայոց ազգը ,
այլ մինչև անգամ հաւատքէ՛ ևս հանելու երկիւղ
կայ . որովհետև իրենք ո՛չ հաւատք և ո՛չ ալ մէկ-
մէկու հաւատարմուԹիւն ունին ։ Ու ո՞վ է որ չտես-
ներ , Թէ Հաղբատացի Յուսէորդւոյ հայրենիքը մի-
այն մնացած է մեզ մօտ . իսկ անոր "Պորտոյ և որդ-
վոյնի ծառայելը", ընդհանրապէս ՄխիԹարեան պա-
պականաց ժառանգուԹիւն եղած է հիմա , որք ըզ-
պորտս պարարելով՝ դրանց 'ի դուրս ժողովրդոց կը
պտըտին , և եԹէ գտանիցեն զոք , առնեն ընդ իւ-
րեանս զորդիս դեհենի ։

Ն՝յժմ մեք ճշմարիտն ըսեմք . Թէ որ Ն՝տանայի ժո-
ղովքը Հաղբատացւոց դէմ ելլալով , Ն՝նաւարզեցւոյ
Թուղթն ու կանոնները "Գտան արդար և ճշմարիտ
և ուղիղ աւանդուԹիւն ժողովոց հարցն սրբոց . . .
և տեսին զի ըստ հետի շաւղաց Ս . Գրիգորի մերոյ
Լուսաւորչին և առաքելական կանոնացն էր", (Ն՝Թոռ
Ս . Պետրոսի , երես 252) , ապա պատճառն ի՞նչ էր ,
որ Լևոն Թագաւորը՝ կաԹուղիկոս ընտրել կ'ուզէր
զՆ՝նաւարզեցին , և բոլոր ժողովքը Թագաւորին հը-
րամանին դէմ կեցան և ջնդունեցին զնա . ո՞չ ապա-
քէն ընԹերցեալ էին զգիր վեհասու նորա ։

Ու երբ Ն՝նաւարզեցի Գրիգորը իւր կողմը շահե-
լով զԹագաւորը՝ բռնի կաԹուղիկոս եղաւ , միԹէ
կայի՞ն Հաղբատացիներ , Հորոյ գետացիներ ու Ա-

նահնեցիներ Սիւնեաց ժողովքին մէջ, որ զայդ Գրիգորը և զիւր թուղթն ու նաև իւր կանոնները՝ Հայոց եկեղեցիէն չընդունուած ըլլալուն համար՝ գումարեցաւ 1294 թուականին. ուր, ինչպէս յայտնի է, ներկայ էին՝ Հայաստանեայց Արևելեան եկեղեցւոյ բոլոր Աթոռոց Արքեպիսկոպոսները, գլխաւոր իշխանները և ընդհանրապէս Հայաստանի ժողովուրդը, Սիւնեաց աթոռոյ Արքեպիսկոպոսը, Ստեփէս աթոռոյ Արքեպիսկոպոսը, Այրարատեան աթոռոյ արքեպիսկոպոսը, և այլն, և այլն, և այլն. Սիւնեաց երկրէն՝ Զլիկում և Խոտարիտ իշխանները և ուրիշ անթիւ և անհամար իշխանք և ժողովուրդք, որոց բոլորը մի կտեղ ստորագրութեամբք գրեցին Նաւարզեցւոյն, ըսելով. "Կամ թողուլ զյեղաշրջումն կրօնից և աւանդութեանց, և աւելի ինչ կամ պակաս մի՛ մուծանել յեկեղեցի մեր, զոր ո՛չ ունիմք 'ի Հարցն, և կամ 'ի քաց կալ 'ի Հայաստանեայցս աշխարհէն"։

Նաց յայտնէ, Սոփանոսի Օրբէլեանց Սիւնեաց Մեծապօլսի Զեռագրի Հաւաքոյ գիրքը, Նաւարզեցւոյն վճռաբարութեանցը դէմ, տպագրութիւն անմահացած՝ դեռ 'ի վերայ տանեաց կը քարոզէ նոյն ժամանակի մեր եկեղեցւոյ վիճակը և նոյն իսկ Նաւարզեցւոյն դատապարտութեան դէպքերը. ըստ որում գրքին հեղինակը ժողովքին նախագահ անդամներէն ըլլալով, զիշեալ Նաւարզեցին Հայաստանեայց եկեղեցիէն 'ի քաց կարելէն ետև, յատուկ գիրք ևս գրեց անոր եկեղեցւոյ հերձուածողը դէմ. որպէս զի ժամանակ անցնելով, դէպքերն ևս անոր հնութեան մէջ չծածկուին, և ազգը՝ իւր հաւատոյ և իւր եկեղեցւոյ թշնամին ճանչնայ միշտ։ Հիմա այսպիսի վկայեալ մարդոյ հերձուած ու հերքուած թղթերը, Հայոց եկեղեցւոյ կողմանէ Հռոմայ պապին գլխաւորութեանը համար՝ վկայութիւն կրնան ըլլալ

արդեօք , զոր Հ. Պալճեանը յառաջ կը բերէ իւր Յաւելուածոյն մէջ, ճշմարտութիւնը՝ թող ընթերցողները քննեն , և այս օրուան օրս անով պարծենցողն ալ՝ թող ամաչէ ։

Եւ որ այսպիսի մարդոյ մը հերքուած գրուածքը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ կողմանէ վիայութիւն կրնայ ըլլալ՝ , օրուն ապաւիներ է Հ. Պալճեանը , մեք ևս իրեն պապին գլխաւորութիւնը այնպէս կ'ընդունիմք , ինչպէս որ Հայաստանեայց եկեղեցին ընդուներ է զԼնաւարզեցին . և կամ՝ այս օրուան օրս իւր Ալեռ- Ս. Պետրոսի ըսուած գիրքը եթէ կ'ընդունուի մեր Հայոց ազգէն , ինքն ևս միամիտ թող ըլլայ , թէ այն ժամանակը Հայոց եկեղեցւոյն ընդունելի եղած են այն մարդիկը , զորոնք Լնաւարզեցիէն ետքը կը շարէ իւր Յաւելուածոյն մէջ։

Լնաւարզեցիէն ետքը Հ. Պալճեանին՝ արդարև մեք ևս ձայնակից կ'ըլլամք՝ ըսելով. "Լիկան , համան այն դժբաղդ և աղետալից տարիները , որոնց մէջ արդէն" Չէ թէ հոգեվարութեան մէջ ինկած էր թագաւորութիւնը , այլև վերջին շունչը ևս 'ի վաղուց պարզած էր . և ազգին միութիւնը քայքայուած՝ իւրաքանչիւր կտորը մէկ աշխարհ տարագիր եղած էր . որը Սարմատիա , որը Լազան , որը Էսպոլիս , ամենք Էհաստան , և այլք մինչև Սուլահ-Պուզտանու երկիրները ։

Եւ ահա՛ այս ժամանակներս են , որ ազգիս խեղճ ու անիշխան հովիւները՝ երբ տեսան իրենց անտերունչ հօտը թափառական լեռնէ 'ի լեռ և յերկրէ յերկիր ինկած անհովիւ՝ իրենց մակաղետղ կը փընտռէին , և Հռովմայ ծոցէն ելած գիշատիչ գայլերը ամէն տեղ վերայ կը հասնէին , կը յափշտակէին , կը ցրուէին , շատերը կը պատառէին , և շատերն ալ իրենց վհմակը (սիւրիւ) կը դարձընէին , այն ատենը մեր եկեղեցւոյ հովիւներն ալ իրենց ոչխարաց ետևէն ինկած տարագիր կը շրջէին , և անոնց փրկութեանը

համար՝ ամէն հնարքնեը և ամէն աղաչանքները 'ի գործ կը դնէին։

Մինչ Մխիթար կաթուղիկոսէն սկսեալ մինչև Նա-հապետ և Յակոբ կաթուղիկոսաց անուամբը՝ իրեն պէս մէկու մը ստուերք գրուած թղթերը կը բերէ 'ի վկայութիւն, զանոնք գրելու անհրաժեշտ պատճառներն ևս ինչու չէ գրած։ Այն պատճառները՝ որովհետև Հռովմայ եկեղեցւոյն պարծանք կը բերէ, անոր համար ինքը չվստահանալով, մեզի թողուցած է, որ գրեմք։

Հայոց թագաւորութիւնը վերջին շունչը պարզելէն ետև, երբ ազգերնիս ալ վերջին հոգեվարութեան մէջն էր ու ամէն երկիր թափառական ինկած, Լեհաստանի կողմը եղածները՝ Լատին քարոզիչներէն (միսիոնարներէն) անթիւ հալածանքներ և աստուածընդդէմ բռնութիւններ կրեցին։ Եկեղեցիները կը գոցէին և խանութին կը փակէին, որ միայն Հռովմայ պապը դաւանին։ և Աստուծոյ տունէն կը զրկէին, որ միայն Պետրոսի եկեղեցին երթան։ Ասոնք տեսնելով և լսելով այն ժամանակի Հայրապետները, միայն ազգը այս բարբարոսութենէն ազատելու համար, պարտաւորած էին պապին անգթութիւնը դուռը գոցէ զարնելու։ միայն՝ զի ազգը բարբարոս քարոզչաց ձեռքէն ազատութիւն գտնէ։

Այս թղթերը Կաթուղիկոսաց անուամբը կեղծողները՝ Յունանեաններ և Լեհացիներ ըլլալով, թէ որ թղթեր ևս գրուեր են՝ ժողովրդոց ազատութիւն տրուելու համար, հազար ու մէկ ստութեամբ լցուած են յիշեալ Յունանեաններէն ու Լեհացիներէն, որոնք ամենևին չեն յիշեր նոյն ժամանակի դէպքերը որոց համար այն թղթերը գրուած են։ և որոց մէջ, ինչպէս ըսինք, մեր տարագրեալ ազգը պապին քարոզիչներուն ձեռքէն այն անօրէնութեան ու դառնութեան բաժակը կ'ըմպէր, որ ոչ քրիստոնէի կը

վայելէր և ոչ բարբարոսի մը. ուստի բաւական է մեզ գիտնալ, թէ այն թղթերը յառաջ բերող մարդիկը՝ Հայոց եկեղեցիէն հեռուեալ և հերքեալ՝ մեր ժամանակի երիցս հաւատափոխներէն ալ գէշ են.

Բոլոր այս մեր ըսածները՝ անհերքելի ճշմարտութիւններ և մեր այն ժամանակի պատմագրաց մատեանները կազմող նիւթերն են, զոր ոչ կրնան ուրանալ և ոչ ալ կրնան ստել պապական արբանեակները։ Եւ բոլոր այս վկայութիւնները, զորոնք ներկայ գործոյս մէջ՝ անոնց ամէն ստութեանց դէմ յառաջ բերինք, եթէ ստելու համարձակին, ըսել է որ, ստուգապատում պատմագիրները պիտի ստեն. և պատմագիրները ստողը՝ նոյն իսկ Ս. Եւ ետարանին ճշմարտութեանն ևս կրնայ ծուռ մեկնութիւն տալ, և յայնժամ մեր պատասխանը վերջացած պիտի համարուի։

Եթէ պապականաց բոլոր այս պահանջմանցը մէջ, ինչպէս տեսանք, ճշմարտութիւն չկայ, ուրեմն բան մը չեն կրնար ընել 'ի պարծանս Հռովմայ գահին. և աւելի վնաս կը բերեն՝ քան թէ օգուտ. վասն զի՝ Ինքն Ճշմարտութիւնն Քրիստոս ըսաւ, "Առանց իմ ոչ ինչ կարէք առնել"։

Առանց այս ճշմարտութեան՝ Պետրոս "Օ, ամենայն գիշերն աշխատ եղեալ, կալաւ և ոչ ինչ". ապա առանց ճշմարտութեան և առանց Քրիստոսի՝ Պետրոսի յաջորդները Քրիստոսի փոխանորդութիւն զիարդ կ'ուզեն զմարդիկ որսալ, երբ անոնց ևս մի և նոյն պատուէրը կարդաց. "Առանց իմ ոչ ինչ կարէք առնել"։

Մեր Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցին այս ճշմարտութեան ճանապարհէն երբէք չխոտորեցաւ և խոտորելիք ալ չունի. որպէս զի՝ և "Հոգին Ճշմարտութեան ընդ մեզ եղիցի, և ընդ մեզ բնակեսցի 'ի յաւիտեան"։

Այսուհետև՝ պապական արքանեակները՝ եթէ կ'ուզեն, Հռովմայ աթոռը՝ բոլոր Քրիստոսական եկեղեցեաց գլուխ դնեն", և Պետրոսին յաջորդող պապերն՝ ևս՝ բոլոր եկեղեցեաց Հռովմապետներու գլուխ թող ճանչնան, ինչպէս որ ըսինք՝ առանց ճշմարտութեան և ընդդէմ ճշմարտութեան. բայց մեք ըստ այսմ մասին ևս՝ "Աստուծոյ ինկածը՝ Աստուծոյ ոտը պալով", կը կնքեմք խօսքերնիս.

ՎԵՐՋ

ՑԱՆԿ

Երես

ՅԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼ. Ա. Հայոց Եկեղեցւոյ Քրիստոնէական անդրանկութիւնը մասնաւոր եկեղեցեաց մէջ 1

ԳԼ. Բ. Հայոց եկեղեցին մասն է ընդհանուր եկեղեցւոյն Քրիստոսի. և այս ընդհանրութեանը մէջ իրեն գլուխ կը ճանչնայ զՔրիստոս. իսկ իրեն մասնաւորութեանը մէջ՝ զԹադէոս առաքեալն ու անոր յաջորդները մինչև ցներկայ ամենայն Հայոց Կաթուղիկոսն Ս. Էջմիածնի. և ըստ այսմ զՊետրոս առաքեալը՝ հաւատարիչման միւս առաքելոց, որք ունին զմասնաւոր և հաւասար գլխաւորութիւն եկեղեցւոյ իւրաքանչիւր աղգաց 12

ԳԼ. Գ. Հայոց եկեղեցւոյ գէմ պապականաց զբպարտութիւնը, և անոր առաքելական եկեղեցւոյ շարունակ յաջորդութիւնը մինչև Գրիգոր Լուսաւորիչ. ուր և Պետրոս առաքելոյ գլխաւորութեան և Հռոմի դնալոյ վերայ խօսք 25

ԳԼ. Դ. Հայոց եկեղեցին կը ճանչնայ զՍ. Գրիգոր Լուսաւորիչ՝ իրեն ընդհանրական գլուխ, փոխանորդ Քրիստոսի, յաջորդ Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոցն, անկախ 'ի բանս հաւատոյ և հաւասարիչման ուղղափառ եկեղեցիներու գլխաւորաց 55

ԳԼ. Ե. Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետաց և Վարդապետաց անուամբը՝ սուտ և շինծու թղթերուն հերքումը, անոնցմէ շատերը՝ պապականներէն գրուելն ու անոնց գրուելուն պատճառը 78